



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

**ՆԱՅԿԱԿԱՆ ԿՈՐՊՈՒՍՆ
ԸՆԴԴԵՄ ԹՈՒՐԲԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ**

(1917 թ. նոյեմբեր - 1918 թ. հուլիս)

**ԳԵՆԵՐԱԼ
Թ. ՆԱԶԱՐԲԵԿՅԱՆԻ
ՀՈՒՇԵՐԸ**

Երևան 1994

«Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ» հրատարակչություն

ԳՄԴ 66.3(2Հ)52
Հ 253

Հրատարակում է
ՀԱՅ ՑԵՂԱՓՈՒՆԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

«Դէպի Երկիր» մատենաշար թիւ 17

Հ 253

Հախական կորպուսան ընդդէմ թուրքական զորքերի
(Գեներալ Թ. Նազարբեկյանի հուշերը), Եր.:
«Միքաէլ Վարանդեան», 1994. - 120 էջ:

Ռուսերենից թարգմանութիւնը՝
ՎԱՐՈՒԺԱՆ ՓԱՄԲՈՒՆՉՅԱՆԻ

Հ $\frac{0503020913}{784(01)-94}$ 94

ԳՄԴ 66.3(2Հ)52



ISBN 5-8079-0977-1

© «Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ» հրատարակչություն

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

«Բանքերը Հալաստանի արխիվներին» հանդեսի 1992 թ. երրորդ համարի մեջ ուսանողներն լուրջ տպագրվել են Թովմաս Հովհաննեսի Նազարբեկյանի մինչ այժմ որեւէ տեղ չույժ չտեսած հիշողութիւնները:

Գնենք Թովմաս Հովհաննեսի Նազարբեկյանի մասին մինչև վերջերս մեր ժողովուրդը, մեղմ ասած, գրեթե տեղակ չէր: Մինչդեռ Հայկական կոլեկտիվն ու առկա կոլեկտիվի հրամանատար զորավար Նազարբեկյանը (որը նաև Հայ Հեղափոխական Դաշնակցութեան անմիջական ղեկավարութեամբ եւ ամենագործուն օժանդակութեամբ կոլեկտիվի խակական կազմակերպիչն էր) որոշիչ դեր խաղացին Հայոց նոր պետականութեան՝ Հալաստանի Հանրապետութեան ստեղծման գործում: Երգնկայից ու Վանից սկսած, Նազարբեկյանի կոլեկտիվի զորամասերը, մինչև Սարդարապատի, Բաշ-Աբարանի եւ Ղարաքիլիսայի հաղթական կռիւները իրենց արտադրութեամբ Հալաստանի խոնարհութեամբ ու ջարերը, կոնցին Հալաստանի Հանրապետութեան խարխիւները: Հիրավի Թովմաս Նազարբեկյանի անունն արժանի է դասվելու Արամների, Դրոնների, Ռուբենների, Կարճիկյանների ու Քաջազնունիների անունների շարքը, մարտիկ, ուժեր Հայկական Գողգոթան իրենց աչքերով տեսնելուց հետո հայ ժողովրդի բզկտված ու կոտորակված զանգվածներին կարողացան առաջնորդել դեպի պետական առաջին միջնաբերդի Հալաստանի Հանրապետութեան վեմերի կերտումը: Եթե վրացիներն իրենց անկախութեամբ ստացան գերմանաթուրքական հովանավորութեամբ տակ մտնելով, եթե աղբիւր ջանակներն իրենց պետականութեամբ ստացան որպես «փեշքեշ» թուրքական հաղթական բանակների Գանձակն ու Բաքուն նվաճելու արդյունքում, էնվերների ու խալիբների անմիջական օրհնութեամբ, ապա հայ ժողովրդի համար Հալաստանի Հանրապետութեան կերտումը միլիոնավոր նահատակների արյուն, տառապանք, սեփական բախտը փրկելու գերբնական ճիշդ ու ջանք արժեքով: Այո, մենք ենք Այրիկովկասի միակ ժողովուրդը, որ մեր ձեռքերով ենք կռել ու կռիւնքներով եւ մեր հայրենիքի միայն մեկ տասներորդն (առաջմ) ընդգրկող առաջ երկիրը: Եվ գնենք Թովմաս Նազարբեկյանը առաջ արտադրող

ճանապարհի մեծ մասնակիցներից ու վկաններից է: Ուստի եւ միմիայն երախտիքի են արժանի Արխիվային վարչութիւն մասնագետ, գորավար Նազարբեկյանի հուշերի կազմող պր-ն Հ.Մ.Շաթիրյանն ու դրանք խմբագրած, ՀՀ ԳԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Գ.Ա.Ավետիսյանը մեր հանրութիւնը ներկայացնելով գորավարի հուշերը:

Միաժամանակ համոզված լինելով, որ Թովմաս Նազարբեկյանի հուշերն արժանի են ողջ հայ ժողովրդի ուշադրութիւնը եւ միայն գիտական ակադեմիական արժեք չունեն, ձեռնամուխ եղանք դրանք հայերեն լեզվով թարգմանելուն, անհրաժեշտ համարելով թարգմանել նաեւ կազմողների ամփոփ ներածութիւնը: Նկատի ունենալով, որ այս աշխատութիւնը պետք է ծառայի պատմաբաններին իբրեւ աղբյուր, փորձել ենք առավելապես հարազատ մնալ բնագրին, որի հետեւանքով կարող են տեղ գտած լինել առանձին ոճական եւ լեզվական անհարթութիւններ: Ուստի սպասում ենք ընթերցողների եւ հատկապես մասնագետ ընթերցողների արձագանքներին, հուսալով ապագայում առանձին գրքով հրատարակելու վերածնված Հայոց բանակի առաջին Սպարապետի ամբողջական հուշերը:

ԹԱՐԳՄԱՆԻՉ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կովկասյան ռազմաճակատում ռուսական զորքերը հայկական կամավորական ջոկատների մասնակցությամբ մինչեւ 1917 թվականը հասել էին նշանակալից հաջողությունների (Սարիղամիշի, Ալաշկերտի եւ այլ գործողություններ, Էրզրումի, Տրապիզոնի, Բիթլիսի առում), որոնք հանգեցրել էին Թուրքական Հայաստանի մեծ մասի գրավմանը եւ հայերին թուրքական բազմադարյան լծից ազատագրվելու հույսեր ներշնչել:

Ռուսաստանում Փետրվարյան հեղափոխությունից հետո ժամանակավոր կառավարությունը լի էր պատերազմը հաղթական ավարտի հասցնելու վճռականությամբ: Կովկասյան ռազմական օկրուգի փոխարեն ստեղծվեց Կովկասյան ճակատը, որն իր գործունեությունը պետք է համաձայնեցներ Կառավարական նոր մարմնի՝ Օգակումի հետ: Սակայն, երկրում խորացավ տնտեսական եւ քաղաքական ճգնաժամը, զորքերի, այդ թվում՝ Կովկասյան բանակի մեջ սկսեցին թափանցել հեղափոխական տրամադրություններ, որոնք հանգեցրին դրանց լիակատար փայթումը: Թիֆլիսում 1917թ. ապրիլին տեղի ունեցած Զինվորական պատգամավորների խորհուրդների Անդրկովկասյան երկրամասային համագումարում կովկասյան մեծամասնականները հանդես եկան ընդդեմ Ժամանակավոր կառավարության դիրքորոշման, ընդդեմ պատերազմի շարունակման:

«Ռուսական հեղափոխությունը բարոյական փայլուն մտքեց զինվորների սրտերը: Այն գիտակցաբար ու կանխամտածված խաթարեց պետի հեղինակությունը, սակայն չկարողացավ բարձրացնել զինվորի նախաձեռնության եւ ինքնագործ արիության ոգին: Այն այլասերեց նրան ազատության գայթակղիչ պատրանքներով եւ օժտեց հազարավոր իրավունքներով՝ նրան թողնելով կատարելու կամ չկատարելու իր պարտականությունները»: (Ռուս. գորավարի նշումներից, ռուս., ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 121, ցուցակ 2, գործ 31, թերթ 24):

Զորքերի փայլաման գործընթացը էլ ավելի խորացավ ձկոտմաբերյան հեղաշրջումից հետո: Ռուսական զորքերն սկսեցին տարերայնորեն լքել դիրքերը Կովկասյան ռազմաճակատում եւ հեռանալ Ռուսաստան, կազմալուծվում էին կորպուսները, գնդերը, մեծամասնականների ազդեցու թյան տակ զինվորներն սկսեցին հրաժարվել հրամանատարների հրամանները կատարելուց:

«Ռազմաճակատից բանակի հեռանալով որոշվում էր ոչ միայն Թուրքահայաստանի, այլև ամբողջ Անդրկովկասի ճակատագիրը... Զրոյի էին հավասարվում անօրինակ հերոսությամբ, խիզախությամբ եւ անհամար աղետներով սրբագործված բոլոր նվաճումները... Ծառացավ թուրքերի դեմ հայերի մեամարտության ահարկու հարցը, քանի որ Անդրկովկասի վրացիների եւ թաթարների վրա հույսը քիչ էր, որն էլ հետագայում հաստատվեց: Վրացական զինված ուժերը կենտրոնացված էին Բաթումում եւ նրա շրջակայքում, մուսուլմանական ուժերի մեջ կազմակերպ ուժերը սակավաթիվ էին, սակայն դրանց շուրջ խնկվեցին զինված մարդկանց հսկայական հրոսակախմբեր, որոնք ոչ միայն չէին մեկնում ռազմաճակատ, այլև ընկնելով բանակի թիկունք ստեղծում էին նոր ռազմաճակատ, որտեղ ձեռք-ձեռքի տված գործում էին հարձակվող թուրքերի հետ միասին: Այդպիսով, պատերազմի ողջ ծանրությունը հսկայական ռազմաճակատում իրենց վրա վերցրին միայն հայերը (Առաջին համաշխարհային պատերազմին հայերի մասնակցության մասին ակնարկներից, ռուս., ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 121, ցուցակ 1, գործ 15, ք. 8, : Սեւագրություն):

Բանակի ֆայնայման եւ թուրքական հարձակման սպառնալիքի նման պայմաններում Կովկասյան բանակի զինվորական հրամանատարությունը, առավել կայուն համարելով հայկական զորամասերը, սկսեց պնդել հայկական ազգային ռազմական կազմավորումների ծավալման վրա:

«Նկատի ունենալով, որ հայկական զուամրտակները մինչ այժմ Կովկասյան ռազմաճակատում գործող զորամասերի մեջ լավագույն զորամասերն են, իրենցից ներկայացնելով հրաշալի մարտական հումք» (հՄՀՄՎ ԿՊՌՊԱ, ֆ. 2003, ցուցակ 2, գործ 338, թերթ 51), Կովկասյան ռազմաճակատի զբաղվող հրամանատար գեներալ Լեբեդինսկին 1917թ. սեպտեմբերին թույլտվություն է խնդրում Գերագույն հրամանատարությունից կազմավորելու հայկական երկրորդ հրաձգային բրիգադը, նույնպես այդ թույլտվությունն ստացվեց եւ հայկական երկու հրաձգային բրիգադները միավորվեցին Հայկական հրաձգային (հետագայում՝ առանձին) կորպուսի մեջ:

Կորպուսի հրամանատար նշանակվեց անվանի գորապետ, ցարական բանակի կադրային սպա Թովմաս Հովհաննեսի Նազարբեկյանը: Ստանալով ռազմական բարձրագույն կրթություն, նա զինվորական ծառայությունն սկսել է որպես էրիվանյան գնդի փոխ-տեղակալ, մասնակցել է 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմին, որն ավարտել է որպես շտաբ-կապիտան: Գնդապետի կոչում ստացել է 1901թ.:

Ռուս-ճապոնական պատերազմի սկզբից, 1904թ. սեպտեմբերից, մասնակցել է պատերազմին մինչև նրա ավարտը՝ գնդապետի աստիճանով: 1907 թ. պաշտոնաթող է եղել որպես գեներալ-մայոր: Թուրքիայի կողմից 1914թ. Ռուսաստանին պատերազմ հայտարարելուց հետո շարք է վերադարձել եւ 1914 թ. հոկտեմբերից մասնակցել ռազմական գործողությունների,

սկզբում դիվիզիայի հրամանատարի, բրիգադի պետի, ապա Կովկասյան 2-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարի աստիճանով: Մասնակցություն ունեցավ եւ աչքի ընկավ ռուսական զորքերի բազմաթիվ փառավոր հաղթանակներում:

1917թ. նոյեմբերին նշանակվել է նորաստեղծ հայկական բանակային կորպուսի (կազմացրվել է 1918թ. սեպտեմբերի 5-ին) հրամանատար:

1919թ. մարտի 25-ից նշանակվել է Հայաստանի Հանրապետության Ռազմական խորհրդի նախագահ եւ զորքերի հրամանատար: 1919թ. հուլիսին ստացել է գեներալ-լեյտենանտի կոչում:

1921 թվականի հունվարին խորհրդային իշխանության օրոք պատմվել է, ախտով Ռյազան, այնուհետեւ ներման հետեւանքով նույն տարում ազատվել է եւ ապրել Թիֆլիսում մինչև կյանքի վերջը՝ 1931թ.:

Փաստաթղթերում գորավար Նազարբեկյանը բնութագրվում է որպես «Դիմանի մեծավաստակ հերոս, հանդարտաբարո քաջ եւ հավասարակշռված, զինվորների սիրելին»:

Նազարբեկյանին կորպուսի հրամանատար նշանակելու առթիվ Ելիզավետպոլի հայ մարտիկների միության կողմից տրված հեռագրում ասվում է. «Հպարտությամբ եւ հիացմունքով ենք ողջունում մարտական գեներալ Նազարբեկյանի՝ հայկական կորպուսի հրամանատար ընտրվելը: Խորապես հավատում ենք, որ փորձված մարտիկի փորձառու ղեկավարությամբ հայկական գնդերը կկարողանան պաշտպանել հեղափոխության մեծ իդեալները եւ հայ ժողովրդի դարավոր իդեալը (ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 121, ցուցակ 2, գործ 106, թերթ 2):

Հայկական կորպուսի կազմավորմանը եռանդուն կերպով օժանդակում էր 1917թ. հոկտեմբերին ստեղծված Հայոց ազգային խորհուրդը, որին կից գործում էր ռազմական բաժանմունք: Խորհուրդն անցկացնում էր կամավորների, հայ սպաների գորահավաք, գրադվում նրանց հանդերձավորման, մատակարարման հարցերով, զորամասերում իր կոմիսարների միջոցով տանում ռազմահայրենասիրական աշխատանք:

Սակայն ինչպես խոստովանում էր Թ. Հ. Նազարբեկյանը իր գեկույցներից մեկում «չնայած այն բանին, որ կազմավորման գործը ձեռնարկված էր լիակատար եռանդով ու ոգետրությամբ, հայ ժողովրդի ընդհանուր համակրանքի ու բոլոր ազգային հասարակական եւ ռազմական կազմակերպությունների ամենագործուն մասնակցության պայմաններում, ռուսական բանակը կործանող հիվանդությունը (դասալիությունը, հրամաններ չկատարելը եւ այլն) խիստ անդրադարձավ հայերի վրա (ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 121, ցուցակ 2, գործ 92, թերթ 6):

Անդրկովկասյան կառավարության մեջ այդ ժամանակ խորանում էր Կովկասի ժողովուրդների ազգային շահերի տարբերությամբ պայմանավորված պառակտումը:

«Այն ժամանակ, երբ հայերը, հանգամանքների բնական բերումով, ըստիպված էին միայնակ իրենց ուսերին վերցնելու թուրքական ճնշման ծանր բեռը, աղբյուրանցիներն, ընդհակառակը, թուրքական մոտեցող տիրապետության մեջ տեսնում էին իսլամիզմի մեծ ակնկալիքների վերականգնումը, իրենց ֆաղափական շահը, իսկ վրացիները, թանկ գնահատելով պատերազմ չտեսած իրենց երկրամասի խաղաղությունն ու ամբողջականությունը, չէին ցանկանում շարունակել պայքարը (նույն տեղում, գործ 38, թերթ 34):

Կային նաև այլ դժվարություններ՝ բազմամասնակ գաղթականների առկայություն, ռազմաճակատի հրամանատարության կողմից գործերի անբավարար դեկավարում, զենքի, պարենի մատակարարման անբավարարություն, փոխադրամիջոցների անկանոնություն եւ այլն:

Այդ ամենը հանգեցրեց նրան, որ արդեն մինչեւ 1918թ. հունվարը կազմավորված հայկական կորպուսի գործառնները չկարողացան պահել Կովկասյան ռազմաճակատի հսկայական ճակատամասը եւ մարտեր մղելով, մեկը մյուսի հետեւից թուրքերին հանձնեցին Երզնկան (Էրզնկանը), Էրզրումը, Սարիղամիշը եւ Կարսը, նահանջելով մինչեւ 1878թ. Թուրքիայի հետ ունեցած սահմանը:

Թուրքերը, սակայն չբավարարվելով դրանով կանգ չառան ու ներխուժեցին Անդրկովկասի սահմաններ եւ կանգնեցվեցին միայն հայ ժողովրդի հերոսության շնորհիվ, 1918թ. մայիսին՝ Սարդարապատում, Բաշ-Աբարանում, Ղարափիլիսայում:

Սույն հրատարակությունը ընթերցողին հնարավորություն է տալիս ծանոթանալու նշված իրադարձություններին հայկական կորպուսի կազմավորումից, 1917թ. հոկտեմբերից սկսած մինչեւ 1918թ. մայիս, նրա մարտական գործողությունների նկարագրությանը, շարադրված դրանց անմիջական մասնակցի ու ակնատեսի՝ հայկական գործերի հրամանատարի կողմից:

Գեներալ Նազարբեկյանի հիշողությունները գրվել են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 1919թ. ստեղծված Ռազմապատմական հանձնաժողովի համար: Այդ հանձնաժողովն զբաղվում էր առաջին համաշխարհային պատերազմին հայերի մասնակցության վերաբերյալ նյութեր հավաքելով:

Հիշողություններն ընդգրկում են առաջին համաշխարհային պատերազմում 1914-ից մինչեւ 1918թթ. հայկական ռազմական ստորաբաժանումների մասնակցության ժամանակաշրջանը:

Նազարբեկյանի հուշագրությունների հրատարակվող մասը վերաբերվում է միայն հայկական կորպուսի կազմավորման եւ գործունեության շրջանին: Հիշողությունների այդ հատվածը գրվել է 1929-1931թթ. Թիֆլիսում, հիվանդ, միայնակ ծերունու կողմից, օտար բնակարանում եւ ծայրահեղ աղբատության մեջ:

Հրատարակվող հիշողությունները պահպանվում են ՀՀ ԿՊՊԱ գեներալ Նազարբեկյանի անձնական ֆոնդում սեւագրերի եւ մաքրագրված երեք տետրերի տեսքով:

Ամբողջությամբ դրանք տպագրվում են առաջին անգամ, ֆանի որ մինչեւ վերջերս ֆոնդը գտնվում էր փակ պահպանության տակ եւ այն օգտագործելու հնարավորությունը սահմանափակ էր: Սակայն դրանք մասնակիորեն օգտագործվել են գիտական առանձին ուսումնասիրություններում:

Ինչպես պատմաբանների, այդպես էլ լայն հանրության համար դրանք առավել հետաքրքրություն են ներկայացնում որպես ակնատեսի, զինվորական մասնագետի, սեփական ժողովրդի ցավը խորապես ապրող հայրենասերի հիշողություններ, որ ճշգրտորեն ու մանրակրկիտ ձեռով է նկարագրում իրադարձությունները, ռազմական գործողությունները այն տարիների ֆաղափական եւ դիվանագիտական ուրվապատկերի վրա:

Զնայած դատողությունների որոշակի խստությանն ու գնահատականների ենթակայականությանը, հիշողությունները մեծ հետաքրքրություն են ներկայացնում, ֆանգի դրանք գրելու համար հեղինակը հավաքել եւ օգտագործել է բազմաթիվ մասնակիցների, գորապետների, սպաների եւ այլոց վկայություններ:

Որպես հրատարակության հավելված գետեղվել են նկարագրվող իրադարձությունները բացատրող ու լրացնող փաստաթղթեր:

Հիշողությունները տպագրվում են որոշ կրճատումներով: Այդ կրճատումները պարունակում են աննշան, հետաքրքրություն չներկայացնող մանրամասներ:

Տեքստի վերարտադրության ժամանակ ուղղված են մաքրագրության ժամանակ թույլ տրված ֆերականական եւ ուղղագրական սխալները: Ուղիղ փակագծերի մեջ են վերցված տեքստում բաց թողնված բառերը:

Հ.Մ.Շաթիրյան
Արխիվային վարչության մասնագետ

Գ.Ա.Ավետիսյան
ՀՀ ԳԱ թղթակից անդամ, պրոֆեսոր

շնորհակալություն հայտնեցի եւ նրանց ասացի, որ բոլոր ուժերս կներդնեմ արդարացնելու իրենց վստահությունն իմ նկատմամբ: Առայժմ դեռ հրաման չկար հայկական կորպուսի կազմավորման թույլտվության ինչպես նաեւ կորպուսի հրամանատար նշանակվելու մասին: Այդ նշանակումն սպասվում էր Ռազմակայանից:

Հայոց Ազգային Խորհուրդը⁵ հաստատեց իմ կորպուսի հրամանատար ընտրվելու մասին ռազմական մասնաճյուղի որոշումը: Երբ ինձ հայտնեցին այդ մասին, զնացի Ազգային Խորհուրդի նիստին եւ շնորհակալություն հայտնեցի նրանց այդ ընտրության եւ ինձ՝ արված պատվի համար:

Հաջորդ օրն այցելեցի Հայկական խորհրդի նախագահ Ահարոնյանին:

Հետագայում Շահմազյանն ինձ պատմեց, որ Ազգային խորհրդի որոշ անդամներ ջանում էին հայկական կորպուսի հրամանատար նշանակել Ռուսաստանից կանչված Միխայիլ Արեշեից⁶, սակայն ռազմական մասնաճյուղը դրա հետ չէր համաձայնվել: Ես կամաց-կամաց ձեռնամուխ եղա կորպուսի սպայակույտի աստիճանավորների ընտրությանը: Գտա կորպուսային փորձառու համբարակ՝ զնդապետ Չումարովին: Նա սիրով համաձայնվեց զբաղեցնել կորպուսային համբարակի պաշտոնը: Կովկասյան քանակային կորպուսի նախկին բժիշկ Պուգինովին առաջարկեցի կորպուսային բժշկի պաշտոնը: Նա տվեց իր համաձայնությունը:

Կորպուսի հրետանու պետ նկատի ունեցա գեներալ-մայոր Պոզոեիին: Նա Ախալցխայում էր: Հեռագրով ես նրան առաջարկեցի թե արդյոք կցանկանա զբաղեցնել այդ պաշտոնը: Նա նույնպես համաձայնություն տվեց Հրետանային հրամանատարներ (զնդերի) նախատեսված էին զնդապետներ Կոստանյանն ու Համազյանը⁷, կորպուսային դատարանի նախագահ՝ Ռազմակորպուսային դատարանի նախկին անդամ զնդապետ Քիշմիշյանը, իսկ դատախազ՝ պրապորշչիկ Ստեփան Եղիազարյանը: Դիվիզիաների հրամանատարներ նախատեսեցի գեներալներ Սիլիկյանին⁸ եւ Արեշեիին: Կորպուսի սպայակույտի պետ կցանկանայի ունենալ, իհարկե, Գլխավոր սպայակույտի հայերից: Այդպիսիք, ցավոք, սակավաթիվ էին եւ մեզ հայտնի չէր, թե որտեղ էին գտնվում: Գիտեի՞նք միայն մեկին՝ գեներալ-մայոր Տիգրանովին, որը գտնվում էր Պետրոգրադում: Առայժմ նրան չգիտեցի՞նք, նկատի առնելով, որ սպասում էինք կորպուսի կազմավորման վերաբերյալ հրամանին: Վերջապես ստացվեց կորպուսի կազմավորման մասին վաղուց սպասված հրամանը: Այնժամ ռազմական մասնաճյուղի կողմից գեներալ Տիգրանովին հեռագիր ուղարկվեց այն առաջարկով, թե նա արդյոք չի ցանկանա զբաղեցնել հայկական կորպուսի սպայակույտի պետի պաշտոնը: Նա մի քանի օրից պատասխանեց, որ համաձայն կլինի միայն այն դեպքում, եթե իրեն

կերաշխավորվի այն ռոճիկը, որն ինքն ստանում էր վերջին շրջանում Պետրոգրադում, այսինքն՝ բերդապետի ռոճիկ: Մասնաճյուղը այդ հեռագրին չպատասխանեց, այդ իսկ պատճառով նրան սպայակույտի պետ նշանակելու հարցը իմաստը կորցրեց: Ես ուզում էի այդ պաշտոնն առաջարկել զնդապետ Բեժանբեկովին, սակայն, ռազմական մասնաճյուղն այդ մասին լսել նույնիսկ չցանկացավ: Պատճառն այն էր, որ նա լինելով բրիգադի հրամանատար չէր հարմարվել իր պարտականությունների շրջանակներին խառնվող ռազմական մասնաճյուղի որոշ անդամների հետ: Նա կտրուկ կերպով հակազդել էր դրան: Ես ցանկացա այդ պաշտոնի համար առաջարկել զնդապետ Պիկովսկուն, որին որպես նախկին համագնդեցու շատ լավ էի ճանաչում, սակայն, այդ ժամանակ ժամանեց գեներալ Արեշեյը եւ թախանձագին կերպով ինձ երաշխավորեց վերցնել փոխզնդապետ Մասլովին՝ որպես գլխավոր սպայակույտի երեսելի սպայի: Խորհրդի համար դիմեցի գեներալ Լեբեդինսկուն, քանի որ անձամբ Մասլովին չգիտեի եւ ոչինչ չէի լսել նրա մասին: Գեներալ Լեբեդինսկին լավ կարծիք հայտնեց: Հարկ եղավ Մասլովին առաջարկել զբաղեցնելու կորպուսի սպայակույտի պետի պաշտոնը, չնայած, չգիտես ինչու նա ինձ դուր չեկավ: Իմ առաջարկության հետ նա համաձայնվեց:

Կորպուսի սպայակույտը հրամանից հետո լծվեց աշխատանքի: Սպայակույտի համար ժամանակավորապես հատկացվել էր Աբասաբադյան հրապարակի վրա գտնվող հայկական բարեգործական ընկերության շենքը, իսկ հետո այն տեղափոխվեց 3-րդ իգական գիմնազիայի շենք՝ Բեյբութովյան փողոցի վրա: Դրա համար հատկացվեց 2-րդ հարկը: Սպայակույտ ընդունվող սպաների մեծ մասն անցնում էր ռազմական մասնաճյուղով:

Երբ իրողություն դարձավ հայկական կորպուսի կազմավորման վերաբերյալ հրամանը, հայերն արդեն ունեին հետեւյալ կազմավորված զորամասերը՝ 6 հրաձգային զնդեր 2 գումարտականոց կազմերով եւ մեկ հեծելազորային գունդ: Գնդերը տեղաբաշխված էին հետեւյալ կետերում՝ 1-ին գունդը՝ Քանաքեռում, 2-րդը՝ Խնուսում, 3-րդը՝ Դիլիջանում, 4-րդը՝ Էջմիածնում, 5-րդը՝ Վանում եւ 6-րդը՝ ... [բացթողում ձեռագրում], հեծելազորային գունդը տեղաբաշխված էր Թիֆլիսում: Բացի այդ կային 4 հրանոթային կազմով մի քանի մարտկոցներ:

Հրաման տրվեց ձեւավորելու 7-րդ եւ 8-րդ հրաձգային զնդերը, 7-րդը՝ Սարիղամիշում, իսկ 8-րդը՝ Ալեքսանդրապոլում: Ռուսական նախկին պահեստային գումարտակները Թիֆլիսում եւ Ալեքսանդրապոլում վերակազմավորվեցին հայկականի: Ալեքսանդրապոլում ռուսական 2-րդ հեծելազորային սահմանապահ զնդի սակրավորների գումարտակն սկսեց վերածվել 2-րդ

Համազյանին: Ծաշի ժամանակ բաժակահաճեր փոխանակվեցին ի պատիվ ֆրանսիացիների եւ Երանց բանակի, իսկ Երանք՝ ի պատիվ հայերի եւ հայկական երիտասարդ զորքի, մաղթելով մեզ հաջողություն առաջիկա մարտական գործողություններում: Ծաշկերույթը բարեկամական գրույցի մթնոլորտում ձգվեց մինչեւ ուշ գիշեր:

Զորքերի գլխ. հրամանատարը Երանցի հետաքրքրվում էր կորպուսի կազմավորման ընթացքով եւ մի անգամ չէ, որ ինձ է պահանջել այդ առիթով զեկուցելու համար: 1917թ. Երանքերի 28-ին քաղաքական պահի արտակարգ հանգամանքների եւ կենտրոնական համապետական իշխանության բացակայության հետեւանքով կազմավորվեց Անդրկովկասյան կոմիսարիատը, որն իր վրա վերցրեց կառավարական ամբողջ իշխանությունը Անդրկովկասյան երկրամասի սահմաններում: Այդ իսկ պատճառով ազգային կորպուսների կազմավորման հետ կապված հետագայում ծագող բոլոր հարցերը լուծվում էին անմիջապես տեղում, առանց Ռազմակայան հարցումներ անելու:

Կորպուսի կազմավորման շրջանում պատահաբար իմացա, որ տարբեր հայկական կազմակերպությունների մեջ գտնվող եւ Երան հայկական կորպուսի կազմավորմանը մասնակցող որոշ անձանց կողմից Պյատիգորսկից կանչվել է Անդրանիկը: Թե ինչու էր դա թաքցվում եւ չէի կարողանում հասկանալ: Երբ Երան եկավ, գնացի մտադրել եւ Երան առաջարկեցի ինչու ինձ մոտ, որպեսզի դրանով կորպուսի կողմը գրավվեն թուրքահայերը: Բայց Երան հպարտորեն մերժեց իմ առաջարկը եւ Երանիսկ դա, ըստ երեւույթին զարմացրեց եւ վիրավորեց Երան: Բանից պարզվեց, որ զորքերի Գլխավոր հրամանատարից Երան համար հաջողացրել էին գեներալական ուսադիրներ եւ առաջարկել էին թուրքահայերից կազմավորել համահավաք հայկական ջոկատ: Եւ այդպես էլ չէի կարողանում հասկանալ՝ Երան ինձ ենթարկվում է, թե ոչ: Այդ Երան Երանակմամբ ինչ-որ քառու առաջացավ կորպուսում:

... Գլխ. հրամանատար գեներալ Պրժեւալսկին Կովկասյան ռազմաճակատում թուրքական բանակի հրամանատարից Երանքերի 21-ին Երանակ ստացավ զինադադար կնքելու առաջարկությամբ: Զորքերի գլխ. հրամանատար գեներալ Պրժեւալսկու կողմից Երանքում բանակի հրամանատարին ուղարկվեց պատասխան. «Խնդրում եմ Ձեզ, բանազնացի միջոցով հաղորդեցեք Յ-րդ թուրքական բանակի հրամանատար Ֆերիկ-Վեհիբ-Մեհմեդ փաշային իմ հետեւյալ պատասխանը իր Երանակին. «Պարոն գեներալ, զինադադարի առաջարկությամբ, Ձեր Երանակը ստացա եւ շտապում եմ տեղեկացնել Ձեզ, որ եւ պատրաստ եմ ընդառաջ գնալու Ձեր մարդկային առաջարկին: Այդ նպատակով եւ առաջարկում եմ իրար դեմ մարտնչող մեր երկու բանակներին ամբողջ կովկասյան ռազմաճակատում դադարեցնել ռազմական գործո-

ղությունները եւ չիրականացնել որեւէ ռազմավարական վերախմբավորում, մնալ Երկայնում զբաղեցրած դիրքերում սպասելով զինադադարի կնքմանը: Այդ պայմանին Ձեր համաձայնության դեպքում եւ առաջարկում եմ, Ձեր կողմից նպատակաւոր պատասխան ստանալուն պես թուրքական եւ ռուսական բանակների ներկայացուցիչներից ստեղծել հատուկ հանձնաժողով, որին հանձնարարել մանրամասնորեն մշակել երկու կողմերի համար էլ ընդունելի զինադադարի պայմաններ: Պարտքս եմ համարում մեր այս Երանակի զինադադարի պայմանները: Պարտքս եմ համարում մեր այս Երանակի հրապարտության մասին հաղորդել անգլիացիների միջազեւոյան բանակի հրամանատարին: Գեներալ, խնդրում եմ ընդունեցեք խորին հարգանքներս հավաստիքը: Կովկասյան բանակի գլխ. հրամանատար գեներալ Պրժեւալսկի» (պատասխանն ստորագրել էր Երան եւ Կովկասյան ռազմաճակատի սպայակույտի պետ, գեներալ Լեբեդիցկի) (տե՛ս, «Փաստաթղթեր եւ նյութեր Անդրկովկասի եւ Վրաստանի արտաքին քաղաքականության մասին», ժողովածու, Թիֆլիս, 1919թ., էջ 13: Կազմող):

Ռուսական բանակի կողմից զինադադարի պայմանները մշակող հանձնաժողովի նախագահ Երանակվեց բանակի սպայակույտի պետ, գեներալ-մայոր Վիշինսկին: Նրան տրվեց Անդրկովկասյան կոմիսարիատի հավանությանն արժանացած հրահանգ: Բանակցությունները վարվում էին Երանակ քաղաքում: 1917թ. դեկտեմբերի 5(18-ին) ստորագրվեց պայմանագիր զինադադարի մասին: Զինադադարի տեքստը հաղորդվեց Կովկասյան բանակի կորպուսներին:

Այսպիսով, ռազմաճակատում ժամանակավորապես մարտական գործողությունները դադարեցին, չնայած հեղափոխության օրվանից խոշոր ընդհարումներ ինչ-որ ինքնաբերաբար արդեն չկային, այլ ինչու էին սոսկ մանր ընդհարումներ առաջապահ գործառնում:

Թուրքերին, իհարկե, առանձնապես վստահել չէր կարելի, որն էլ հետագայում հաստատվեց: Նրանք գերազանց գիտեին մեր զորքերի վիճակը հեղափոխությունից հետո: Նրանց հարկավոր էր ժամանակ շահել կարգի բերելու իրենց անասելի շափերով քայքայված գործառնները, ինչպես Երան համալրելու եւ պարենամթերք ու ռազմամթերք հասցնելու համար: Այդ ժամանակ թուրքերը բառացիորեն սովահար էին ինչու, ինչը երեւում էր փաստականների հսկայական թվից:

Այդ զինադադարը մեզ էլ հնարավորություն տվեց մեր ազգային գործառնների կազմավորումը հետագայում իրականացնել շատ թե քիչ հանգստությամբ:

Ռուսական զորքերն այդ ժամանակ սկսեցին տարերայնորեն լքել ռազմաճակատը եւ շարժվել դեպի թիկունք, անապարելով շտապ նստել գնացք եւ մեկնել հայրենիք՝ Ռուսաստան:

Հեռացող գորքերի հետ բախումներից խուսափելու համար ԹԻՖլիսի մոտ՝ Նավթուղում ստեղծվեց ուղեբաժանք, շնորհիվ որի ռազմաճակատից եկող գորքերը կարիք չունեին ԹԻՖլիս մտնելու, քանի որ էշելոններով Ալեքսանդրապոլից շարժվող զնաքնները կարող էին ուղեորվել ուղիղ դեպի Բաքու:

Այդ որոշմամբ ԹԻՖլիսը խուսափեց այն անկարգություններից, որոնք անխուսափելիորեն տեղի էին ունենում քաղաքներում հեռացող գորքերի բոլոր կանգառների ժամանակ: Չորքերի գլխ. հրամանատարի կողմից հրաման տրվեց, որպեսզի Ռուսաստան հեռացող զորամասերը Կովկասում թողնեին բոլոր հայերին և վրացիներին իրենց զենքով, նոր կազմավորվող ազգային կորպուսներ (նրանց) մտնելու համար: Սակայն, ցավոք, այդ կարգադրությունը բոլորի կողմից չէ, որ ճշգրտորեն կատարվում էր:

... Ձենքի մեծ պակասություն կար: Բոլոր ազգությունները ձգտում էին զանազան եղանակներով զենք ձեռք բերել: Ադրբեջանցիները (Ձեռագրի հեղինակը նրանց նաեւ տեղական թաթարներ է անվանում: Կազմող) որոշել էին Ռուսաստան հեռացող զորամասերից զենք ձեռք բերել բռնությամբ, որի պատճառով էլ տեղի ունեցավ Շամխորի կոտորածը: Հայկական կազմակերպությունը (ՀՅԴ-ն, թրգմ.) որոշեց զենքը և զնդացիները գնել հեռացող ռուսական գորքերից: Դրա համար նշանակվեցին հատուկ անձինք: Գնումը գլխավորապես կատարվում էր Ալեքսանդրապոլում: Տրվել էր գորքերի գլխ. հրամանատարի հրամանը, որպեսզի 1,6-րդ և 2-րդ Թուրքեստանյան կորպուսները իրենց կազմերից զենքով և զնդացիներով առանձնացնեն հայերին յուրաքանչյուր կորպուսին կից վաշտեր, գումարտակներ և զնդեր կազմավորելու համար: Բոլոր կորպուսներից ամենապլանավորված ձեռով այդ հրամանը կատարվեց 2-րդ Թուրքեստանյան կորպուսում: 2-րդ Թուրքեստանյան կորպուսի 1917թ. դեկտեմբերի 18-ի հրամանով 2-րդ Թուրքեստանյան բանակային կորպուսի զորամասերի հայերից ձեռավորվեց հայկական առանձին գումարտակ: Առանձին գումարտակի հրամանատար նշանակվեց Թուրքեստանյան 18-րդ հրաձգային զնդի կապիտան Հասանփաշյանը: Վերոհիշյալ հրամանի համաձայն արդեն առանձնացված հայկական վաշտերը պետք է հավաքվեին զնդերում. 5-րդ Թուրքեստանյան հրաձգային դիվիզիայից՝ Կիլիկիտում, իսկ 4-րդ Թուրքեստանյան հրաձգային դիվիզիայի զորամասերից՝ Երզնկայում: Դեկտեմբերի 21-ին 5-րդ Թուրքեստանյան դիվիզիայի զորամասերից առանձնացված վաշտերը հավաքվեցին Կիլիկիտում, կորպուսի սպայակույտում, 6 վաշտային կազմով (16 սպա և մոտ 1200 զինվոր), այնտեղ էլ, այդ վաշտերին տրվեցին 4 Մաքսիմ զնդացիներ, արշավային խոհանոցներ, մի քանի ձիասայլեր և փամփուշտ տեղափոխելու

երկանիվ սայլակներ: Կիլիկիտում հավաքված վաշտերին կորպուսի սպայակույտից հրաման ստացվեց շարժվելու Երզնկա քաղաք, Կովկասյան 1-ին բանակային կորպուսի հրամանատար, գեներալ Լյախովի տրամադրության տակ, միանալու Թուրքեստանյան 4-րդ դիվիզիայի զորամասերից առանձնացված հայկական վաշտերին, որից հետո ուղեորվել դեպի Էրզրում՝ կազմավորման համար:

1917թ. դեկտեմբերի 22-ին վերոհիշյալ 6 վաշտերը Սեյմի լեռնանցքով ուղեորվեցին դեպի Երզնկա քաղաք և առատ ձյան ու ճանապարհները փակ լինելու պատճառով դեկտեմբերի 25-ին մեծ դժվարություններով հասան Երզնկա (զորամասերի կողմից իրենց դիրքերը թողնելու և թիկունք հեռանալու պատճառով Տրապիզոն-Երզնկա խճուղով հաղորդակցությունը դադարել էր դեռեսու դեկտեմբերի 15-ին):

Արդեն մինչև դեկտեմբերի 26-ը Երզնկայում, Երզնկայից արեւմուտք և հարավ ընկած դիրքերում գտնվում էր միայն Թուրքեստանյան 16-րդ հրաձգային գումաղը, մի քանի հարյուր կազակներ և 1-ին Կովկասյան բանակային կորպուսի սպայակույտը: Մնացած զորամասերն արդեն թողել էին դիրքերը և շարժվում էին դեպի Էրզրում: 4-րդ բանակային հրաձգային դիվիզիայի զորամասերի հայերը իրենց զորամասերի հետ հեռացել էին թիկունք: Միայն 16-րդ Թուրքեստանյան զնդից, որը Երզնկայից հեռացավ դեկտեմբերի 26-ին մնաց հայկական մեկ վաշտ՝ 4 սպա և մինչև 200 զինվոր ունեցող կազմով:

Երզնկայում պարզվեց, որ ռուսական բոլոր զորամասերը հեռանում են Երզնկայից և որ Թուրքեստանյան զորամասերի հայկական վաշտերը կազմավորման համար չպետք է գնան Էրզրում, այլ պետք է մնան Երզնկայում և միաժամանակ կազմավորվեն որպես առանձին գումարտակ և պաշտպանեն ռուսական գորքերի թողած դիրքերը:

Կովկասյան 1-ին բանակային կորպուսի հրամանատար գեներալ Լյախովը Երզնկայից հեռացավ դեկտեմբերի 27-28-ին ռուսական վերջին զորամասերի հետ, հրամանատարությունն ու սպայակույտի գործերը հանձնելով գնդապետ Մորելին, որը նշանակվել էր Երզնկայի ջոկատի պետ: Երզնկայից ռուսական զորամասերի հեռանալուց հետո այնտեղ մնաց Երզնկայի (հայկական) ջոկատը իր կազմում ունենալով 2-րդ Թուրքեստանյան հրաձգային կորպուսի հայերից բաղկացած 7 վաշտ՝ մինչև 1400 սպին, 4 վաշտ՝ 500 հոգի թուրքահայ կամավորներ, մեկ հարյուրակ՝ 60 սրերով, 2 դաշտային և 2 լեռնային հրանոթներ:

Դրանից բացի Երզնկայի ջոկատի մեջ էր մտնում Ֆամի գումարտակը, որը տեղաբաշխված էր Ֆամ գյուղում, բաղկացած 3 վաշտերից՝ 350 սպին՝

մեծամասամբ թուրքահայ կամավորներ եւ 6-րդ կովկ. հրաձգ. դիվիզիայի զորամասերի անհշան թվով զինվորներից: Զորամասերի հրամանատարներն էին՝ Թուրքեստանյան զնդերի վաշտերինը՝ կապիտան Հասանփաշյանը, բոլոր կամավորների հրամանատարն էր Սեբաստացի Մուրադը, վաշտերի հրամանատարները սպաներ էին, իսկ հարյուրակինը՝ խմբապետ: Ֆամի գումարտակի հրամանատարն էր շտաբս կապիտան Կաֆիելը: Զոկատի շտաբը բաղկացած էր 2 մարդուց եւ կորպուսային համբարակից, ինժեներից եւ այլն (բոլորը ռուսներ):

Ռուսական զորամասերի հեռանալուց հետո Էրզրումում Կովկասյան 1-ին Հայկական կորպուսի զորամասերից թողնված հայերից կազմավորվեց Էրզրումի գունդը, որի հրամանատարը դարձավ թուրքական սարճերից՝ Թորգունը:

Քանի որ Թիֆլիսում գրեթե լիովին բացակայում էր իրական ուժը (կար հայկական հեծելազորային մեկ գունդ եւ կորպուսի պահակախմբի մեկ հարյուրակ), ուստի Հայոց ազգային խորհուրդը որոշեց համեմայն դեպս Թիֆլիսում ունենալ ինչ-որ մի ավելի ուժեղ զորամաս, քանի որ ռազմաճակատից հեռացող ռուսական զորքերի ներխուժման վտանգը լիովին չէր վերացել: Դա հաղորդվեց ինժե եւ Դիլիջանից պահանջեցի 3-րդ հայկական հրաձգային գունդը: Իմ հեռագրից հետո երրորդ օրը գունդը, 2 գումարտականոց կազմով, ժամանեց: Սկզբնապես այն տեղավորեցին Բարաթինսկոն եւ Գոլովինսկոն պողոտային մերձ մի մեծ շենքում, սակայն մի քանի օր անց չգիտես ինչու դա անհարմար գտան եւ գունդը փոխադրեցին Հավլաբար՝ Թիֆլիսյան զնդի նախկին զորանոցներ:

Գունդը Հավլաբար փոխադրելու հաջորդ օրը եւ այցելեցի գունդ: Ծանոթացա սպայության եւ զնդի հետ: Գնդի հրամանատար Լեւոն Հովսեփյանցին, որպես նախկին համազնդեցու, եւ լավ գիտեի: Նա մարտական սպա էր, մասնակցել էր (մարտերին) Արեւմտյան ռազմաճակատում եւ այնտեղ բազմիցս աչքի ընկել իր մարտական սխրանքներով, ծանր վիրավորվել էր, սակայն, բնավորությամբ շատ մեղմ էր եւ այդ պատճառով զնդում մեկ անգամ չէ որ անկարգություններ էին եղել: Եվ ես, չնայած նրա մարտական հատկություններին, դրա պատճառով, չնայած իմ մեծ ափսոսանքին, հետագայում ստիպված եղա հանելու նրան զնդի հրամանատարությունից եւ Լոռու զնդի հրամանատարի օգնական նշանակել, իսկ նրա փոխարեն նշանակել զնդապետ Փիրումյանին:

Թիֆլիսում գտնվելու ժամանակ հաճախ, ավելի ճիշտ ամեն օր, տեղի էին ունենում Հայոց ազգ. խորհրդի եւ կառավարության նիստեր պալատում (նկատի ունի Կովկասի նախկին փոխարքայի պալատը): Հայոց ազգային խորհուրդն ամբողջ ուժերով ձգտում էր այն բանին, որ Էրզրումն

անպայման պահվի մեր ձեռքում, հաշվի չառնելով, ցավոք, այն իրավիճակը, որն առաջացել էր ակնհայտորեն ոչ դրա օգտին: Պարզ երեւում էր, որ զըլխավոր ռազմաճակատը՝ Երզնկայից մինչեւ Վանա լիճ, որը մինչ այդ դժվարությամբ զբաղեցնում էին մի քանի կորպուսներ իրենց օժանդակ զորքերով, չգիտես ինչու հանձնվել էր հայերին, վրացիները նկատի էին առել Բաթումն ու իր շրջանը, իսկ թաթարները, իհարկե, չէին էլ մտածում որեւէ ռազմաճակատի մասին, քանզի իրենց համար շատ հանգիստ էին:

Նրանք գիտեին, որ թուրքերի հարձակման դեպքում իրենց ոչ մի վտանգ չի սպառնում: Իմ կարծիքին իբրեւ հաստատում կարող է ծառայել այն հանգամանքը, որ բանակի հրամանատար, զեներալ Օդիշելիձեւ ամբողջ ժամանակ պահանջում էր գլխավոր ռազմաճակատ ուղարկել միայն հայկական զորամասեր:

Հայոց ազգային խորհրդի նիստերին, երբ որոշվում էին ռազմական հարցեր, հրավիրված էինք եւ, զեներալ Ղորղանյանը եւ Արեշելը: Երբ ներկա էր լինում Անդրանիկը, ապա քննարկումները մեծամասամբ բռնոն էին անցնում:

Ժամանակավոր կառավարությունը (Նկատի ունի Անդրկովկասյան կոմիսարիատը: Կազմող) (նույնպես) իր նիստերին հրավիրում էր կորպուսների հրամանատարներին: Սովորաբար դա տեղի էր ունենում այն ժամանակ, երբ հեռացող ռուսական զորքերի կողմից Թիֆլիսին վտանգ էր սպառնում: Կառավարությունը վախենում էր, որ այդ զորքերը Բաքու ուղեորովելու փոխարեն ցանկություն ունենան Թիֆլիս մտնելու, բռնագրավելու համար Թիֆլիսի ռազմական պահեստներում մնացած հսկայական գույքը: Այդ դեպքում կառավարությունը կցանկանար Նավթուղում կանգնեցնել ազգային զորքերի որոշ ուժեր, որպեսզի հնարավոր լիներ չեզոքացնել այդ սպառնալիքը: Սակայն, ցավոք, ուժ չունեին ոչ վրացիները, ոչ թաթարները, միայն հայերն ունեին 2000 սվին եւ 500 թուր: Մի անգամ էլ, երբ ժամանակավոր կառավարությունը, նիստերից մեկի ժամանակ դիմեց մեզ՝ կորպուսների հրամանատարներին, թե ռուսական զորքերի Թիֆլիս ներթափանցելու փորձի դեպքում ինչ ուժեր մենք կարող ենք հակադրել, ապա վրացական եւ թաթարական կորպուսների հրամանատարներն հայտարարեցին, որ Թիֆլիսում իրենք ոչ մի ուժ չունեն կորպուսներում եւ հարկ չկա մեծ միջոցներ ծախսել այդ կորպուսների վրա: Այնժամ եւ առարկեցի, որ հայերի մոտ գրեթե բոլոր զորամասերը շատ թե քիչ ձեւավորված են, սակայն մեր զորամասերը մեծ մասամբ նախատեսված են ռազմաճակատ մտնելու համար, իսկ նրանք որ Թիֆլիսում են, քանի որ եւ դեմ են, չեն կարող միայնակ հանդես գալ Նավթուղում հարձակումը հետ մղելու համար:

Այստեղ բոլոր ազգային գորամասերի աշխատանքը համատեղ պետք է լինի: ...Երաշխավորության համաձայն սկսվել էր նաև հունական դիվիզիայի կազմավորումը:

Հունվարի մեկին, բանակի հրամանատար գեներալ Օդիշելիձեի միջոցով, Վեհիբ Փաշայի կողմից Կովկասյան բանակի Գլխավոր հրամանատարին նամակ էր հղվել, որում ցանկություն էր հայտնվում թուրքական եւ Անդրկովկասյան կառավարությունների միջեւ հաշտություն կնքելու մասին: Այդ նամակը գեներալ Օդիշելիձեին փոխանցել էր գորքերի Գլխավոր հրամանատարին, իսկ նա՝ Անդրկովկասյան կոմիսարիատին:

Այդ նամակի պատասխանը Անդրկովկասյան կոմիսարիատի կողմից ուղարկվեց Վեհիբ Փաշային, որի մեջ ասված էր. «Անդրկովկասյան կառավարությունը չի կարող թաքցնել Ձեզնից, պր-ն գեներալ, պատերազմն ավարտելու ուղղությամբ իր քայլերը ռուսաստանյան հանրապետության տարածքային միավորների ինքնավար կառավարությունների կարծիքների եւ հայացքների հետ համաձայնեցնելու անհրաժեշտությունը, որոնք Անդրկովկասյան կառավարության հետ հավասարապես շահագրգռված են խաղաղության կնքմամբ: Այդ ուղղությամբ Անդրկովկասյան կառավարությունը ձեռնարկել է որոշակի քայլեր ինքնավար կառավարությունների հայացքները քննարկվող հարցի վերաբերյալ պարզելու համար եւ կարծիքների փոխանակումից ու ընդհանուր որոշում հաստատելուց հետո, այդ մասին Ձեզ տեղյակ կդարձվի, Օսմանյան բանակի Գլխավոր հրամանատարին հետագա տեղեկացման համար:

Նկատի առնելով շարադրված համաձայնեցված գործողությունների հաստատման համար որոշակի ժամանակի անհրաժեշտությունը, Անդրկովկասյան կառավարությունը հույս ունի, պարոն գեներալ, որ երեքշաբաթյա ժամկետով սպասումը նեղություն չի պատճառի Ձեզ:

Ընդունեցեք Ձեր նկատմամբ հատուկ հարգանքների հավաստիքը: Անդրկովկասյան կառավարության հանձնարարությամբ՝ նախագահ Գեգեշկորի: Թիֆլիս, 1918թ., հունվարի 15(28)» («Նյութեր եւ փաստաթղթեր...»: Ժողովածու, էջ 48-49: Կազմող):

Առաջարկ էր եղել 1918թ. հունվարի 6-ին Վանիի եկեղեցու գավթում հանդիսավորությամբ շնորհավորել ջրօրհները (մկրտությունը): Ցանկանալով հայերին ցույց տալ իրենց ազգային գորքերը, եւ կարգադրեցի ժամերգության ժամանակ եկեղեցու գավթի բերել հետեւակի մեկ վաշտ եւ հեծյալ գնդի մեկ հեծելավաշտ՝ երաժշտության ուղեկցությամբ:

Եւ կարծում էի, որ սեփական ազգային գորամասերն առաջին անգամ տեսնելով եկեղեցու գավթում ներկա գտնվող հայերի մոտ ակամայից

կրարձրանա հայրենասիրության զգացումը: Սակայն հեծելագորային գնդի հրամանատար Փիրույանն իր անճշտակատարության եւ անփութության պատճառով փչացրեց իմ այդ մտահղացումը: Վաշտը եկավ ժամանակին, իսկ հեծելավաշտը՝ երաժշտությամբ, միայն այն ժամանակ, երբ ժողովուրդն արդեն սկսել էր ցրվել: Փիրույանն իրեն արդարացնելու համար նշում էր այն հանգամանքը, որ երբ ինքը, հեծելավաշտի հետ, անցնում էր Բարասինկու փողոցով, դիմացը դուրս է եկել գորքերի Գլխավոր հրամանատար գեներալ Պրծեալսկին, ողջունել մարդկանց, դիտել հեծելավաշտը եւ շնորհակալություն հայտնել հիանալի տեսքի եւ վայելչության համար: Իհարկե, այդ արդարացումը մանկական էր: Ստիսված եղա միայն հետեւակի ներկայությամբ ճառով դիմել ժողովրդին, բայց այդ ճառն, իհարկե, ասվեց ռուսերենով ու առանց երաժշտության եւ չէր կարող այն տպավորությունը գործել, որը եւ ակնկալում էի:

Հունվարի 9-ին Կովկասում թուրքական բանակների հրամանատար Վեհիբ փաշայի կողմից մուսուլմանական բնակչության նկատմամբ հայերի բռնությունների մասին նամակ ուղարկվեց Կովկասյան բանակի հրամանատար, գեներալ Օդիշելիձեին: Այդ նամակը ստացվեց միայն հունվարի 18-ին: Այդ նամակի հիման վրա Կովկասյան բանակի Գլխավոր հրամանատարի կողմից հրաման տրվեց այն մասին, որպեսզի անմիջապես դադարեցվեն ամեն տեսակի բռնությունները մուսուլման բնակչության նկատմամբ: Եվ այդ մասին տեղեկացվեց Վեհիբ փաշային:

Արված կարգադրության համար Վեհիբ փաշան Գլխավոր հրամանատարին շնորհակալական նամակ ուղարկեց:

Հունվարի 16-ին Վեհիբ փաշան կրկին նամակ հղեց Գլխավոր հրամանատարին, բողոքելով հայերի դաժանություններից, որոնք (իբր թե) սպանում են ոչ միայն առանձին բնակիչների, այլեւ ամբողջ ընտանիքների վառում:

Հունվարի 29-ին Վեհիբ փաշայի կողմից հեռագիր ուղարկվեց գորավար Օդիշելիձեին, որում շարադրված էր այն գազանությունների մասին, որոնք գործվում են հայերի կողմից Սեբաստացի Մուրադի գլխավորությամբ՝ Երզնկայում եւ Արշակի գլխավորությամբ՝ Բաբերդում:

Գեներալ Օդիշելիձեի կողմից հունվարի 30-ին այդ հեռագրին պատասխան ուղարկվեց, որի մեջ նշվում էր, որ Վեհիբ փաշայի շարադրած բոլոր տեղեկությունները, ոչ ճիշտ գեկույցների հետեւանքով, զգալիորեն չափազանցված են: Այդ մասին են տեղեկացնում Երզնկայի ջոկատի հրամանատար գնդապետ Մորելը եւ Բաբերդի շրջանի կոմիսարը, որտեղից նույնիսկ գեկույց կա մուսուլմանների շնորհակալության մասին իրենց նկատմամբ նրա հոգատարության համար, իսկ Երզնկայի կոտորածի մեղավորները խստորեն կպատժվեն:

Չնայած գեներալ Օդիշելիձեի և զորքերի Գլխավոր հրամանատարի պատասխան հեռագրերին, Վեհիբ փաշայից, հունվարի 30-ին հեռագիր ստացվեց թուրքական զորքերի հարձակման անցնելու մասին և, որ նա այդ անում է ոչ թե ռուսական զորքերի դեմ թշնամական գործողությունների նպատակով, այլ մուսուլմանական բնակչությանը այն բռնություններից զերծ պահելու նպատակով, որոնք գործադրում են հայերը: Չխախտելով զինադադարը. նա որոշել է որոշ զորամասեր առաջ շարժել մեր կողմից գրավված շրջան:

Այդ հեռագրից հետո Խնուսում, 2-րդ հայկական զնդում գտնվող գեներալ Օդիշելիձեի կողմից հղվեց հետևյալ հեռագիրը. «Հենց նոր ռադիոյով հեռագիր ստացա Կովկասյան ռազմաճակատում թուրքական բանակների հրամանատարից, որով Վեհիբ փաշան ինձ զգուշացնում է, որ նկատի առնելով ստեղծված դրությունը, ինքն ստիպված կլինի շխախտելով զինադադարը զորքերի որոշ զորամասեր առաջ շարժել մեր զբաղեցրած շրջանը: Չորքի բոլոր զորամասերին հրամայում եմ մնալ տեղերում: Թուրքերի գերակշիռ ուժերի հարձակման դեպքում նրանց հետ մարտի մեջ չմտնել. աստիճանաբար նահանջել: Չեզ վստահված ջոկատի պահեստային զորամասերի մոտ: Թուրքերի ճնշման դեպքում Չարբոխի բնագծերից, Ախլաթից ու Վանից հետ չնահանջել: Թուրքերի յուրաքանչյուր հարձակման ու մեր զորքերի նահանջի մասին զեկուցել: Չորքերի կողմից թողնվող կետերում պահեստապաշարները ոչնչացրեք, 1918թ. հունվարի 31, ժ. 16, № 297: Գեներալ Օդիշելիձե:» («Նյութեր և փաստաթղթեր...» ժողովածու, էջ 49-50: Կազմող):

Անշուշտ, կասկած չի կարող լինել այն բանում, որ Մուրադը, Արշակը և ուրիշներ մուսուլմանական բնակչության նկատմամբ բռնություններ էին գործադրում, նրանցից վրեժ լուծելով իրենց մերձավորների համար, սակայն ոչ այնպիսի չափազանցեցված չափերով, որպիսին նշում էր թուրքական զորքերի հրամանատարը. բայց մյուս կողմից քրդերը նույնպես ամբողջ ժամանակ Երզնկայի թիկունքում հարձակումներ էին գործում ոչ մեծ խմբերի միայնակ մարդկանց և փոխադրականի վրա: Նրանք դա անում էին մասամբ իրենց նախաձեռնությամբ, իսկ գլխավորապես, իհարկե նրանց դրան էր մղում թուրքական բանակի հրամանատարական կազմը, որպեսզի իր ակտիվ գործողությունների համար առիթ ունենար:

Դա թուրքերի կողմից պետք էր սպասել այն բանից հետո, երբ նրանք իմացան ռուսների հեռանալու և այն մասին, որ ուժեղ դիմադրություն չեն հանդիպի: Աստիճանաբար առաջ շարժվելով նրանք վերադարձրին իրենցից իսկ վրեժը տարածքները և զավթեցին մեր պարենամթերքի ու հանդերձանքի հարուստ պահեստները:

Թուրքերը նաև լավ գիտեին, որ նոր կազմավորված զորամասերը դեռ ես չեն հասցրել այնքան ամրապնդվել, որպեսզի իրենց մեծ դիմադրություն ցույց տան: Նրանք, անշուշտ, հաշվի էին առել և այն հանգամանքը, որ Անդրկովկասյան ազգային զորքերի միջև, նրանց շահերի տարբերության պատճառով, սերտ միաբանություն գոյություն չունի:

Վեհիբ փաշան ասել էր, որ ինքն առաջ կշարժվի այնքան ժամանակ, քանի դեռ չի բախվի ռուսական զորքերի հետ, այլ խոսքերով, քանի որ նրան քաջ հայտնի էր, որ ռուսները հեռացել են, նա կարող էր առաջ շարժվել որքան կցանականար:

Չնայած իր պաշտոնը հիվանդության պատճառով թողած (հունվարի 5-ին), Գլխավոր հրամանատար Պրծեալսկուն փոխարինած գեներալ-մայոր Լեբեդինսկին Վեհիբ փաշային հեռագրել էլ էր, որ նոր կազմավորված ազգային զորամասերը պետք է, ինչ ազգության էլ դրանք պատկանելու լինեն, դիտել որպես ռուսաստանյան հանրապետության լիիրավ զորամասեր, և որ իր կողմից հրամանատարական կազմի, ռուսական բանակի գրաված թուրքական մարզերի գլխավոր կոմիսարի միջոցով միջոցներ են ձեռք առնվել, որպեսզի ոչ մի բռնություն չլինի մուսուլմանների վրա, և հայկական ղեկավար կազմակերպություններն էլ իրենց կողմից ձեռք կառնեն միջոցներ, որպեսզի հայ բնակչությանը հետ պահեն մուսուլմանների նկատմամբ բռնություններից: («Նյութեր և փաստաթղթեր...» ժողովածու, էջ 50-51):

Իհարկե, այդ բոլոր հեռագրերը չէին կարող փոխել Վեհիբ փաշայի որոշումը: Լավ իմանալով թուրքերին, կարելի էր կանխատեսել, որ նրանք կօգտվեն այն բարենպաստ դրությունից, որը հաջող կերպով ստեղծվել էր նրանց համար:

Թ. Նազարբեկով
15 դեկտեմբերի 1929թ.
ք. Թիֆլիս

(Վերջ առաջին տետրի)

ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 45, ց. 1, գ. 13, թթ. 1-48: Չեռագիր:

ՎԵՂԻԲ ՓԱՇԱՅԻ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԱՆՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վեհիբ փաշայի հարձակման անցնելու վերաբերյալ հեռագիրը շարժումը ազդեցություն գործեց բոլորի, հատկապես, ժամանակավոր կառավարության, բարձրագույն հրամանատարության և Հայոց ազգային ժողովի վրա: Այդ հեռագիրն ստանալու օրը, երեկոյան ճեպով գումարվեցին՝ դրամատնային հաստատության շենքում՝ Հայոց Ազգային խորհրդի և Օկրուգային սպայակույտի շենքում՝ Գլխավոր հրամանատար, գեներալ Լեբեդիևսկու հրավիրած նիստերը: Ես պարտավոր էի լինել եւ՛ Ազգային ժողովում, եւ՛ Օկրուգային սպայակույտում: Սկզբում գնացի Ազգային ժողով և խնդրեցի նախագահին ինձ չուղարկել, նկատի առնելով, որ մեզ, կորպուսների հրամանատարներին, պահանջում է Գլխավոր հրամանատարը: Ազգային խորհրդի անդամների կողմից արտահայտվեցին ցանկություններ, պահելու ոռուների գրաված ամբողջ շրջանը: Ես ասացի իմ կարծիքն այն մասին, որ մեր ուժերը, ցավոք, այնքան էլ նշանակալից չեն, որպեսզի հնարավոր լինի հաշվարկներ անել նման ընդարձակ շրջանը պահելու համար:

Դրանից բացի ոռուական զորքերի ռազմաճակատը լքելիս ունեցած տրամադրություններն ակամայից մասնակիորեն փոխանցվել են նաև մեր ազգային զորքերին: (Տեքստում այդպես է: Կազմող): Այնուհանդերձ անհրաժեշտ է բոլոր ուժերը ներդնել, որպեսզի Փոքր Ասիայի բանալի համարվող Էրզրումը, որպես շատ կարեւոր կետ, պահվի մեր ձեռքերում:

Այնուհետև ես ազատ արձակվեցի և ուղղվեցի Օկրուգային սպայակույտ: Արդեն այնտեղ էին գտնվում գեներալներ Լեբեդիևսկին, Լեանդովսկին, Ղորղանյանը և վրացական, ոռուական, ադրբեջանական կորպուսների հրամանատարներն ու հունական դիվիզիայի պետը:

Գլխավոր հրամանատարը մեզ հայտարարեց թուրքերի հարձակման անցնելու մասին և ցանկացավ իմանալ, թե թուրքերին հակահարված տալու համար կորպուսներում ինչ ուժեր կան:

Կորպուսի ադրբեջանական հրամանատարը (Այդպես է տեքստում: Կազմող), գեներալ Շիխլինսկին և հունական դիվիզիայի պետը զեկուցեցին, որ իրենք առայժմ ոչ մի զորամաս չունեն (չնայած կազմավորումը գնում էր 3 ամսից ավելի): Կորպուսի ոռուական հրամանատար Դրոցենկոն [զե-

կուցեց], որ իր մոտ առայժմ կազմավորված է միայն սպայական ջոկատը: Ես զեկուցեցի, որ հայերի մոտ կազմավորված են՝ 8 հրաձգային զնդեր 2 [գումարտականոց] կազմերով, ձեռավորվում են 8 լեռնային և դաշտային մարտկոցներ, մեկ հատիցային մարտկոց, երկու՝ Լոռու և Ղազախի տեղական զնդեր, երկու պահեստային զնդեր, մեկ սակրավորների գումարտակ և երկու հեծելազորային զնդեր, Անդրանիկի հատուկ համահավաք ջոկատը և այդ բոլորից բացի կամավորական զորամասեր՝ Երզնկայի, Խնուսի, Ախլաթի և Վանի բնագծերում:

Ինձնից հետո զեկուցեց վրացական կորպուսի հրամանատար գեղապետ Ախմետելովը: Նա զեկուցեց, որ իրենց մոտ կազմավորված են մի քանի գումարտակներ, բայց նրանք իրենց զորամասերը կուղարկեն միայն Բաթում, իսկ գլխավոր ռազմաճակատին ոչինչ չեն կարող տրամադրել:

Ախմետելովի զեկուցումից հետո գեներալ Շիխլինսկին հայտարարեց. քանի որ գեղապետ Ախմետելովն այդպես բաց է խոսում, ապա նա էլ պետք է զեկուցի, որ մուսուլմանական զորամասերը, եթե նույնիսկ կազմավորվեն և զեկուցի, որ մուսուլմանական զորամասերը, եթե նույնիսկ կազմավորվեն էլ, ապա նրանք չեն գնա կոպելու թուրքերի հետ: Մեզ, բոլոր ներկաներին, ապշեցրեց այդ անկեղծությունը, չնայած, դրան մենք պետք է սպասեինք: Ինձ զարմացրեց, որ դրան Գլխավոր հրամանատարը ոչինչ չառարկեց: Ինձ զարմացրեց, որ պաշտպանության համար սահմանները տեղամասերի բաժաժվում էր, թե պաշտպանության համար սահմանների հրամանատարների վրա: Ինձ թվում է, եթե նա ինքը, այդ զեկուցներից հետո, պաշտպանության համար բաշխեր ռազմաճակատը, ապա կորպուսների հրամանատարները պետք է ենթարկվեին նրա կարգադրությանը: Սակայն, ըստ երեւոյթին նա համաձայնվեց զեկուցների հետ, կամ, ավելի ճիշտ դա փոխելու հնարավորություն չգտավ:

Այդպիսով գլխավոր ռազմաճակատը, որտեղ [ավելի վաղ] գտնվում էին ոռուական զորքերի ավելի քան 3 կորպուսներ, բաժին ընկավ հայկական ազգային զորամասերին: Իհարկե, նման պայմաններում դժվար էր ինչ-որ նպաստավոր արդյունքներ սպասել:

Թուրքերի հարձակման անցնելուց հետո իմ կողմից կարգադրություն արվեց 1-ին և 4-րդ հայկական հրաձգ. զնդերն անհապաղ Էրզրում ուղարկելու մասին: Մեծ ափսոսանքով պետք է ասել, որ երկու զնդերն էլ այնտեղ հասան առանց հրամանատարների՝ 1-ին զնդի հրամանատար գեղապետ Ղառաբեշիջյանը հիվանդացավ, իսկ 4-րդինը՝ գեղապետ Արտեմ Հովսեփյանը՝ կոմիսար Դրոյի հետ զանազան վեճերի պատճառով: Գնդերը դուրս եկան յուրաքանչյուրը իր կազմում ունենալով 2 գումարտակ: Չնայած 3-րդ գումարտակների ձեռավորման վերաբերյալ իմ հրամանից հետո անցած զգալի

Ժամանակին, զանգվածային դասալքության հետևանքով այն ձգձգվել էր: Հրամայեցի շուտափույթ շարունակել ձեռավորումը: Էրզրում մեկնեց Անդրանիկը թուրքահայ կամավորների եւ իր սպայակոյտի պետ, գնդապետ Ջենկելիչի հետ միասին: Ինձ միայն պատահաբար հայտնի դարձավ այդ: Գեներալ Արեշեւն իմ կողմից ուղարկվեց Ալեքսանդրապոլ, իսկ նրա բրիգադայինը կամ օգնականը՝ Էրզրում, իսկ Խնուս ուղարկվեց գնդապետ Դավիթ Գրիգոր Հովսեփյանը:

Բորչալուի թաթարների շրջանը երկաթուղով անցնելիս, հարկ էր լինում ձեռք առնել լուրջ պաշտպանական միջոցառումներ, քանի որ մուսուլմանական հրոսակախմբերը մեկ անգամ չէ, որ գնացքների վրա հարձակումներ էին գործում: Դրանում հատկապես աչքի էին ընկնում սադախոցիները:

Մարտկոցները հարկ էր լինում ուղարկել հետեւակի կամ հեծելազորի պաշտպանության տակ: Բորչալուի այդ շրջանը լցված էր թուրքական գործակալներով, որոնք ձգտում էին ուղղություն տալ այդ հրոսակախմբերին եւ ընդհանրապես դեկավարում էին, որպեսզի հնարավորություն չտան Սարիղամիչի ռազմաճակատ համարում ուղարկել: Նրանց կողմից երբեմն ուշացվում էին հեռագրերը եւ նրանց, շնորհիվ այն բանի, որ նրանք գաղտնի միանում էին գլխավոր հեռագրագծին, ընդհուպ մինչեւ չհչին մանրամասնություններ, հայտնի էին մեր կարգադրություններն ու մեր զորամասերի տեղաշարժերը:

Հունվարի 20-ի կողմերը գլխավոր սպայակոյտի գեներալ-մայոր Դեւելը նշանակվեց Կարսի բերդի պարետ, իսկ նրա մոտ կոմիսար նշանակվեց Միքայել Արզումանովը, ուր եւ նրանք մեկնեցին:

Թուրքերի հարձակման անցնելու [Ժամանակ], ինչպես վերն ասվեց, Երզրնկայի եւ այդ շրջանի դիրքերի պաշտպանության համար ունեինք հետեւյալ ուժերը՝ 7 վաշտ՝ մինչեւ 1400 սվին Թուրքեստանյան կորպուսի հայերից, 4 վաշտ՝ 500 սվին թուրքահայ կամավորներից, 1 հարյուրակ՝ 60 թուր, 2 դաշտային եւ երկու լեռնային հրանոթ: Փամ գյուղում կար մեկ զումարտակ 3 վաշտից՝ 300 սվին, մեծամասամբ թուրքահայ կամավորներից եւ 6-րդ կորպուսի կողմից առանձնացված աննշան թվով զինվորներից:

Էրզրումի բերդի եւ նրա շրջանի պաշտպանության համար հետեւյալ ուժերը կային. 1-ին եւ 4-րդ հայկական գնդերը 2 զումարտականոց կազմերով, նոր կազմավորված Էրզրումի զունդը, բերդային հրետանին, մի քանի դաշտային հրանոթներ եւ մի քանի խմբեր՝ թուրքահայերից:

Սարիղամիչում գտնվում էր 7-րդ հայկ. հրաձգ. զունդը 3 զումարտ. կազմով: Խնուսում գտնվում էր հայկական 2-րդ հրաձգային զունդը 2 զումարտականոց կազմով, այն թուրքահայ կամավորների հետ միասին զբաղեցնում

էր Խնուս, Չարբորխ, Կոփ, Ախլաթ գիծը, կապ ունենալով Ադիլջեազի հետ: Վանում 5-րդ հայկ. հրաձգ. զունդը 2 զումարտ. կազմով, կամավորների հետ: Ինչպես Խնուսի շոկատում, նույնպես էլ Վանում կային լեռնային հրանոթներ: Ահա այն բոլոր ուժերը, որ հայերն ունեին մոտ 1000 վերստ երկարություն ունեցող ռազմաճակատում: Այդ զորամասերը, մեծամասամբ, սակավ բացառություններով, կազմավորվել էին հապճեպ եւ իհարկե բացարձակապես չէին կարողանում զորաշարժեր անել եւ ունենալ կայունություն: Բավական էր, որ թուրքերը մի տեղ ճնշում գործադրեին, որպեսզի նրանց մարտունակությունն ընկներ եւ տիրեր խուճապ:

Դեկտեմբերի վերջերին Երզրնկա եկավ Հայոց Ազգային խորհրդի պատգամավորությունը (Զավեն եպիսկոպոսը, գնդապետ Թորգոմը եւ ուրիշներ), որոնք թուրքեստանյան վաշտերին խոստացան, որ նրանք հետ կբաշվեն թիկունք հետագա կազմավորման համար, միայն թե նրանք մնային Երզրնկայում մինչեւ 1918թ. հունվարի 6-ը, երբ որ Երզրնկա, նրանց փոխարինելու կզան 1-ին հայկական հրաձգ. զունդը եւ Էրզրումի զունդը Թորգոմի հրամանատարությամբ:

... Բանակի հրամանատարն Էրզրումում մշտակազ նստած անտեղյակ էր, թե ինչպիսին է իրադրությունը ռազմաճակատում ռուսական զորքերի հեռանալուց հետո եւ նրա մոտ այնքան վատ էր դրված հետախուզությունը, որ նա նույնիսկ չգիտեր թուրքերի մտադրության մասին մեր զորքերի նահանջից հետո: Վերն ասած ամենից բացի, ռուսական բոլոր զորամասերի ռազմաճակատից հեռանալուց հետո, տարբեր սանիտարական հաստատություններում ծառայող մարդիկ, բնականաբար, որոշեցին իրենց ընկերների ետեւից նահանջել թիկունք: Այդ հաստատություններում նման անկայուն մարդկանցից օգուտ սպասել չէր կարելի: Այդ եւ թուրքերի հարձակումը կանխատեսելով, բանակի հրամանատարն ինքը պետք է ռազմաճակատը թեթեւացներ սանիտարական հաստատությունների եւ պահեստների ավելցուկից: Դրանք եւ մյուսներն սպասարկում էին գրեթե երեք կորպուսների՝ իրենց օժանդակ հաստատություններով, իսկ այդ ժամանակ հունվարին նույնիսկ ամբողջ ռազմաճակատում մեկ կորպուս առկա չէր եւ չէր էլ կարելի հույս դնել հետագայում նոր ուժերի հոսքի վրա, քանի որ գլխավոր ռազմաճակատը հանձնվել էր հայերին եւ այդ արդեն հայտնի էր բոլորին ու հատկապես բանակի հրամանատարին, որն ամբողջ ժամանակ միայն հայերից էր պահանջում համարում ուղարկել այդ ռազմաճակատ՝ հայկական զորքերի պաշտպանության համար:

Հայկական զորամասերում էլ նույնպիսի տրամադրություն կար, ինչպիսին հեռացած ռուսական զորքերի մոտ էր՝ ռազմաճակատից փութով հեռանալ թիկունք:

Երզնկայի ջոկատի դիրքերի տեղամասը ձգվում էր Երզնկայից 40 վերստ հյուսիս-արեւմուտք գտնվող փոքրիկ խաչով նշված լեռնաշղթայից, մինչեւ Ֆամ գյուղից 30 վերստ արեւելք գտնվող վայրը (նազմաճակատի ընդհանուր երկարությունը մինչեւ 300 վերստ էր): Եվ դա պետք է պաշտպանեին մոտ 2300 սպիւն-թորք:

Երզնկայի ջոկատից հյուսիս պետք է տեղաբաշխված լինեին վրացական զորամասերը, իսկ դեպի արեւելք՝ Խնուսի ջոկատը: Փաստորեն, ընդհուպ մինչեւ Տրապիզոն վրացական զորամասեր չկային: Կիլիկիո գյուղում նիստեր էր անում զինադադարի խառը հանձնաժողովը, որը ներկայացված էր 2 ռուս սպաներով եւ մի քանի կազակներով, իսկ թիկունքում՝ Բաբերդ քաղաքում գտնվում էր Սեպուհը 50 հեծյալներով: Ահա գլխավոր ռազմաճակատում մեր ունեցած բոլոր ուժերը թուրքերի հարձակման անցնելուց առաջ: Եվ ռազմական գործին քիչ տեղյակ տաք գլուխները Հայոց Ազգային խորհրդի որոշ անդամների պաշտպանական ոգով [Այդպես է տեքստում], ուզում էին, եւ ամբողջ ժամանակ համառորեն պահանջում, պահել ամբողջ ռազմաճակատը: Եթե, իհարկե, այդ՝ ամենին ավելացնելու լինե՞նք ռազմաճակատի պաշտպանների վատ տրամադրվածությունը, որոնք, փոքր բացառությամբ գրեթե բացարձակապես տոգորված չէին հայրենասիրության ոգով, ապա յուրաքանչյուրին հասկանալի կդառնա, թե ինչպիսի աղետալի վիճակ էր ստեղծվել գլխավոր ռազմաճակատում թուրքերի հարձակումից առաջ եւ, մասնավորապես, իհարկե, հայերի համար:

Երզնկայի ջոկատը տեղաբաշխված էր հետեւյալ ձեւով՝ Երզնկա-Ավագ խճուղու վրա Երզնկայից 40 վերստ դեպի արեւմուտք, Չարդախլու գյուղում, կային 30 հեծյալներ երեք ռուս սպաների հետ, որոնք հատուկ նշանակված էին ընդունելու համար թուրք սպաներին, որոնք գրեթե ամեն օր զինադադարի պատրվակով հայտնվում էին մեր դիրքերում: Նրանց թիկունքում՝ Խար-Խանի զորահանգրվանում, որը Երզնկայից 20 վերստ արեւմուտք էր, տեղաբաշխված էին կես վաշտ կամավորներ: Կամախ քաղաքում գտնվում էին կես վաշտ կամավորներ մի քանի հեծյալ կամավորների հետ: Երզնկայից հարավ՝ Եփրատի աջ ափին, դերսիմի քրդերի գյուղերում տեղաբաշխված էր կամավորների 1 վաշտ: Այդ վաշտը դիրքերում կանգնած էր մինչեւ հունվարի մեկը, որովհետեւ այդ ժամանակ քրդերը հարձակվեցին վաշտի վրա, սպանվեցին 2 եւ վիրավորվեցին 3 կամավորներ, բայց, վաշտը չնահանջեց, այլ կենտրոնացավ մի կետում: Նկատի առնելով, որ դերսիմի քրդերը շատ լավ զինված էին ինչպես թուրքական, այդպես էլ ռուսական հրացաններով (դիրքերը թողնելիս ռուսական զորամասերը քրդերին չնչին զներով վաճառել էին զենքը եւ այդ կերպ վերջիններիս մոտ հայտնվել էին մեծ քանակու-

թյամբ հրացաններ եւ փամփուշտներ) եւ դրանից բացի նրանց քանակը բավական շատ գերազանցում էր Երզնկայի ջոկատի ամբողջ կազմը, ջոկատի սպայակույտի կողմից որոշվեց համաձայնության գալ դերսիմի քրդերի հետ, որպեսզի նրանք չհարձակվեն ջոկատի զորամասերի վրա: Գլխավոր շեյխի, նրա եղբայր Մուսա աղայի մոտ գործողվեց ջոկատային բժիշկ Բաղ-դասարյանը, որը քրդերի հետ կնքեց հետեւյալ համաձայնությունը. նրանց գյուղերում տեղաբաշխված մեր վաշտը հետ է քաշվում Եփրատի ձախ ափը եւ հետագայում հայկական զորամասերը չպետք է անցնեն գետի աջ ափը, եւ հետագայում հայկական զորամասերը չպետք է անցնեն գետի աջ ափը, Երզնկան քրդերին տալիս է նրանց անհրաժեշտ պարենամթերքը, քրդերն էլ խոստանում են չհարձակվել հայկական զորամասերի վրա եւ, նույնիսկ, հնարավորության չափով օգնել ընդդեմ թուրքերի: Այդ համաձայնությունից հետո Եփրատի աջ ափին կանգնած վաշտը կենտրոնացվեց Երզնկայում:

Երզնկա-Էրզրում խճուղու զորահանգրվաններում տեղաբաշխված էր կամավորների 1 վաշտ, Խանի զորահանգրվանում՝ դասակ, Չեյիկի զորահանգրվանում՝ կես վաշտ եւ Չորսի զորահանգրվանում՝ դասակ: Նկատի առնելով, որ մինչեւ հունվարի 7-ը Ազգային խորհրդի անդամների խոստման համաձայն Երզնկա փոխարինելու չեկան ոչ 1-ին հայկ. հրաձգ. գունդը, ոչ էլ Էրզրումի գունդը Էրզրումից եւ Էրզրումի հետ ինչպես հետախոսային, այնպես էլ հեռագրային, հավասարապես եւ խճուղային կապը խզվեց (քանի որ քրդերը զբաղեցրել էին Երզնկա-Էրզրում խճուղու կողքերի բարձրությունները եւ ոչ ոքի չէին թողնում անցնելու), ապա կապը զորահանգրվանների հետ պահվում էր միայն գիշերները եւ մինչեւ Չորսի զորահանգրվան, ավելի հեռուն՝ Բիջանի ու Մամուխաթունի հետ չէր հաջողվում կապվել նույնիսկ գիշերները, քանի որ քրդերը պարեկախումբ էին դրել հենց խճուղու վրա՝ Բունի կամրջի մոտ:

Թուրքեստանյան գնդերի վաշտերը հունվարի 8-ին հավաքվեցին եւ ուզում էին թողնել Երզնկան ու շարժվել դեպի Էրզրում: Համոզելուց եւ շուտ փոխարինելու խոստումներ տալուց հետո 5 վաշտ համաձայնվեց մինչեւ հունվարի 20-ը մնալ Երզնկայում, իսկ 2 վաշտեր (հենց հատկապես 5-րդն ու 6-րդը, որոնք առանձնացվել էին 19-րդ թուրքեստանյան հրաձգային գնդի կողմից) ոչ մի զնով չհամաձայնվեցին մնալ Երզնկայում եւ նույն օրը հեռացան դեպի Էրզրումի կողմը: Չոկատի սպայակույտի հրամանով այդ վաշտերի հետ հեռացան նաեւ ջոկատի նրանց սպաները, քանի որ ենթադրվում էր, որ վաշտերին դեպի Էրզրում ճեղքել-անցնելն այդքան էլ հեշտությամբ էր, որ վաշտերին դեպի Էրզրում ճեղքել-անցնելն այդքան էլ հեշտությամբ չի հաջողվի եւ սպաներին դժվար չի լինի նրանց համոզել. մնալ զորահանգրվաններից որեւէ մեկում մինչեւ Էրզրումից զորամասերի գալը, որով կապահովվեր ջոկատի թիկունքը:

Նկատի առնելով այդ երկու վաշտերի հեռանալը, Էրզրումի հետ կապի վերջնական խզումը եւ Երզնկա քաղաքի տեղացի թուրք բնակչության տրամադրության զգալի փոփոխությունները, հայերի նկատմամբ թուրքերի հանդուգն վարքագիծը (գիշերները առանձին զինվորների եւ հայ բնակիչների սպանություններ), ջոկատն սկսեց ուժեղացված տեմպերով ամրացնել ուսումնականը, որը տեղաբաշխված էր Երզնկա քաղաքից 2 վերստ հյուսիս-արեւմուտք՝ Տրապիզոնի խճուղու վրա: Ռազմավանը մեկ շաբաթվա ընթացքում լավ ամրացվեց, պարկերից կառուցվեցին լավ խրամատներ, մեծ քանակությամբ պարենամթերք եւ հրաձգային ուսումնականը հավաքվեց, այնտեղ էլ տեղադրվել էին ջոկատում եղած 2 լեռնային եւ 2 դաշտային հրանոթները: Ռազմավանն ամրացնելով ջոկատի սպայակույտը հույս ուներ քաղաքում ապստամբության եւ մարտի անհաջող ելքի դեպքում պաշտպանվել այնտեղ (իսկ այդ ժամանակ Երզնկայում գեներ կրելու ընդունակ ոչ պակաս 1000 թուրք կար) եւ երկրորդ՝ զինադադարը խախտվելու եւ թուրքական կանոնավոր զորքերի Երզնկա շարժվելու դեպքում ջոկատը պետք է մարտ մղեր ուսումնականում, անհաջողության դեպքում նահանջելով դեպի Տրապիզոն:

Երզնկայից մեկնած 5-րդ եւ 6-րդ վաշտերը, քրդերի հետ աննշան ընդհարումներ ունենալով, հասան մինչեւ Չորսի գորահանգրվան, սակայն, այդ կետից, չնայած եռակի արտագործներին, նրանք չկարողացան ճեղքել-անցնել Բիջանի գորահանգրվան (որն արդեն գտնվում էր հարթավայրում): Երրորդ անգամ ծանր վիրավորվեց ավագ վաշտային հրամանատար պորուչիկ Սաֆարյանը եւ դրանից հետո վաշտերը մնացին Չորսում, ամենօրյա ընդհարումներ ունենալով քրդերի հետ: Այդ երկու վաշտերի կորուստները մինչեւ հունվար ամսի վերջը հաշվվում էին մինչեւ 35 սպանված եւ վիրավոր զինվորներ եւ 2 վիրավոր սպաներ:

Հունվարի 30-ին Չարդախլուում գտնվող սպաները (ոռուներ), իրենց մոտ եղած հեծյալներին (կամավորներին) ուղարկեցին թիկունք պարենամթերք բերելու, մի մասին էլ ուղարկեցին Կամախի կողմը եւ նրանց մոտ մնացին միայն երկու հեծյալ:

Երեկոյան կողմ, երբ հեծյալները պարենամթերքով վերադարձան, ապա նրանք գետնափորների մոտ տեսան բազմաթիվ հեծյալ եւ հետիոտն ասկյարների, նրանց ասելով ոչ պակաս 500-600 հոգու: Նրանք նոր էին շրջվել եւ երեկոյան հասել Իսր-Խան, որտեղ տեղաբաշխված էր կամավորների կես վաշտ եւ այդտեղից ջոկատի սպայակույտ հաղորդեցին իրենց տեսածի մասին: Այդ տեղեկությունն ստանալուն պես ջոկատի պետը հեռախոսի մոտ կանչեց Չարդախլուն, որտեղից ջոկատի սպայակույտին կցված կապի սպան հաղորդեց, որ կամավորների հաղորդած տեղեկությունները կեղծ են եւ որ

ցերեկը Չարդախլու են եկել մի քանի թուրքական սպաներ, մի քանի հեծյալների հետ: Դրանով ջոկատի սպայակույտը հանդարտվեց եւ ջոկատը գիշերն անցկացրեց կատարյալ հանգիստ:

Լուսադեմին Երզնկա եկան Իսր-Խանում եւ Չարդախլուում տեղաբաշխված կես վաշտ կամավորներ ու հեծյալներ, ովքեր ուղղակի լքել էին իրենց դիրքերը, եւ հայտարարեցին, որ թուրքերը շարժվում են դեպի Երզնկա եւ որ նրանք արդեն անցել են Իսր-Խանը ու սվյալ պահին գտնվում են Երզնկայից 10-15 վերստի վրա: Այդ տեղեկություններն ստանալուն պես սպայակույտը կարգադրեց զբաղեցնել դիրքերը, կամավորներին կարգադրվեց հրանոթներով զբաղեցնել ուսումնականը, իսկ թուրքեստանցիների 4 վաշտերին՝ դիրքեր գրավել Երզնկայից 2 վերստ արեւմուտք, Եփրատ գետի եւ Տրապիզոնի խճուղու միջեւ ընկած տեղամասում: Թուրքեստանցիների մեկ վաշտ Երզնկայի արեւմտյան ծայրամասում, հայկական թաղում, թողնվեց որպես պահեստազոր: Միաժամանակ ջոկատի սպայակույտից կամավորների երկու հեծյալ պարեկախումբ ուղարկվեցին. մեկը՝ Սվասի խճուղով, իսկ մյուսը՝ Տրապիզոնի խճուղով: Գուցե թե պարեկախմբերի պետերի անփորձության, կամ օրերով թամբին գտնվող հեծյալների հոգնածության պատճառով, շուտով երկու պարեկախումբն էլ հետ վերադարձան, հայտարարելով, որ թուրքերը չեն երեւում: Այդ տեղեկություններն ստանալով, ջոկատի հրամանատարը հրամայեց դիրքերում պահակային պաշտպանություն թողնել, իսկ մնացած վաշտերին քաղաքում հավաքել ճաշի:

Առավոտյան իրենց դիրքերը լքեցին Կամախ քաղաքում տեղաբաշխված կես վաշտ կամավորները եւ հայտնվելով Երզնկայում [հայտարարեցին որ] իրենք հակառակորդին չեն տեսել, բայց Չարդախլուի հեծյալներն իրենց հաղորդել են Սվասի խճուղով թուրքերի շարժման մասին:

Ցերեկվա ժամը 12-ին թուրքեստանյան վաշտերի դաշտային խոհանոցները հասցվեցին քաղաքի Արեւմտյան արվարձան, որտեղ երկու հերթով զինվորները ճաշեցին: Այդ օրը եղանակը խառն էր, ձյուն էր տեղում եւ այնպիսի մառախուղ էր, որ մի քանի քայլի վրա ոչինչ չէր երեւում, դրա համար էլ գումարտակի հրամանատարը, չվստահելով կամավորների բերած տեղեկություններին, ընտրեց 20 զինվորներ, առավելապես նախկին հետախույզներից եւ 2 փորձառու սպաներ եւ հանդերձավորելով նրանց սպայական եւ գումակային ձիերով, հրամայեց բաժանվել 1 սպայից եւ 10 զինվորից կազմված երկու պարեկախմբի եւ շարժվել՝ մեկին՝ Սվասի խճուղով, իսկ մյուսին՝ Կամախի խճուղով, մինչեւ հակառակորդին հանդիպելը, պարզել հակառակորդի ուժերը եւ դրանից հետո միայն ետ վերադառնալ: Հակառակորդի բացակայության դեպքում հասնել մինչեւ Կամախ ու Չարդախլու եւ այնտե-

դից գեկույցներ ուղարկել: Եղանակն աստիճանաբար լավացավ եւ մառախուղը ցրվեց: Յերեկվա ժամը մեկին Սվասի խճուղու պարեկախմբից ստացվեց առաջին գեկույցը, որ թուրքերի զորասյունը Իսր-Խանի կողմից մտել է Երզնկայից 6 վերստ արեւմուտք գտնվող հայկական գյուղը: Երեսուն րոպե անց ժամանեց պարեկախումբը, որը գեկուցեց, որ մինչեւ 3 գումարտակի ուժ ունեցող թշնամական զորասյունը դուրս է եկել վերը Աշտիկ քանդակի ուժ ունեցող թշնամական զորասյունը: Մի քանի րոպե անց ներկայացավ նաեւ Կամախի խճուղու պարեկախումբը, որը Երզնկայից 7 վերստի վրա տեսել էր մինչեւ մեկ գումարտակի չափ ուժ ունեցող թշնամական զորասյունը:

Այդ տեղեկություններն ստանալով, գումարտակի հրամանատարը վաշտերը դուրս բերեց դիրքեր, տեղադրեց գնդացիները եւ այդ մասին գեկույց ուղարկեց ջոկատի սպայակույտ:

Այդ ժամանակ ջոկատի սպայակույտում խորհրդակցություն էր գնում, քանի որ ռազմավանից գեկուցել էին, որ Տրապիզոնի խճուղու վրա, ռազմավանի վրա իշխող գերակշռող բարձունքներում, երեսացել են թուրքական զորամասեր եւ որ նրանք իրենց հետ հրանոթներ ունեն: Խորհրդակցությունում քննվում էր այն հարցը, թե արդյոք Երզնկայի տակ մարտն ընդունել, թե նահանջել առանց մարտի եւ հատկապես ուր նահանջել Տրապիզոն թե Էրզրում:

Նկատի առնելով, որ թուրքական զորքերի կողմից Տրապիզոն տանող ճանապարհն արդեն կտրված էր, ուստի հարկավոր էր կամ հակառակորդին դեն չարտել խճուղուց, կամ էլ դեն նետելով գումակը, անցնել լեռներով եւ ինչ որ տեղ Սելիմի լեռնանցքից այն կողմ դուրս գալ խճուղի: Առաջին հարցի վերաբերյալ որոշվել էր՝ մարտն ընդունել, հակառակորդի ուժերի գերակշռության դեպքում նրան պահել մինչեւ այն պահը, քանի դեռ Երզնկայի 5000 հոգի կազմող հայ բնակչությունը մեծամասամբ կանայք, երեխաներ եւ ծերեր, պատրաստ չեն լինի հեռանալու համար: Երկրորդ հարցի վերաբերյալ ոչ մի որոշում չէր հանվել, քանի որ ջոկատի պետը, սպայակույտի պետը եւ որոշ անձինք առաջարկում էին Տրապիզոն նահանջել շրջանց ճանապարհներով: Նրանք հայտարարեցին, որ Երզնկայից Բիջան, քրդերի կողմից զբաղեցրած 90 վերստանոց կիրճով, դեռ նաեւ ունենալով իրենց հետապնդող թուրքերին, ջոկատը չի կարող կտրել-անցնել եւ որ ամբողջ ջոկատը կամ կկտորվի կամ գերի կվերցվի: Գումարտակի հրամանատար Մուրադը եւ ուրիշներ էլ պնդում էին Էրզրում նահանջելու վրա, քանի որ ջոկատն իրավունք չունեւ բախտի քմահաճույքին թողնելու այն մի բուռ զինվորներին, ովքեր տեղաբաշխված էին զորահանգրվաններում, ինչպես նաեւ Էրզրում նահանջելով, ջոկատը նաեւ վստահ կլինեւ, որ ինչ-որ տեղ կարող

է հանդիպել որեւէ հայկական զորամասի, իսկ Տրապիզոն նահանջելիս նման հույսը կկորչեր: Այդ խորհրդակցության ժամանակ դիրքերում արդեն սկսվել էր հրաձգությունը, դրա համար էլ հապաղել չէր կարելի: Թուրքեստանյան վաշտերի գումարտակի հրամանատարը հայտարարեց, որ ինքը ըստ հնարավորին կկանգնեցնի հակառակորդին, իսկ նահանջի դեպքում իր վաշտերի հետ կքաշվի դեպի Էրզրում: Թուրքերը դանդաղ էին առաջանում, խորը ձյան պատճառով չէին կարողանում տարածվել, այլ առաջ էին շարժվում խմբերով, որի հետեւանքով թուրքեստանյան վաշտերի գնդացրային եւ հրացանային կրակից կորուստներ էին կրում եւ ի վերջո նրանք ստիպված եղան կանգ առնել եւ խրամատավորվել ձյան մեջ: Թուրքեստանյան վաշտերի դիրքերը լավ քողարկված էին, դրա համար էլ նրանք կորուստներ գրեթե չկրեցին: Յերեկվա ժամը 4-ին թուրքերը Տրապիզոնի խճուղու կողմից հարձակում սկսեցին ռազմավանի վրա: Չնայած այն բանին, որ ռազմավանը շատ լավ ամրացված էր, սակայն, այնտեղ գտնվող կամավորները կրակում էին շատ անաշխույժ, քանի որ այնտեղ գտնվող 3 վաշտ կամավորներից քաղաքում մնացել էին 160 հոգուց ոչ ավելի, որովհետեւ մնացածները վազել էին իրենց տները եւ իրենց ընտանիքները պատրաստում էին հեռանալու: Թուրքերի համար այսպիսով շատ հեշտ էր ռազմավանը գրավելը: Միայն Մուրադին հաջողվեց իր մի քանի ձիավորներով ինչ-որ կերպ մի քանի րոպե կասեցնել թուրքերի ճնշումը, մինչեւ որ 4 հրանոթները դուրս բերվեցին ռազմավանից եւ ուղարկվեցին Երզնկա:

Այդ հրանոթները ողջ մարտի ընթացքում ոչ մի կրակոց չարձակեցին, քանի որ անձնակազմը բաղկացած էր անվարժ կամավորներից եւ միակ հրետանավորը սոսկ մի պրապորշիկ էր:

Թուրքերի կողմից ռազմավանի գրավումից հետո թուրքեստանյան վաշտերի վիճակն անտանելի դարձավ, քանի որ թուրքերը հայտնվեցին թեւում եւ այնտեղից սկսեցին նրանց գնդակոծել գնդացրային կրակով, ուստի վաշտերը հավաքվեցին քաղաքի արեւմտյան ծայրամասում եւ տեղավորվեցին քաղաքի ծայրամասերի ցանկապատերի մոտ: Թուրքերը հարձակումն ըսկրեցին արդեն ավելի վստահ, սակայն, կորուստներ տալով, առաջանում էին չափազանց դանդաղ:

**ԹՈՒՐՔԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԵՐԶՆԿԱՏԻ ԳՐԱՎՈՒՄԸ
ԵՎ
ՄԵՐ ԶՈՐՔԵՐԻ ՆԱՀԱՆՁՐ ԴԵՊԻ ԷՐԶՊՈՒՐ**

Ժամը 5-ի մոտերքը ջոկատի պետից հրաման ստացվեց անհապաղ նահանջել, քանի որ փախստականներն արդեն հավաքվել էին քաղաքի արեւելյան արվարձանում, Էրզրումի խճուղու վրա եւ արվարձանից թուրքերն առաջ էին շարժվել ու գրավել քաղաքի հյուսիսային ծայրամասը: Այդ հրամանն ստանալուն պես, թուրքեստանցիների 4 վաշտեր դուրս բերվեցին դիրքերից եւ ուղարկվեցին Էրզրումի խճուղի, մնացած զորամասերին միանալու, իսկ մեկ վաշտ մնաց քաղաքի Արեւմտյան արվարձանում եւ կասեցրեց թուրքերի առաջխաղացումը մինչեւ որ ջոկատն իր հետ ունենալով մինչեւ 5000 փախստականներ եւ նրանց ոչ պակաս 1000 սայլակառքեր ու սայլեր, կկարողանար ձգվել Էրզրումի խճուղով: Թուրքերի ճնշման տակ, այդ վաշտը դանդաղ նահանջում էր կրակոցներ արձակելով եւ երեկոյան ժամը 6-ի մոտերքը դուրս եկավ քաղաքի արեւելյան արվարձան՝ պարենամթերքի պահեստի մոտ, որը գտնվում էր Էրզրումի խճուղու վրա: Դերսիմի քրդերը, մի քանի հազար հոգով, գինված ու անզեն կանգնած էին Եփրատի այն կողմում, սպասելով մեր հեռանալուն, որպեսզի թալանեն պարենամթերքի պահեստը: Այդպես էլ եղավ. հենց որ վերջին վաշտը կես վերստ հեռացավ պահեստից, մթնշաղում նշմարվեց, թե ինչպես քրդերի հսկայական զանգվածն անցավ Եփրատի ձախ ափը եւ շարժվեց դեպի պարենամթերքների պահեստներ: Երզնկայի կողմից, 10-15 բուսե անց, ուժեղ հրաձգություն էր լսվում, որը տեւեց ոչ պակաս երկու ժամ: Ուղարկված հեծյալ հետախույզները զեկուցեցին, որ պարենամթերքի պահեստների մոտ տեղի է ունենում մարտ քրդերի ու թուրքերի միջեւ: Չոկատը, վստահ լինելով, որ թուրքերը չեն կարող անհապաղ սկսել հետապնդումը, լրիվ կարգով հետ քաշվեց Խանի գորահանգրվան, որտեղ եւ հասավ գիշերվա ժամը 11-12-ի մոտերքը:

Երզնկայի տակ մղված մարտում ջոկատի կորուստներն էին՝ Թուրքեստանյան վաշտերից՝ սպանվածներ ու վիրավորներ՝ 22 զինվոր եւ 1 սպա, իսկ կամավորներից մինչեւ 10 մարդ:

Երզնկայի բնագծերից եւ Երզնկա քաղաքից ջոկատի նահանջի պատճառի վերաբերյալ բանակի սլայակույտի պետի հարցմանն ի պատասխան 1918 թվականի փետրվարի 3(17)-ին գնդապետ Մորելը հետեւյալն է գեկուցել. «Ձեր հեռագիրը Երզնկայի ջոկատի կողմից դեպի Քարաշիկ (Քարաշիլու) հետ քաշվելու մասին իմ կողմից ստացվել է փետրվարի 4(18)-ին՝

Չորսում: Նահանջը Երզնկայից իմ կողմից սկսվել է հետեւյալ հանգամանքների բերումով. Չարդախլուի դիմացի մեր պահակակետը փետրվարի 12-ին, ժամը 18-ին գնդակոծվել է թուրքական հեծյալ պարեկախմբի կողմից եւ միեւնոյն ժամանակ հայտնաբերվել են հյուսիս-արեւելքից ուղեկալը շրջանցող հարյուր թուրք ասկյարներ եւ 18 սովարիներ: Գնդակոծվելով եւ կասեցնելով թուրքերի առաջացումը թվով 200 ասկյար եւ 20 սովարի, պահակակետը հետ քաշվեց դեպի Երզնկայի հարավ-արեւմտյան ծայրամաս: Ժամը 7-ին նույն պահակակետի կողմից նկատվել է Կամախի խճուղով դեպի Երզնկա շարժվող թուրքերի ասկյարներից կազմված զորասյունը: Չհասած քաղաքին, 8 վերստի վրա, այդ զորասյունը Երզնկայի հարավ-արեւմտյան ծայրամասի կողմից 7-8 վերստ շարժվեց Խաշ-Դաշ-Ոսկերտ գյուղերի ուղղությամբ: Թուրքերի նկատմամբ հետագա հսկողությունը դժվարացել է մանախուղի ու ձյան պատճառով: Մոտ ժամը 14-ին, շարունակվող ձյունոտ եղանակի պայմաններում, քաղաքից 3-4 վերստի վրա, նկատվեցին նրա արեւմտյան եւ հարավային ծայրամասերի վրա հարձակվող թուրքերի զորաշղթաները: Ելնելով վերը շարադրվածից, ինչպես նաեւ հրաձգային վաշտերի ի հայտ բերած անհուսալիությունից, որն արտահայտվել է դրանցից երկուսի կողմից մարտական տեղամասեր գնալուց հրաժարվելու եւ երրորդի կողմից ինքնագլուխ կերպով պարեկությունը լքելու մեջ, ես ստիպված եղա կարգադրություն անելու Երզնկայից հետ քաշվելու մասին՝ քաղաքի արեւմտյան, հարավային եւ հյուսիսային ծայրամասերում տեղաբաշխված վաշտերի պաշտպանության տակ: Չոկատը Երզնկայից դուրս եկավ ժամը 15-ին, երկու զորասյուններով: Չոկատը Չելիկ հասավ փետրվարի 14-ին, ժամը երեքին: Անցման ժամանակ ջոկատը Նորկախ եւ Իրադուկ գյուղերից եւ նրանց հարող բարձունքներից, գնդակոծվեց քրդերի կողմից: Այդ անցման եւ նրանց հարող բարձունքներից, գնդակոծվեց քրդերի կողմից: Այդ անցման ժամանակ ջոկատի տված կորուստներն են՝ 6 սպանված եւ 5 վիրավոր հրաձիգ՝ Երզնկայի տակ մղված մարտի ժամանակ: Փետրվարի 14-ին ջոկատը շարունակեց նահանջել Չելիկից դեպի Չորս, սկսելով այդ ժամը 14-ին: Անցման ժամանակ ջոկատը գնդակոծվեց Եփրատի կիրճի երկու կողմերից, 5-20 հոգիանոց քրդերի խմբերից, որոնք ցրվեցին մեր հրացանային եւ հրանոթային կրակից: Վերին աստիճանի սառնամանիքի եւ ուժեղ քամու պայմաններում 6 ժամյա գրեթե չընդհատվող մարտից հետո ջոկատը ժամանեց Չորս, կորցնելով հրաձիգներից ու կամավորներից թվով 25 սպանված եւ 60 վիրավոր եւ սպանված ու վիրավոր 38 ձիեր: Բոլոր հրանոթները չորս դաշտային եւ մեկ լեռնային եւ գումակի կեսը, ձիերի կորստի եւ դրանք ուրիշներով փոխարինելու անհնարինության, քրդերի կողմից շարունակվող գնդակոծության, այդ հրանոթները, մինչեւ դրանց աստիճանական դուրս

հանունը, պաշտպանելուց հրաձիգների ու կամավորների հրաժարվելու հետևանքով, լքվեցին, ընդ որում հրանոթներից հանված են փակադակները: Այդ անցման ընթացքում ցրտահարվել էին մինչև 50 զինվոր ու 200 փախըստական: Փետրվարի 2-ի լույս 3-ի գիշերը ջոկատը Չորսից անցավ Բիջան, առաջինից ճանապարհվելով կես գիշերին եւ ժամանելով երկրորդ ժամը 7-ին: Մեկնելու իսկական ժամանակի վերաբերյալ քրդերին մոլորության մեջ զցելու նպատակով, վերջինս սկզբնապես որոշվել էր փետրվարի 3-ին ժամը 8-ին, որը հայտնի էր տեղական քրդերին: Չորս-Բիջան խճուղու մոտ 30 սածեն երկարության կամուրջը Չորսից մեր հետ քաշվելուց մի քանի ժամ առաջ այրվել էր քրդերի կողմից, ըստ երեւոյթին այդ նպատակի համար չափազանց հարմար վայրում մեր ջոկատի համար ծուղակ սարքելու նպատակով: Կամրջի ավերման հետևանքով ջոկատն ստիպված էր դեն գնտել ողջ անվավոր գումակը, ինչպես նաեւ լեռնային հրանոթներն ու զընդացիրները: Վիրավորներն ու ցրտահարվածները կամրջի կողքով անցկացվեցին ձեռքերի վրա, իսկ այնուհետեւ փոխադրվեցին Բիջանից կանչված սայլակառքերով: Վիրավորների ու ցրտահարվածների փոխադրումը շարունակվեց մինչև ժամը 9-ը, կամավորների պաշտպանության ներքո, քանի որ այդ փոխադրության պաշտպանությունն ապահովելու համար նշանակված հրաձգային վաշտերը հրաժարվեցին այդ առաջադրանքից: Ժամը 9-ին փոխադրությունը դադարեց զանազան կողմերից հայտնված մեծաքանակ քրդերի կողմից կամավորների գնդակոծման հետևանքով: Մինչ այդ արդեն բոլոր վիրավորներն ու ցրտահարվածները, 200 զինվոր եւ 300 փախստական ու զգալի թվով սպաներ, բացի 30 փախստականից, տեղափոխվել էին, այդ ընթացքում այլ կորուստներ չեղան: Ժամը 11-ին տեղեկություններ ստացա այն մասին, որ Ֆամում ու Բարդակչիում գտնվող մեր զորամասերը շրջապատված են այդ զորահանգրվաններում գտնվող թուրքերի կողմից: Մեր կայազորներին հրաման տրվեց հետ քաշվելու Բաշքոյ-Էրզրում դեպի Քարջիլու: Այդ հրամանը կատարելու ուղարկված հանձնակատարները հանդիպելով Աղաշի-Նագերի ճանապարհին՝ Բունի կամրջի մոտ դրված թուրքական պահակակետերի կրակին չկարողացան թափանցել Բարդակչի: Երզնկայի, Խանի, Սուր-Փիրիների, Չելիկի ու Չորսի կայազորները ձեր հրամանի համաձայն ժամանեցին Քարջիլու: Փետրվարի 4-ին ժամը 2-ին Բաբերդից կայազորի դեպի Կուզ-Ռագի հետ քաշվելու եւ Բաբերդի վրա թուրքական զգալի ուժերի հարձակման մասին բանակի սպայակույտի հեռագիրը ստանալուն պես, իմ կողմից հրաման տրվեց Երզնկայի ջոկատին, ներառյալ նաեւ Քարջիլուի ու Բիջանի կայազորներին հետ քաշվել Մամախաթուն, ուր ջոկատը միախմբվեց փետրվարի 4-ի երեկոյան: Թուրքերի կողմից Բաբերդը գրավե-

լու, Էրզրումի վրա նրանց հարձակման եւ Մամախաթունի ու Քարջիլուի վրա քրդերի նախապատրաստվող հարձակման մասին Քարջիլուում տարածվող ասեկոսների հետևանքով հրաձիգների ու կամավորների տրամադրությունը, մարտունակության առումով բավականաչափ նվազել է, նկատելի է շուտափույթ թիկունք քաշվելու ձգտում: Մեծամասամբ հիվանդ ու ցրտահարված սպաների ոգին նշանակալիորեն թուլացել է: Աշխատում են կապիտան Կաֆիեվի եւ ոգով զորեղ այլ սպաների օգնությամբ կազմավորել, թեկուզեւ ոչ մեծ, բայց հուսալի զորամաս Մամախաթունի պաշտպանության համար եւ կամավորների ու զինվորների մնացած զանգվածին հետ պահել ինքնագոյութւ կերպով թիկունք հեռանալուց: 4(17) փետրվարի, ժամը 15: Ու128: Գնդապետ Մորել»:

Այդ ծանր նահանջն ավելի մանրամասնորեն, իր նոթերում, նկարագրում է դրա նախկին մասնակից, թուրքեստանյան վաշտերի հրամանատար, կապիտան Հասանփաշայանը, սակայն, թուրքեստանյան վաշտերի գործողությունների վերաբերյալ իհարկե մեծ աչառությամբ վերաբերվելով իր հրաձիգներին (կապիտան Հասանփաշայանի հուշերը նույնպես պահպանվում են ՀՀ ԿՊՊԱ, Ֆ. 45, գործ 38):

«Ձնայած հոգնածությանը, փախստականների թախանձանքով, որոնք ձգտում էին որքան կարելի է շտապով հեռանալ Երզնկայից, ջոկատի պետը գիշերվա ժամը 2-ին հրամայեց շարժվել Չելիկի զորահանգրվան, որտեղ գտնվում էին կես վաշտ կամավորներ, կորպուսի պարենամթերքի եւ հրետանային պահեստների պաշտպանության համար: Գիշերվա ժամը 2-ին ջոկատը հետեւյալ կարգով շարժվեց դեպի Խանի զորահանգրվան՝ առջեւից զնում էին թուրքեստանցիների 2 վաշտեր, նրան հետեւից՝ հրետանին, գումակներն ու փախստականներն իրենց կահկարասիներով, նրանց հետեւից զնում էին թուրքեստանցիների 2 վաշտեր, իսկ որպես վերջապահ՝ թուրքեստանցիների 1 վաշտ Մուրադի հեծյալների հետ միասին: Կամավորական վաշտերը ցրվել էին եւ յուրաքանչյուրը զնում էր իր ընտանիքի հետ: Ծարաւյունը տարածված էր 6-7 վերստի վրա: Լուսադեմին, երբ շարասյան զլուխը մտել էր Չելիկ գյուղը, քրդերը լեռներից, խճուղու ինչպես աջ այնպես էլ ձախ կողմերից ու թիկունքից սկսեցին գնդակոծել շարասյունը եւ նեղել վերջապահին: Ելնելով այն բանից, որ Չելիկում պատասպարվելու համար անհրաժեշտ քանակությամբ շինություններ չկային, փախստականների մեծամասնությունը տեղավորվեց բաց երկնքի տակ եւ քրդերի կրակից սկսեցին կորուստներ տալ, դրա համար թուրքեստանցիների 2 վաշտեր առաջադրանք ստացան քրդերին դուրս քշել Չելիկ գյուղի արեւմտյան եւ հյուսիսային բարձունքներից: Չոկատի պետը որոշեց Չելիկում մնալ մինչև երեկո, զորամասերին հանգիստ տալու համար, եւ Չորս շարժվել մթնով, քանի որ Չելիկում

ստացված տեղեկությունների համաձայն նեղ կիրճում, որտեղից անցնում էր Չելիկ-Չորս խճուղին, քրդերը գրավել էին շատ հարմար դիրքեր եւ ցերեկով շարժվելը մեծ կորուստների հետ էր կապված: Երկու ժամ անց թուրքեստանցիների 2 վաշտերին հաջողվեց բարձունքներից դուրս քշել քրդերին, կորցնելով ընդամենը 5 զինվոր եւ գրավել բարձունքները, որից հետո ջոկատի տեղաբաշխման վայրը քրդերը գնդակոծում էին Եփրատի աջ ափից միայն: Դուրս քշել նրանց այդ բարձունքներից ոչ մի կերպ հնարավոր չէր, քանի որ ոչ մի դեպքում չէր կարելի ծանծաղուտով անցնել Եփրատը, իսկ ջոկատի զորամասերի հրացանային կրակը նրանց վնաս չէր պատճառում, քանի որ նրանք լավ քողարկված էին: Նույնիսկ լեռնային հրանոթներից արձակված մի քանի կոտորակառումները նրանց վրա չազդեցին: Չելիկ գյուղում փոխհրաձգության ժամանակ ջոկատը կորցրեց միայն 3 վիրավոր զինվոր, սպանվեցին ու վիրավորվեցին մինչև 15 փախստականներ, սակայն ձիեր ու եզներ շատ կոտորվեցին: Փախստականների մեջ ահավոր խուճապ էր, նրանք ձգտում էին առանց կանգ առնելու շարժվել եւ շուտ դուրս գալ կիրճից, դրա համար էլ նրանք բազմիցս խնդրեցին ջոկատի պետին՝ չսպասելով մութն ընկնելուն հետոնալ Չելիկից: Փախստականների խնդրանքները չբավարարվեցին սոսկ նրան համար, որ այդպիսի շարժումը կապված էր մեծ ռիսկի հետ: Փախստականները, որ այլեւս չէին ուզում մնալ Չելիկում, հրդեհեցին պարենամթերքի պահեստը, որտեղ մինչև 3000000 մսի պահածոներ եւ այլ սննդամթերք կար, դրանով ստիպելու համար ջոկատի պետին հրաման տալու: Չնայած պայթող տուփերի խլացուցիչ աղմուկին եւ անասելի ծխին՝ մեկնման հրաման չտրվեց, այնժամ փախստականները գաղտնագողի մոտեցան հրետանային պահեստներին, որտեղ պարեկություն էին անում կամավորները եւ վերջիններիս օգնությամբ հրկիզեցին այդ պահեստը: Նկատի առնելով, որ պայթյունը սպառնում էր ավերել ողջ Չելիկ գյուղը, ապա անմիջապես հրաման տրվեց հնարավորին չափ արագ մեկնել Չելիկից, թուրքեստանցիների 2 վաշտերին հրամայված էր դիրքերից ելնել պահեստների վերջնական պայթյունից հետո, դրանից հետո միայն միանալ ջոկատին: Ջոկատը Չելիկից շարժվեց ցերեկվա ժամը 1-ին, այն նույն կարգով, ինչպես էր Խանի զորահանգրվանից գալուց: Վերջապահ վաշտը դեռ կես վերստ չէր հեռացել Չելիկից, երբ սկսվեցին խլացուցիչ պայթյուններ, որոնք շարունակվեցին ոչ պակաս 30-40 րոպե: Այդ ժամանակ շարասյան գլխամասում արդեն գնում էր փոխհրաձգություն: Քրդերը շարասյունը զընդակոծում էին երկու թեւերից ու ճակատից: Առաջապահը հրաձգությամբ պաշտպանվում էր, սակայն, առաջ շարժվելն արդեն դժվարացել էր, քանի որ քրդերը խաշաձեւ կրակով հիանալիորեն գնդակոծում էին խճուղու մի

կամրջակ, եւ, ով ոտք էր դնում կամրջին կամ անպայման վիրավորվում էր կամ սպանվում: Միայն վերջապահից 5-6 զինվորի հաջողվեց վազքով կտրել կամուրջը եւ ամրանալ կամրջից այն կողմ: Փախստականները չիմանալով բանն ինչն է, սեղմեցին առաջին շարքերին եւ այդ կերպ ամբողջ շարասյունը հոծ զանգվածով կանգ առավ խճուղու ինչ-որ 1-2 վերստի վրա եւ խոնված այդ խմբի վրա արձակված քրդերի յուրաքանչյուր գնդակ գոր չէր անցնում: Ջոկատի սպայակույտը շփոթվեց եւ ջոկատի դրության վերաբերյալ տեղեկության համար նույնիսկ մարդ չուղարկեց վերջապահ, որի հետեւանքով էլ վերջապահը դեմ առավ շարասյան պոչին, որով էլ ջոկատի համար ավելի վատ դրություն ստեղծվեց: Թուրքեստանյան վաշտերի հրամանատարը, որը վերջապահ վաշտերի հետ էր, որպեսզի իմանա թե բանն ինչ է, մի կերպ կտրեց հասավ շարասյան գլուխ եւ այնտեղ տեսնելով իրավիճակը, հրամայեց երկու վաշտի 2-ական գնդացիներով պորուշիկ Իշխանյանի հրամանատարությամբ, բարձրանալ խճուղուց հյուսիս ընկած բարձունքները, դուրս քշել քրդերին այդ բարձունքներից, որից հետո գնդացրային եւ հրացանային կրակով գնդակոծել Եփրատի աջ ափի բարձունքներին թառած քրդերին: Միաժամանակ մյուս առաջապահ վաշտին հրաման տրվեց ինչ էլ որ լինի մեկ-մեկ վազանցել կամուրջը՝ դաշտային հրանոթների կրակի պաշտպանության տակ, որոնք ջոկատի հրամանատարի հրամանով տեղավորվել էին հեճ խճուղու վրա եւ սկսել գնդակոծել Եփրատի աջ ափի բարձունքները, սակայն, անձնակազմի եւ հեճ հրամանատարի անփորձության հետեւանքով մեծ վնաս չպատճառելով հակառակորդին: Մի քանի կրակոցից հետո հրանոթները լոցեցին, քանի որ անձնակազմից, սպանված ու վիրավոր, շարքից դուրս եկան 5 հոգի, իսկ հրանոթը ետ գլորքի ժամանակ ճգմել էր դասակի հրամանատար ԲեկՆազարյանի ոտնաթաթը:

Առաջապահ վաշտը վերջապես անցավ կամուրջն ու առաջ շարժվեց, որով բարելավվեց փախստականների շարասյան լարվածությունը վերացնելու հնարավորությունը: Մեկ կամ մեկուկես ժամ անց պորուշիկ Իշխանյանը կորցնելով 30 սպանված ու վիրավոր զինվոր, քրդերին դուրս քշեց խճուղու հյուսիսի բարձունքներից եւ գնդացրային կրակ բացեց Եփրատի աջ ափին տեղավորված քրդերի վրա: Քանի որ պորուշիկ Իշխանյանի կողմից գրաված բարձունքներն իշխում էին աջափնյա բարձունքների վրա, ապա զընդացրային կրակն ստիպեց քրդերին փոխելու իրենց դիրքերը, նրանց կրակը մի փոքր թուլացավ, որը հնարավորություն տվեց շարասյանը վերցնելով վիրավորներին արագորեն առաջ շարժվել: Գրեթե մինչև բուն Չորս գյուղը, քրդերը բարձունքներից գնդակոծում էին շարասյունը, բայց ջոկատն արդեն, աղջամուղջն իջնելու եւ խաշաձեւ կրակի բացակայության պատճառով մեծ

կորուստներ չտվեց: Չհասած Չորսից 2 վերստ հեռավորության վրա, երբ գրեթե արդեն մթնել էր, առաջապահը հանդիպեց Չորս գյուղում գտնվող թուրքեստանցիների 6-րդ վաշտին: Վաշտը լսելով հրանոթային եւ հրացանային կրակոցներ Չելիկի կողմից, դուրս էր եկել դիմավորելու եւ մարտ մղելով առաջ շարժվել 2 վերստ, կորուստ տալով 8 վիրավորներ: Երեկոյան ժամը 8-ի մոտերքը ջոկատի առաջապահը մտավ Չորս, իսկ ժամը 9-10-ի մոտերքը հավաքվեց նաեւ ջոկատի ողջ շարասյունը: Պարեկային պաշտպանություն հաստատեցին Չորսում տեղաբաշխված թուրքեստանցիների 5-րդ եւ 6-րդ վաշտերը, այնպես որ 50 վերստանոց դժվարին անցումից հետո ջոկատը կարող էր հանգստանալ: Ցավոք Չորսում բոլոր զինվորների ու փախստականների համար շինություններ չճարվեցին ու նրանց մի մասը ստիպված եղավ տեղավորվելու ձյան վրա: Չորսում գտնվող թուրքեստանցիների 5-րդ եւ 6-րդ վաշտերը, մինչեւ ջոկատի ժամանելը ամեն օր բախումներ էին ունեցել քրդերի հետ, քանզի Չորսը փոխված էր ներքեւում, իսկ գյուղի վրա իշխող բարձունքներն զբաղեցրել էին քրդերը: Քրդերը ձգտում էին գրավել Չորսը, որտեղ տեղաբաշխված էին պարենամթերքի ոչ մեծ պահեստներ, բայց դա նրանց ոչ մի կերպ չէր հաջողվում, քանի որ վաշտերը տների մեջ հրակնատներ էին պատրաստել եւ լիովին քողարկված էին. նրանք կորուստներ կրում էին միայն այն ժամանակ, երբ իրենք էին հարձակման անցնում ու քրդերին դուրս քշում նրանց կողմից գրաված բարձունքներից, բայց բարձունքները նրանք երկար չէին կարող պահել իրենց ձեռքում քրդերի՝ թվական զգալի գերակշռության պատճառով, որոնք նաեւ այնուամենայնիվ բավականին լավ կազմակերպված էին: Չոկատի պետը, Չորս ժամանելով, որոշեց այդտեղ մնալ մեկ օր եւ դեպի Բիջան մեկնել փետրվարի 2-ին գիշերվա ժամը 11-ին: Չորսում 5-րդ վաշտի հրամանատար պորուշիկ Սաֆարյանից ջոկատի սպայակույտն ստացավ հետեւյալ տեղեկությունները. 1) որ Չորսից 8 վերստ հեռու գտնվող, քրդական մեծ գյուղում (գյուղն ընկած էր խճուղուց կես վերստ հյուսիս), գտնվում է թուրք մի զնդապետ, որը ղեկավարում է քրդերի գործողությունները, 2) քրդերը Սալոյի եւ խճուղու մոտ, այդ գյուղի դիմաց կառուցել են գետնափորներ, որոնցում տեղավորված էին իրենց ուղեկալները բաղկացած ոչ պակաս 56 մարդուց, ուղեկալն ամեն օր փոխվում է, 3) հենց այդտեղ գետնափորներից ոչ հեռու գտնվող, խճուղու անմիջապես Եփրատը թափվող գետի վրայի մեծ կամուրջը պաշտպանվում է քրդերի կողմից, եւ որ կամրջի երկայնքով, ինչպես Երզնկայի, այդպես էլ Էրզրումի կողմից անց են կացված փշալարե արգելափակոցներ եւ 4) որ Բիջանում տեղաբաշխված են Էրզրումի (Թորգոմի) զնդի երկու վաշտեր 2 հրանոթներով: Բոլոր այդ տեղեկությունները նրանք ստացել էին 5-րդ վաշտի մի զինվորի

կողմից, որին հաջողվել էր մեկ-մեկակ Չորսից թափանցել Բիջան եւ հետ վերադառնալ: Բացի այդ զինվորից, ոչ ոքի, չնայած բազմաթիվ փորձերին, չէր հաջողվել հասնել Բիջան, նրանք բոլորն էլ քրդերի կողմից բռնվել եւ սպանվել էին: Պորուշիկ Մորոզովը, ջոկատի կապի գծով պետի օգնականը կամավոր կերպով հանձն էր առել փետրվարի 2-ի գիշերը գաղտագողի անցնել Բիջան եւ այնտեղ տեղաբաշխված վաշտերին փոխանցել ջոկատի պետի հրամանը, որ այդ վաշտերը փետրվարի 3-ի գիշերը զբաղեցնեն խճուղուց հյուսիս, կիրճի մուտքից 3-4 վերստ հեռու ընկած բարձունքները, որտեղ ջոկատը կարող էր մինչեւ լուսադեմ հասնել: Պորուշիկ Մորոզովին չէր հաջողվել կատարել իր ստանձնած առաջադրանքը, քանի որ Չորսից 8 վերստի վրա, քրդերի գետնափորների մոտ նա ծանր վիրավորվել ու գերի էր ընկել, բայց հետո ինչ-որ հրաշքով փրկվել եւ հասել էր Տրապիզոն, որտեղից էլ ապրիլ ամսին եկել էր Կարս: Նրա հետ եղած 6-րդ վաշտի ենթասպային հաջողվել էր նետվել Եփրատը եւ այդ կերպ փրկվել: Նա լրիվ սառցակալել էր եւ Բիջան էր հասել գրեթե անմեղսագիտակ վիճակում, բայց ջոկատի պետի հրամանը փոխանցել էր:

Փետրվարի 2-ի լուսաբացին փոխհրաձգություն սկսվեց քրդերի եւ ջոկատի պաշտպանության հրաձիգների միջեւ: Յերեկվա ժամը 12-ին Բիջանի կողմից եկան երկու քրդեր, որոնք բերին ինչ-որ քուրդ շելխի գրությունը, որը պահանջում էր անհապաղ թողնել Չորսը եւ պահեստը չհրկիզել, նա խոստանում էր ջոկատն ազատ բաց թողնել կիրճից, հակառակ պարագայում սպառնում էր կոտորել ողջ ջոկատը: Չոկատի սպայակույտում անցկացված խորհրդակցությունում որոշվեց քրդերի պահանջները չկատարել, Չորսից խորհրդակցությունում որոշվեց քրդերի պահանջները չկատարել, Չորսից նահանջը նշանակել փետրվարի 3-ին երեկոյան ժամը 8-ին: Բանազնացներից հաղորդվեց, որ ջոկատն առայժմ մտադիր չէ թողնելու Չորսը:

Փետրվարի 2-ին եւ 3-ին [զնում էր] աշխույժ փոխհրաձգություն: Չոկատն այդ երկու օրվա մեջ կորցրեց 6 զինվոր ու մի քանի փախստական:

Փետրվարի 3-ին երեկոյան ուղիղ ժամը 8-ին, ջոկատի առաջապահը, թուրքեստանցիների 1-ին եւ 2-րդ վաշտերի կազմով, դուրս եկավ Չորսից, այնուհետեւ հետեւում էին՝ հրետանին, գումարտակի գումակները՝ 3-րդ, 4-րդ եւ 7-րդ վաշտերի պաշտպանության տակ, նրանց հետեւից գնում էին փախստականներն իրենց կահկարասիով, վերջնապահը գնում էր 5-րդ եւ 6-րդ վաշտերի կազմով՝ պորուշիկ Խուցիեի հրամանատարությամբ: Վերջնապահը Չորսից մեկնեց ամբողջ շարասյան՝ Չորսից մեկնելուց 1 ժամ հետո՝ ոչ շուտ երեկոյան 10 1/2-ից: Պահեստները չհրկիզվեցին, որովհետեւ այնտեղ գրեթե բան չէր մնացել, երեք օրում բոլոր պաշարները ոչնչացվել էին ջոկատի եւ փախստականների կողմից:

Չուկաստի առաջապահը միանգամայն հանգիստ հասավ քրդական 1-ին գետնափորներին, որտեղ ոչ ոք չգտնվեց, միայն խճուղու հենց շրջադարձի վրա առաջավոր դետքը նկատեց մի մեծ խարույկ, այն տեղում, որտեղ կամուրջն էր քրդերի փշալարե արգելափակոցներով: Դետքը կանգ առավ, մինչև որ առաջապահից մտտեցավ 1-ին վաշտը, որը վազքով նետվեց դեպի խարույկ, այնտեղ, ենթադրելով, քրդական ուղեկալը, բայց ոչ կամրջի մոտի գետնափորներում, ոչ կամրջի մերձակայքում ոչ մի քուրդ չգտնվեց, իսկ խարույկն իրենից ներկայացնում էր ահռելի անդունդի վրա բոցավառվող մեծ փայտե կամուրջ: Կամուրջն արդեն գրեթե այրվել էր եւ առաջապահ վաշտերը նետվեցին հարմար վայրէջք փնտրելու անդունդ իջնելու համար, սակայն այդպիսին ոչ մի կերպ չկարողացան գտնել, լանջերը սարսափելի թեք էին եւ սառցապատ: Առաջապահ վաշտերը վայրէջքի համար տեղի երկար փնտրտուքից հետո ինչ որ կերպ հետեւակի վայրէջքի համար տեղ գտան, սակայն գումակի համար ոչինչ հնարավոր չէր մտածել: Առաջապահ վաշտերը մեծ դժվարությամբ 2 ժամվա ընթացքում կարողացան իջնել անդունդ, որտեղ մի փոքրիկ գետակ էր հոսում եւ սկսեցին նույնքան թեք լանջով բարձրանալ մյուս ափը: Այդ ընթացքում ողջ շարասյունն արդեն մտնեցել էր անդունդին, հետին շարքերն սկսեցին սեղմել առաջիններին, յուրաքանչյուրն ուզում էր շուտափույթ անցնել անդունդը, փախստականները խառնվել էին վաշտերին, գումակները կուտակվել հենց անդունդի բերանին: Հրանոթների եւ գումակների վայրէջքի տեղ գտնելու բոլոր ջանքերը հաջողություն չունեցան: Փախստականները չէին ցանկանում լքել իրենց սայլակառքերը, ահավոր աղմուկ-աղաղակ բարձրացավ, ոմանք մթության մեջ հերթի չսպասելով վայրէջքի մոտ, ուղղակի նետվեցին անդունդ, որտեղ մահացու ջախջախվեցին: Առավուտվա ժամը 4-ի մոտերքը, երբ դեռ շարասյան 1/4-ը անդունդի մյուս կողմը չէր փոխադրվել, քրդերը վերելից հրացանային եւ զընդացրային կրակ բացեցին, շարասյան մեջ ահավոր հրհրոց ընկավ: Հետեւի շարքերը սեղմեցին առաջինների վրա այնպիսի ուժով, որ սրանք անդունդ գլորվեցին: Ինչպես զինվորական, այդպես էլ փախստականների գումակները լքվեցին, փախստականներն անգամ չարձակեցին իրենց լծկան ձիերին: Վաշտերը խառնվեցին փախստականներին, որոնք ձգտում էին շուտափույթ անցնել անդունդը, ոչ մի հնարավորություն չկար վաշտերը հավաքելու եւ որեւէ բան ձեռնարկելու: Գտնվելով անդունդի այն կողմում, միայն առաջապահի 2-րդ վաշտն էր լիակազմ: Հարկ եղավ նրան առաջ շարժել դեպի բարձունքները քրդերին քշելու համար, քանի դեռ գիշերային խավարը դա թույլ էր տալիս: Ձյունով ու սառույցով պատված թեք լանջերը եւ անձանոթությունը տեղանքին հնարավորություն չէին տալիս արագ առաջ շարժվելու:

Քրդերն արդեն ամբողջ զորասյունը գնդակոծում էին եւ՝ Եփրատի աջ ափից եւ՝ թիկունքից: Արդեն անդունդն անցած սպաները կանգ էին առել խճուղու վրա եւ իրենց վաշտերի անդունդն անցած զինվորներին հավաքում էին ըստ վաշտերի: Լուսաբացին գրեթե բոլոր վաշտերը հավաքված էին անդունդի այն կողմում: Սակայն, անդունդի մյուս կողմում դեռեւս մնացել էին շատ փախստականներ, ոչ պակաս 2000 մարդ եւ բոլոր գումակները: Լուսաբացի հետ չուկաստի կորուստներն էլ ավելի մեծացան, քանզի քրդերին տեսանելի էր ամբողջ շարասյունը, իսկ հրահրոցն անդունդի մոտ ավելի շատացավ: Լույսը բացվելիս անդունդի ափերի մանրագին դիտարկումից հետո նույնպես պարզվեց, որ մեր կողմից անհնար կլինի դուրս բերել գումակն ու հրետանին, որի համար էլ հրաման տրվեց դաշտային հրանոթների փակաղակները հանել, իսկ հրանոթներն անդունդ գլորել: Լեռնային հրանոթներ ինչ-որ կերպ հաջողվեց փրկել:

Քրդերին քշելու համար բարձունքներն ուղարկված 1-ին եւ 2-րդ վաշտերը շատ դանդաղ էին շարժվում, քանի որ քրդերը նրանց գնդակոծում էին ինչպես ճակատից, այդպես էլ թիկունքից՝ Եփրատի աջ ափից: Այդ երկու վաշտերին օգնություն ուղարկվեցին 3-րդ եւ 7-րդ վաշտերը եւս, որից հետո վաշտերն սկսեցին ավելի համաձայնեցված վերել բարձրանալ թեք լանջերով: Քրդերի զնդացրային կրակն ու հոգնածությունը վաշտերին հնարավորություն չէին տալիս հասնել հակառակորդին եւ նրանք ստիպված եղան նստելու քարերի տակ ու ենթարկվել զնդակոծություն: Չնայած այդ անհաջողությանը, այնուամենայնիվ, վաշտերը խճուղուց իրենց վրա գրավեցին քրդերի կրակը, որով հնարավորություն տվեցին մնացած փախստականներին քիչ թե շատ հանգիստ անցնել անդունդը: Առավուտյան ժամը 9-ի մոտերքը անդունդի այդ կողմում արդեն ոչ ոք չէր մնացել, բայց փախստականները անդունդի այդ կողմում արդեն ոչ մասին: Թուրքեստանցիների 6-րդ վաշտըն ու հրետանավորները բոլորին, մինչև վերջին մարդը, դուրս բերեցին վիրավոր զինվորներին ու սպաներին, 4-րդ եւ 5-րդ վաշտերը գնում էին շարասյան առջելից եւ նրանք բախում ունեցան Բունի կամրջի մոտի գետնափորներում ամրացած քրդերի հետ: Քրդերը թվով 70 մարդ, ամրացել էին Բունի կամրջի մոտի գետնափորներում եւ գնդակոծում էին խճուղին, որով առաջապահից առաջ անցած գնում էին փախստականները: Հասնելով գետնափորների, 4-րդ եւ 5-րդ վաշտերը նետվեցին նրանց վրա, քրդերն անակրկալի ելած չկարողացան դուրս գալ գետնափորներից եւ բոլորը կոտորվեցին:

Գտնվելով բարձունքներում 4-րդ վաշտն աստիճանաբար սկսեց լեռների լանջերով, խճուղուն զուգահեռ հեռանալ դեպի կիրճի ելքը, որտեղ եւ միացավ չուկաստի մնացած զորամասերին:

Կիրճի ելքի մոտ ջոկատը հանդիպեց Էրզրումի գնդի 2 վաշտերին, որոնք տեղաբաշխված էին Բիջանում եւ որոնք, համաձայն Երզնկայի ջոկատի պետի հրամանի, ընդառաջ էին դուրս եկել ջոկատին, բայց կիրճ չէին մտել, այլ տեղավորվել էին նրա մուտքի մոտ: Առավոտյան ժամը 11-ին ամբողջ շարասյունը հավաքվեց Բիջանում: Կորուստները. սպանվածներ՝ 3 սպա, 80 զինվոր, վիրավորներ՝ 5 սպա, 140 զինվոր, կորցվել են 2 դաշտային հրանոթները եւ բոլոր գումակները, ձիերի կեսից ավելին կտտորվել էին: Փախչատականները եւ կամավորները կորցրել էին ոչ պակաս 700-800 մարդ՝ սպանված ու վիրավոր:

Փետրվարի 3-ին ջոկատը գիշերեց Բիջանում, իսկ փետրվարի 4-ի առավոտյան ջոկատը, որին միացան նաեւ Էրզրումի գնդի 2 վաշտերը 2 հրանոթներով, մեկնեց դեպի Մամախաթուն, ուր եւ հասավ փետրվարի 4-ի երեկոյան, նախապես պայթեցնելով Երզնկա-Էրզրում խճուղու Եփրատի վրայի կամուրջը՝ Մամախաթունից ոչ հեռու: Մամախաթունում գտնվում էին մինչեւ 100 հոգի կամավորներ եւ Դերջանի գյուղերից փախստական հայեր: Ջոկատը մնաց Մամախաթունում մինչեւ փետրվարի 6-ը: Այդ ընթացքում փախստականների մեծ մասը մեկնեց Էրզրում, նրանց վրա ճանապարհին հարձակվում էին քրդերը, որի համար էլ նրանց ուղեկցում էին կամավորները: Թուրքական զորամասերը չէին երեւում: Միայն գերի քրդերն էին ասում, որ թուրքական առաջապահ զորամասերը գտնվում են Բիջանում: Փետրվարի 6-ին ջոկատը դուրս եկավ Մամախաթունից եւ Սողուի զորահանգրվանի մոտ քրդերի հետ ունեցած ոչ մեծ փոխհրաձգությունից հետո, երեկոյան կողմ հասավ Ենիքոյ գյուղը, որտեղ եւ տեղավորվեց գիշերելու: Փետրվարի 8-ի առավոտյան ջոկատի պետ գնդապետ Մորելը հետախուսով կանչվեց Էրզրում, Էրզրումի շրջանում տեղաբաշխված զորամասերի հրամանատարությունն ընդունելու համար, քանի որ Կովկասյան բանակի սպայակույտը, գեներալ Օդիշելիձեի զխավորությամբ, պետք է տեղափոխվեր Սարիղամիշ: Գնդապետ Մորելը նույն օրը ջոկատի հրամանատարությունը հանձնելով կապիտան Հասանփաշայանին, ջոկատի սպայակույտի պետի հետ մեկնեց Էրզրում, հրամայելով մինչեւ իրենից հետագա հրամաններ ստանալը պաշտպանել Ենիքոյի բնագծերը: Փետրվարի 9-ին Բաբերդից Ենիքոյ եկավ Սեպուհն իր ձիավորներով: Հաջորդ օրը նա նույն ձիավորների հետ գնաց Էրզրում, ուր հեռացան նաեւ Երզնկայի ջոկատի բոլոր կամավորները: Սեպուհի հետեւից մեկնեց նաեւ Մուրադը, թողնելով ջոկատում միայն իր 20 ձիավորներին: Այդպիսով Ենիքոյում մնացին թուրքեստանցիների 7 վաշտեր, Էրզրումի գնդի 2 վաշտեր եւ 4 հրանոթներ: Փետրվարի 11-ին, առավոտյան ժամը 11-ին, մեր պահակախումբը դիրքերից զեկուցեց, որ Մամախաթունի կողմից

դանդաղ առաջանում են մոտ 20 հեծյալներ: Այդ տեղեկությունն ստանալով, ջոկատի պետը պահակախմբին հրամայեց այնպես թաքնվել, որպեսզի հակառակորդը չնկատի եւ ոչ մի դեպքում կրակ չբացել, այլ նրանց թողնել գյուղ: Ծայրամասերի տները զբաղեցված էին զինվորների կողմից, որոնց հրամայված էր չկրակել եւ տներից դուրս չգալ այնքան ժամանակ, քանի դեռ գյուղի կենտրոնից կրակոցներ չեն լսվի, այդ ժամ նրանք գյուղից չպետք է դուրս թողնեին ոչ մի թշնամու: Կերակուր եփելու համար վառված խարույկները հանգցվեցին եւ գյուղն ընդունեց բնակիչների եւ զորքերի կողմից լքված տեսք: Թշնամական հեծելապարեկը, չնկատելով պահակախումբը, շուտով հայտնվեց գյուղում եւ երբ հեծելապարեկի միջուկը հասավ գյուղի կենտրոն, բոլոր կողմերից կրակ բաց արին հեծելապարեկի վրա: Հեծելապարեկի մարդիկ, որը ոտքով, որը ձիով ետ շրջվեցին, բայց տեսնելով, որ իրենք շրջապատված են, բոլոր կենդանի մնացածները հանձնվեցին: Ընդ որում պարզվեց, որ նրանք ընդամենը 25 հոգի են 1 սպայի հետ՝ թուրքական հեծյալ զորամասերից (սուվարի) մեկից, նրանցից 5 հեծյալ եւ 1 սպա սպանվել էին, իսկ երեք հեծելակ վիրավորվել: Ջոկատը գերիներից իմացավ, որ փետրվարի 10-ին Մամախաթուն է եկել մինչեւ 1 դիվիզիա հետտեսակ՝ 8 հրանոթներով եւ հեծելագործի մեկ հեծելավաշտ եւ որ իրենց առավոտյան ուղարկել են հետախուզության: Գերիներն այդ օրն իսկ ուղարկվեցին Էրզրում:

Փետրվարի 12-ին Էրզրումի ջոկատի սպայակույտից հրաման ստացվեց, ըստ որի Երզնկայի ջոկատը որպես պահեստագործ փոխադրվում էր Էրզրում, իսկ 1-ին հայկ. հրաձգ. գունդը եւ կամավորները պետք է նույն օրն ենթ մեկնեն Էրզրումից եւ զբաղեցնեն Աշկալայի ամրացված բնագծերը:

Նույն օրն էլ հետախույզները զեկուցեցին, որ Ենիքոյի դիրքերի դիմաց, 5 վերստի վրա, հայտնվել են թուրքական հետտեսակային զորամասեր: Թուրքերը կանգ առան Ենիքոյի դիրքերից 5 վերստ հեռու եւ միայն նրանց հետախույզները մոտեցան ջոկատի դիրքերին եւ փոխհրաձգության բռնվեցին պահակային ծառայության հետ»:

Փետրվարի 14-ի առավոտյան ջոկատը դուրս եկավ Ենիքոյից եւ ուղղվեց դեպի Էրզրում: Էրզրումից հեռնց նոր Աշկալայ էին եկել 2-3 վաշտ կամավորներ: 1-ին հայկ. հրաձգ. գունդն էլ տեղաբաշխվեց Իլիջայում: Ջոկատը գիշերելու համար կանգ առավ Իլիջայում: Փետրվարի 15-ին առավոտյան ջոկատը մտավ Էրզրում: Երզնկայի ջոկատի Էրզրում հասնելուն պես եղավ նրա կազմայուծման հրամանը: Թուրքեստանյան 7 վաշտերից, Ֆամի ջոկատից (մոտ 250 զինվոր) սպաների հետ (60), որոնք ոչ մեծ մարտից հետո հետ էին քաշվել Ֆամից ու փետրվարի 11-ին եկել Էրզրում եւ Երզնկայի

չոկատի կամավորներից (մոտ երկու հարյուր հոգի), այդ նույն հրամանով կազմավորվեց Երզնկայի հետեւակ գունդը 3 գումարտականոց կազմով: Գնդի հրամանատար Աշահակյեց կապիտան Հասանփաշայանը:

Թորգոմի Էրզրումի գունդը համարվեց մնացած կամավորական վաշտերով եւ շնայած դրան, այդ գնդում կար 600-700 սպիւն: Բացի այդ երկու գնդերից Էրզրումում էին գտնվում՝ 4-րդ հայկ. հրաձգ. գնդի 1-ին գումարտակը, 1 դաշտային մարտկոց, 1 լեռնային մարտկոց ու բերդի հրետանին:

Ձինադադարի կնքումից հետո ինչ-որ տարօրինակ ու անհասկանալի իրադրություն էր ստեղծվել Կովկասյան ռազմաճակատում, զինադադար, որը կարծես թե երկու կողմերին էլ հանդարտություն պետք է բերեր: Մի կողմից նկատվում էին խաղաղ բանակցություններ (Թուրքիայի նախաձեռնությամբ), իսկ մյուս կողմից՝ տեղի էր ունենում թուրքական զորքերի հապճեպ առաջխաղացում ամբողջ ռազմաճակատով մեկ՝ եւ երկու կողմերի համար էլ բավականին շոշափելի կորուստներով: Իհարկե դարձյալ ամենից շատ զոհեր, հանձին խաղաղ բնակչության տալիս էին հայերը:

Խաղաղ բանակցությունների առաջարկի վերաբերյալ Վեհիբ Փաշային փետրվարի 6/19-ին Անդրկովկասյան կառավարության կողմից հղվեց հետեւյալ հեռագիրը. «Ներկայումս Անդրկովկասյան կառավարությունը պատրաստ է ձեռնամուխ լինելու խաղաղության բանակցություններին, ընդամին խաղաղության հիմնական դեկլարացիոն ցուցումներն ու պայմանները կմշակվեն Անդրկովկասյան Սեյմի, որպես ամբողջ Անդրկովկասի ներկայացուցչական մարմնի կողմից, որը հավաքվելու է Թիֆլիսում փետրվարի 10/23-ին: Խնդրում եմ շտապ հաղորդեցեք խաղաղ բանակցությունների պատվիրակության կազմի մասին, ինչպես նաեւ պատվիրակությունների հանդիպման վայրի ու ժամանակի վերաբերյալ Ձեր կառավարության առաջարկությունները: Մեր ներկայացուցիչների կազմի մասին կհաղորդենք մոտ օրերս: Անդրկովկասյան կոմիսարիատի նախագահ՝ Գեզեչկորի» (Փաստաթղթերի եւ նյութերի ժող...» էջ, 60):

Փետրվարի 10-ին ստացվեց Գեզեչկորու հեռագրին Վեհիբ փաշայի պատասխանը. «Անդրկովկասյան կոմիսարիատի նախագահ Գեզեչկորուն: Հիշյալ պատվիրակների կազմը, նախնական պայմանների համատեղ մշակման համար, որոնք կարողանան հիմք ծառայել վերջնական բանակցությունների եւ Անդրկովկ. կառավարության ճանաչման համար, պատրաստ է Կոստանդնուպոլսից Թիֆլիս մեկնելու» 9/22 փետրվարի 1918» (Նույն տեղում էջ 62): Այդ հեռագրին 1918 թ. փետրվարի 10/23-ին ուղարկվեց Անդրկովկասյան կոմիսարիատի նախագահի պատասխանը թուրքական բանակի հրամանատարին Կովկասյան բանակի հրամանատարի միջոցով. «Անդրկովկ.

կոմիսարիատն իր կողմից անհրաժեշտ համարեց պատվիրակների հանդիպման վայր նշել Տրապիզոնը: Եթե թուրքական կառավարությունը ինչ-որ պատճառով այն հնարավոր չհամարի, ապա կոմիսարիատն առաջարկում է որեւէ այլ չեզոք կետ: Մեր պատվիրակությունն այնտեղ կլինի փետրվարի 17-ի երեկոյան: Գեզեչկորի» (Նույն տեղում, էջ 66: Կազմող):

Բացի բարոյական միջոցներից թուրքերի առաջխաղացումը կանգնեցնելու այլ միջոցներ չունենալով, գեներալ Լեբեդինսկին, որպես Կովկասյան ռազմաճակատի Գլխավոր հրամանատար, հեռագիր հղեց թուրքական բանակի Գլխավոր հրամանատար Վեհիբ Փաշային. «Տեղեկացնում եմ Ձերդ Պայծառափայլությանը, որ Ձեր կողմից մարդասիրական եւ քաղաքակրթական նպատակներով ձեռնարկված թուրքական զորքերի առաջխաղացումը, քրդերի շղաղարող հարձակումների կապակցությամբ, հանգեցրել է նրան, որ Ձեր զորքերի առջեւից Երզնկայի հովտից հետ քաշվող փախստականների կեսը զոհվել է քրդերի հարձակումներից: Շոշափելի կորուստներ է կրել նաեւ գնդապետ Մորեյի ջոկատը: Ենթադրում եմ, որ ձեր զորքերի առաջխաղացման նման արդյունքները ոչնչով չեն արդարացնում ձեր կողմից առաջադրված նպատակները, կստիպեն ձեզ կանգնեցնելու հետագա առաջխաղացումը:

Դրա հետ միասին, նորից խնդրում եմ Ձերդ գերազանցությանը ձեռնպահ մնալ զինադադարի նման խախտումներից, որոնք կարող են ձգձգել Ձեր եւ Անդրկովկասյան կառավարության միջեւ սկսված խաղաղության բանակցությունները: Օ168 Լեբեդինսկի: Թիֆլիս: 7(20) փետրվարի 1918թ.» (Նույն տեղում, էջ 61):

Փետրվարի 9-ին բանակի հրամանատար գեներալ Օդիշելիձեի կողմից Գլխավոր հրամանատար Լեբեդինսկուն հղվեց հետեւյալ հեռագիրը. «Վեհիբ փաշան միանգամայն որոշակիորեն հայտարարեց, որ պատերազմի իրավունքով մեր կողմից գրավված թուրքական մարզերում մուսուլման ազգաբնակչության պաշտպանության նպատակով, ինքն առաջ կշարժվի մինչեւ ռուսական զորքերի հետ առնչվելը, որպիսիք հայկական ազգային գործադրումները նա չի համարում: Այդ նկատառումով, խնդրում եմ Ձեր, շտապ կարգադրությունը Էրզրում ռուսական կորպուսի զոհն մի քանի գումարտակներ անհապաղ ուղարկելու մասին, նրանց որպես առաջապահ առաջ մղելու համար, որը, միգուցե հետ կպահի թուրքերին Էրզրումի վրա հետագա հարձակումից: Առանց այդ միջոցառման, այսինքն Էրզրումը միայն հայկական զորամասերով պահելու դեպքում, Էրզրումը անխուսափելիորեն կգրավվի թուրքերի կողմից: 9(22) փետրվարի 1918թ. Օդիշելիձեի» (Նույն տեղում, էջ 61): Ցավոք, գեներալ Օդիշելիձեի պահանջը իրագործելի չէր, քանի որ ռուսական կորպուսը, շնայած այն բանին, որ բավարար ժամանակ էր եղել,

կազմավորված ոչ մի, նույնիսկ աննշան զորամաս չուներ, եւ հետագայում էլ ուսական կորպուսին չհաջողվեց որեւէ բան կազմավորելու, բացի սպայական փոքրիկ ջոկատից: Ես անձամբ, խորապես համոզված եմ, որ նույնիսկ եթե ճակատում մեան զորամաս էլ լինէր, ապա դա էլ թուրքական Գլխավոր հրամանատարին չէր ստիպի կանգնեցնելու հետագա առաջխաղացումը, քանզի նրանց նպատակն էր վերադարձնել պատերազմի ժամանակ տված իրենց հողերը եւ բացի այդ նրանք իրականացնում էին իրենց նվիրական երազը՝ միանալ Անդրկովկասի եւ առաջավոր Կովկասի մուսուլման ազգաբնակչության հետ: 1918թ. փետրվարի 16-ին տեղի ունեցավ Անդրկովկասյան սեյմի բացումը (Սեյմը բացվել է ոչ թե 1918թ. փետրվարի 16-ին այլ 1918թ. փետրվարի 10/23-ին: Կազմող):

Սեյմի, որպես տարածքում օրենսդիր մարմնի, կազմի մեջ մտան Համա-նուսաստանյան սահմանադիր ժողովի համար Կովկասի բնակչության կողմից ընտրված պատգամավորները եռասպակված թվաքանակով, ընդ որում անհրաժեշտ թիվը լրացվեց սահմանադիր ժողովի ընտրություններին մասնակցած քաղաքական կուսակցությունների թեկնածուական ցուցակներից:

Սեյմի անդամների կազմը չափազանց բազմազան էր, որոնց մեծամասնությունը ներկայացնում էին փոխադարձաբար թշնամի ազգայնական տարրեր, (Սեյմի կազմի մեջ մտնում էին մենշեիկների՝ 32, դաշնակացական՝ 27, մուսավաթական՝ 30 քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Կազմող):

Անդրկովկասյան Սեյմի կողմից փետրվարի 16-ի (մարտի 1-ի) նիստում խաղաղության հարցի առթիվ միաձայն ընդունվեցին հետևյալ հիմնական դրույթները.

- 1) Անդրկովկասյան սեյմն ստեղծված պայմաններում իրեն իրավասու է համարում հաշտություն կնքելու Թուրքիայի հետ:
- 2) Անդրկովկասյան սեյմը, ձեռնամուխ լինելով խաղաղ բանակցությունների իր առջև խնդիր է դնում վերջնական հաշտություն կնքելու Թուրքիայի հետ:
- 3) Կնքվելիք խաղաղության պայմանագրի հիմքում պետք է ընկնի 1914թ. պատերազմ հայտարարելու պահին Ռուսաստանի եւ Թուրքիայի միջև գոյություն ունեցած պետական սահմանների վերականգնումը:
- 4) Պատվիրակությունը կձգտի հասնելու Արեւելյան Անատոլիայի, մասնավորապես Թուրքահայաստանի՝ թուրքական պետականության շրջանակներում ինքնորոշվելու իրավունքին:

Այդ դրույթով էր զինված փետրվարի 17-ին Տրասպիզոն մեկնող պատվիրակությունը: Չխեղկելու կողմից գլխավորվող այդ պատվիրակությունը բաղկացած էր 11 հոգուց, իսկ [նրան] ուղեկցում էին բազմաթիվ անձինք եւ 50 հոգիանոց զինված շքախումբ (Պատվիրակների մեջ էին 5 մուսուլմաններ, 4 վրացիներ եւ 2 հայեր: Կազմող):

Ոչ մի կասկած չկար, որ Սեյմի կողմից մշակված հիմնական դրույթները թուրքերի համար անընդունելի էին լինելու: Թուրքերը գերազանց գիտեին, թե ինչ հակառակորդի հետ են բանակցություններ վարում եւ թե ինչ ըստ պատճառի կարող էին ներկայացնել իրենց համար հակառակորդի ուժերը բանակցությունների խզման դեպքում:

Փետրվարի 17-ին ստացվեց Կարախանի կողմից փետրվարի 16-ին Մոսկվայից ուղարկված ծանուցում, որ խորհրդային կառավարության կողմից Բրեստ-Լիտովսկում կնքվել է խաղաղություն, որի հիման վրա Արդահանի, Կարսի, Բաթումի շրջաններն անցնում են Թուրքիային: Այդ ծանուցումը սուկայի հարված էր Անդրկովկասյան կառավարության եւ, իհարկե, ամբողջ Կովկասի, ու, հատկապես, հայերի համար, ձեռնտու էր միայն մուսուլմանների համար: Անդրկովկասյան կառավարության բողոքն ընդդեմ Բրեստ-Լիտովսկում մեծամասնականների գործողությունների, արտահայտվեց ծանուցագրի մեջ, որ Անդրկովկասյան կառավարությունը, համաձայն Սեյմի որոշման, Անդրկովկասի եւ իր սահմանների վերաբերյալ առանց իր գիտության եւ հավանության կնքված յուրաքանչյուր պայմանագիր համարում է միջազգային նշանակությունից զուրկ եւ իր համար ուժը կորցրած:

Փետրվարի 10-ի կողմերը ինձ մոտ եկավ 1-ին հայկ. հրաձգ. դիվիզիայի (հրամանատարի) օգնականը, որի համար այդպես եռանդուն թիկունք էր կանգնել Դրոն եւ ռազմական մասնաճյուղից որոշ անձինք, որպեսզի ես նըրան անպայման նշանակեմ 2-րդ դիվիզիայի հրամանատար, որի համար իմ կողմից նախատեսված էր գեներալ Սիլիկյանը: Ռազմաճակատից նրա գալուստն առանց իմ թույլտվության սաստիկ զարմացրեց ինձ, քանի որ նրան, ամսի սկզբներին Երեւանի շրջանից նրան ենթարկվող ուժերը երբ դուրս եկան, ուղարկել էի Էրզրում: Նրան ես հարցրեցի, թե նա ինչ կերպ է առանց իմ եւ իր դիվիզիայի պետի թույլտվության մեկնել ռազմաճակատից: Նա ինձ պատասխանեց, որ ինքը եկել է անձնական գեկույցի համար: Այդ առիթով նրան ասացի, որ նա կարող էր ինձ գեկույցել նաեւ հեռագրով եւ հրամայեցի անհապաղ հետ վերադառնալ: Ինձ նա խոստացավ նույն օրն եւ եթե մեկնել է հետո բոլորովին չքվեց հորիզոնից, այնպես որ բոլոր որոնումները ոչ մի դրական արդյունք չտվեցին եւ ես չկարողացա նրա դեմ պատժամիջոցներ ձեռք առնել:

Փետրվարի առաջին օրերին Հայոց Ազգ. խորհրդի Նախագահ Ահարոն-յանը հանդիպելով ինձ, հայտնեց իր կարծիքը, որ լավ կլիներ եթե ես տեղափոխվեի Ալեքսանդրապոլ: Ես հաճույքով համաձայնեցի նրա կարծիքի հետ, քանի որ կորպուսի ձեռնարկումը գրեթե ավարտվել էր և դրա համար էլ իմ անմիջական ներկայությունը Թիֆլիսում ավելորդ էր: Ես նրան խնդրեցի այդ տեղափոխության համար համապատասխան թվով վագոններ հաջողեցնել: Նա խոստացավ դա կատարել... Միայն դժվարությամբ նրան հաջողվեց շարժակազմ ձեռք բերել փետրվարի 20-ի համար: Փետրվարի 20-ին իրականացվեց կորպուսի սպայակույտի բոլոր պաշտոնյաների, մեկ դաշտային մարտկոցի և կորպուսի պահակային ծառայության հարյուրակի նստեցումը:

Ֆրանսիական բանակի ներկայացուցիչ գեղապետ Շարդինին մեզ հետ գործողեց գեղապետ, հրետանային սպա Ֆելիքս Շելվալիեին:

Ազգային խորհրդի անդամներից ոչ ոք չէր եկել հրաժեշտ տալու և ընդհանրապես ներկա գտնվելու նստեցման ժամանակ: Բեռնված վագոններով մենք կանգնեցինք փետրվարի 20-22-ը, իսկ մեզ չգիտես ինչու չէին ուղարկում: Երեւում էր դա արվում է ինչ-որ նպատակով: Տեսնելով նման վիճակը, փետրվարի 22-ին, ես կայարանի պետի մոտ ուղարկեցի կորպուսի սպայակույտի սպաներից մեկին և հրամայեցի կայարանի պետին հաղորդել, որ եթե այսօր իմ փոխադրագնացքը Ալեքսանդրապոլ չուղարկվի, ապա ես պարեկություն կհաստատեմ և կդադարեցնեմ Բաքվի ու Բաթումիի հետ ամեն մի հաղորդակցություն: Դրանից մի քանի ժամ անց ինձ հաղորդեցին, որ իմ փոխադրագնացքը կուղարկվի ցերեկվա ժամը 3-ին: Մենք մեկնեցինք նշանակված ժամին: Մեկնում էինք բոլոր զգուշություններով, և առանձնապես, երբ անցնում էինք Սադախլու և թաթարական այդ բնի շրջանը, որտեղ գրեթե միշտ հարձակումներ էին կատարվում: 23-ի առավոտյան գնացքը հասավ Ալեքսանդրապոլ: Ես տեղավորվեցի գեներալ Սիլիկյանի համարներում նրա սպայակույտի պետի հետ: Հաջորդ օրը ինձ և սպայակույտի աստիճանավորների համար բռնագրավվեց այդ նույն հյուրանոցը, իսկ կորպուսի սպայակույտի գրասենյակը տեղավորվեց առևտրական ուսումնարանի շենքում:

Հաջորդ օրը ծանոթացա դաշնակցական կուսակցության գլխավոր ներկայացուցիչների՝ բժիշկ Տերտերյանի, Շարաֆյանի հետ, իսկ երրորդին չեմ հիշում: Ինձ մոտ հրավիրեցի արտակարգ եռյակին, որոնց հաղորդեցի, որ քաղաքն իմ կողմից հայտարարվում է ռազմական դրության մեջ և, որ այսօրվանից բոլոր կարգադրությունները կլինեն իմ կողմից և եթե նրանք անհամապատասխան որեւէ բան կտեսնեն, ապա խնդրում եմ նրանց բոլոր թյուրիմացությունների դեպքում դիմեն ինձ:

Վեհիբ փաշան 1918 թ. փետրվարի 25 (մարտի 10)-ին ռադիոգիր հղեց՝ պահանջելով ռուսաստանյան հանրապետության հետ Բրեստ-Լիտովսկում կնքված խաղաղության պայմանագրի համաձայն դատարկել Կարսը, Արդահանը և Բաթումը, նշված մարզերի պարպումն իրականացնելով կարճ ժամկետում:

Այդ նույն ժամանակ Վեհիբ փաշայի կողմից Կովկասում ռուսական բանակի հրամանատարին ռադիոգիր հղվեց հարձակումը վերսկսելու հայտարարությամբ:

Իր հարձակման անցնելու և Արդահանի, Կարսի ու Բաթումի մաքրման պահանջի վերաբերյալ Վեհիբ փաշայի հեռագրին, Բանակի հրամանատարի միջոցով, Սեյմի նախագահ Ն. Ս. Չխեիձեի կողմից Վեհիբ փաշային ուղարկվեց պատասխան ռադիոգիր, որ իր կողմից Կոստանդնուպոլիս, Վիեննա, Բեռլին, Լոնդոն, Փարիզ, Նյու-Յորք, Տոկիո, արտաքին գործերի նախարարներին, Ցենտրոֆյուտին, Պետրոգրադ, Հոռմ, Օդեսա հղում է արվել այն մասին, որ Անդրկովկասին և նրա սահմաններին վերաբերվող ամեն մի պայմանագիր, կնքված առանց ինքնուրույն Անդրկովկասյան կառավարության գիտության և հավանության զուրկ է համարվում միջազգային նշանակությունից և պարտադիր ուժ ունենալուց:

Թուրքական հրամանատարության առաջարկով Անդրկովկասյան կառավարության կողմից Տրապիզոն խաղաղության պատվիրակություն է ուղարկվել: «...Խնդրում ենք հաղորդեք, թե պետք է Արդահանի, Կարսի ու Բաթումի մարզերի դատարկման առաջարկությունը դիտել, որպես թուրքական կառավարության շկամություն խաղաղության բանակցություններ վարելու Անդրկովկասյան կառավարության հետ: Անդրկովկասյան Սեյմի նախագահ Չխեիձե: 25 փետրվարի 1918թ.» (Փաստ. և նյութերի...» Ժողովածու, էջ 87-88: Կազմող):

Նման հեռագիր Անդրկովկասյան կառավարության նախագահի կողմից հղվեց Անդրկովկասյան հաշտության պատվիրակությանը, նաև հեռագիր այն մասին, [որպեսզի] պարզեն, թե կժամանի արդյոք թուրքական պատվիրակությունը:

ԷՐՋՐՈՒՄԻ ԱՆԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ինչպես վերև ասվեց, Անդրանիկը ճակատ մեկնեց փետրվարի 10-ից հետո: Նրա մեկնման մասին ես միայն պատահաբար իմացա: Փետրվարի 20-ին բանակի հրամանատարի հետ միասին բանակի սպայակույտի Սարիղամիշ տեղափոխվելուց հետո, Անդրանիկն իր սպայակույտով (սպայակույտի պետ՝ գնդապետ Զինկելիչ) ժամանեց Էրզրում: Հավանաբար շնորհիվ իր երկրպագուների միջնորդությունների նա նշանակվել էր Էրզրումի ջոկատի պետ եւ Էրզրում ամրոցի պարետ, գնդապետ Մորելի փոխարեն: Իմ անձնական կարծիքն է, որ Անդրանիկի այդ նշանակումը սխալ էր:

...Անդրանիկի առաջին գործն այն եղավ, որ տեսնելով 1-ին հայկ. հրաձգ. գնդի անկայունությունը, հեռագրով ռազմաճակատ կանչեց այդ գնդի նախկին հրամանատար գնդապետ Բեժանբեկովին, որը հեղինակություն ուներ գնդում:

Անդրանիկի Էրզրում ժամանումով, թիկունքից այնտեղ սկսեցին գալ, ինչպես հետեւի, այդպես էլ հեծյալ զանազան խմբեր: Այդ խմբերը ժամանում էին ամբողջ ընթացքում, մինչեւ հայկական զորամասերի կողմից Էրզրումը թողնելը: Առանձին խմբերի ո՛չ քանակի, ո՛չ դրանցում եղած սպիների քանակի, ո՛չ դրանց կազմի մասին ոչ ոք ոչինչ չգիտեր: Նրանք ժամանում, ավելի ճիշտ գալիս էին Էրզրում, բայց ոչ ոքի չէին ներկայանում: Խմբապետներից ով մոտ էր Անդրանիկին, կամ նրա մերձավոր գործակիցներին, ներկայանում էր նրանց, բայց սպայակույտ ոչ մեկը նրանցից չէր անցնում: Պարենամթերք նրանք ստանում էին Անդրանիկի զանազան մերձավոր անձանց, հատկապես բժիշկ Բոնապարտյանի մասնավոր գրություններով: Խմբեր էին հանդիպում, որոնց մեջ 15 հոգուց ավելի մարդ չկար, կային եւ այնպիսիները, որոնք հաշվվում էին մինչեւ 100 մարդ: Այդ բոլոր խմբերում մոտավորապես մինչեւ 2000 մարդ կար:

...Փետրվարի 23-ին թուրքերը մարտով գրավեցին Խարբերդի ճանապարհին, Էրզրումից 20 վերստի վրա ընկած գյուղը, որտեղ կանգնած էր Երզրնկայի գնդի 1-ին վաշտը: Փետրվարի 24-ի գիշերը Անդրանիկը հրամայեց Էրզրումի գնդին եւ 4-րդ հայկ. հրաձգ. գնդի 2 վաշտերին հենց գիշերն էլ դուրս գալ Էրզրումից՝ Խարբերդի խճուղով, հետ շարժել հակառակորդին եւ գրավել թողնված գյուղը: 4-րդ հայկ. հրաձգ. գնդի գումարտակը հրաժարվեց առաջ շարժվել, որի համար հարկ եղավ նրան երկար համոզել, մինչեւ, վերջապես, Թորգոմի հրամանատարությամբ, իր կազմում ունենալով 800

սպի, 2 հրանոթների հետ, ջոկատը կարողացավ դուրս գալ Էրզրումից միայն առավոտյան ժամը 10-ին: Թորգոմի ջոկատը թուրքական առաջապահ զորամասերին հանդիպեց Էրզրումից 12 վերստ հեռավորության վրա՝ Խարբերդի խճուղու վրա: Թուրքական առաջապահ զորամասերը հետ մղվեցին 4 վերստի շափ, բայց այդ ընթացքում նրանց մոտեցան օժանդա ուժեր եւ նրանք սկսեցին նեղել Էրզրումի գնդին: 4-րդ հայկ. հրաձգ. գնդի վաշտերը մարտին մասնակցություն չունեցան եւ գտնվում էին իբր թե պահեստում: Ցերեկվա ժամը 2-ի կողմերը թուրքերը շրջանցեցին Էրզրումի գնդի աջ թելը եւ ստիպեցին նրանց անկարգ կերպով նահանջել Էրզրումի կողմը:

Այդ ընթացքում Թորգոմը ձեռքից թեթեւ փրավորվել էր, որն էլ զինվորների մեջ ավելի մեծ խուճապ առաջացրեց: 4-րդ հայկ. հրաձգ. գնդի վաշտերը, լինելով մարտի սուկ հանդիսատեսներ, եւ տեսնելով, որ Էրզրումի գունդը նահանջում է, հանգիստ հետ շրջվեցին, եւ ոչ մի մարդ չկորցնելով վերադարձան Էրզրում: Երեկոյան կողմ չափազանց անկարգ կերպով Էրզրում վերադարձավ նաեւ Էրզրումի գունդը: Հենց որ մարտի արդյունքը հայտնի դարձավ, ջոկատի սպայակույտը Երզրնկայի գնդի վաշտերին հրամայեց ըզբաղեցնել Էրզրումից հարավ-արեւմուտք ընկած բոլոր ամրոցներն ու դարպասները, որն էլ կատարվեց երեկոյան ժամը 7-ին:

Փետրվարի 25-ի առավոտից թուրքերը հարձակման անցան Տրապիզոնի խճուղով, Աշկալացի կամավորներին հեշտությամբ դուրս մղեցին եւ առանց մարտի հասան մինչեւ Իլլիջա: Իլլիջայում տեղաբաշխված 1-ին հայկ. հրաձգ. գունդը կարճատեւ փոխհրաձգությունից հետո թողեց Իլլիջան եւ հետ քաշվեց դեպի Էրզրում, ուր եւ ժամանեց փետրվարի 25-ի երեկոյան: Այդպիսով, փետրվարի 25-ի երեկոյան ջոկատի բոլոր զորամասերը գտնվում էին Էրզրումում, զբաղեցնելով ամրոցները, դարպասներն ու բերդի պարիսպները: Բերդի պարիսպների տակ, սննդամթերքի պահեստների մոտ, որոնք տեղաբաշխված էին Տրապիզոնի խճուղու վրա, գտնվում էին 1-ին հայկ. հրաձգ. գնդի 2 վաշտեր:

Անդրանիկը 25-ի երեկոյան առանձին զորամասերի հրամանատարների խորհրդակցություն հրավիրեց եւ հայտարարեց, որ առավոտյան պետք է հարձակման անցնել Խարբերդի ու Տրապիզոնի խճուղիներով եւ վերստին գրավել Աշկալայի դիրքերը: Խորհրդակցության ժամանակ, բացի սպայակույտի պետ Զինկելիչից, գնդապետ Մորելից եւ մի քանի խմբապետներից, որոնք պաշտպանեցին Անդրանիկին, մնացած ներկա գտնվողներից ոչ ոք չխոսեց: ...Խորհրդակցությունից հետո, որը երկար չտևեց, գնդապետ Զինկելիչի հետ մասնավոր գրույցում, 1-ին հայկ. հրաձգ. գնդի եւ 4-րդ հայկ. հրաձգ. գնդի գումարտակի հրամանատարները հայտարարեցին, որ իրենց զորամասերի

վրա հույս չունեն եւ անգամ կասկածում են թե արդյոք իրենք կկարողանան նրանց դուրս բերել բերդի դարպասներից: Հայտնի չէ, թե հրամանատարների այդ կարծիքը գեկուցվել էր Անդրանիկին թե ոչ, բայց մինչեւ առավոտյան ժամը 5-ը ոչ մի մարտական հրաման չէր ուղարկվել ջոկատ: Փետրվարի 26-ի առավոտյան ժամը 5-ին Անդրանիկն իր մոտ կանչեց Երզնկայի գնդի հրամանատար կապիտան Հասանփաշայանին եւ հրամայեց անհապաղ նախապատրաստել մեկ գումարտակ եւ այդ գումարտակով ներկայանալ իր սպայակույտ: Փետրվարի 26-ի առավոտյան ժամը 6-ի մոտերքը Երզնկայի գնդի 3-րդ գումարտակը (կազմավորված Ֆամի ջոկատից ու կամավորներից), որը պահեստագործում էր գտնվում, պորուշիկ Մելիքսեթյանի հրամանատարությամբ շարվեց ջոկատի սպայակույտի դիմաց: Առավոտյան 6 1/2 դուրս եկավ Անդրանիկը, կարճ ճառ ասաց եւ ձին հեծած, գլխավորելով գումարտակը Տրապիզոնի դարպասներով, խճուղով շարժվեց Գյոզ գյուղի ուղղությամբ, որը գտնվում էր Էրզրումից 5-6 վերստի վրա: Գումարտակը շարժվում էր գորասյունով: Զորասյան առջեւից, ձիու վրա, գնում էին Անդրանիկը, գնդի հրամանատարը եւ 10 հոգի սպաներ: 2-3 վերստ Էրզրումից հեռանալով հանձնակատարներ ուղարկվեցին առաջ, իմանալու գյուղն արդյո՞ք թուրքերի կողմից գրավված է թե ոչ, միաժամանակ գնդի հրամանատարը խնդրեց Անդրանիկին գումարտակը կանգնեցնել մինչեւ հանձնակատարների կողմից այդ հարցը պարզելը, որպեսզի որոշվի, թե այնուհետեւ ինչպես շարժվի գումարտակը: Անդրանիկը գումարտակը կանգնեցնել շթույլատրեց եւ հրամայեց առաջ շարժվել գորասյունով: Հենց որ հեծյալ հանձնակատարները հասան գյուղից 200 քայլի վրա, նույն պահին էլ գյուղի պաշտպանությունից լավեցին առանձին կրակոցներ, զինվորներն աստիճանաբար սկսեցին ցրվել, բայց Անդրանիկի բղավոցով կրկին հավաքվեցին գորասյան մեջ եւ Անդրանիկը հրամայեց վազքով առաջ շարժվել: Տեղանքը միանգամայն հարթ էր, ոչ մի թաքստոց չկար: Թուրքերը դեռ չէին գնդակոծում գումարտակը, այլ գնդակոծում էին միայն ձիավոր հանձնակատարներին, որոնք շորորավարգով հետ էին վերադառնում: Հենց որ գումարտակը մոտեցավ 1000 քայլի վրա, թուրքերը անմիջապես գյուղից գնդացրային եւ հրացանային փոթորկալից կրակ բացեցին: Նրանց գնդացիրները տեղադրված էին ծայրամասային տների տանիքներին: Գումարտակը ցրվեց բոլոր կողմերի վրա եւ պսակեց ձյան մեջ: Զիավորներն էլ, Անդրանիկի գլխավորությամբ սրարշավ սլացան տների պատերի տակ: 12 հեծյալներից թաքստոցին հասան միայն Անդրանիկի 3 ձիավորներ եւ Երզնկայի գնդի հրամանատարը, մնացած հանձնակատարները սպանվեցին ու վիրավորվեցին: Գումարտակը մեծ կորուստներ կրեց, որոշ զինվորներ տների պատերի տակ հասան սողալով:

Մեկ ժամից տների մոտ հավաքվեց 100-150 զինվոր, որոնք տնից-տուն անցնելով սկսեցին դուրս մղել թուրքերին: Թուրքերն սկսեցին նահանջել դեպի գյուղի արեւմտյան ծայրամասը: Այդ ընթացքում մոտեցան նաեւ գումարտակի մնացած փրկված զինվորները 2«Կոլտ» գնդացիրներով, որոնք օգնեցին թուրքերին դուրս մղելու գյուղից: Թուրքերը գյուղը գրավել էին 2 վաշտերով եւ 4 գնդացիրներով, որը պարզ երեւաց նրանց նահանջի ժամանակ: Դուրս գալով գյուղի արեւմտյան ծայրամաս, Անդրանիկը տեսավ, որ Իլի-ջայի կողմից հետեւվակի մեկ գունդ կազմով գորասյուն է շարժվում՝ 4 հրանոթներով: Թուրքական գորասյունը գտնվում էր Գյոզ գյուղից 2-2 1/2 վերստի վրա: 10 րոպե անց թուրքերը հրանոթները տեղադրեցին հենց խճուղու վրա եւ կրակ բացեցին գյուղի վրա, իսկ հետեւակը, բաժանվելով առանձին գորասյունների, շարժվեց Գյոզի վրա: Անդրանիկը գումարտակին հրամայեց, ճանապարհին վիրավորներին հավաքելով, նահանջել: Գումարտակը մեծ կորուստներ կրեց: Գումարտակի բոլոր սպաները, բացի մեկից, շարքից դուրս եկան: Գումարտակի հրամանատար պորուշիկ Մելիքսեթյանը սպանվել էր, մյուս սպաները վիրավորվել էին, սպանվեց ավելի քան 40 զինվոր եւ վիրավորվեց 125-ը: Թուրքերը գրավելով Գյոզ գյուղը, հարձակում սկսեցին Էրզրումի վրա եւ երեկոյան կողմ գրավեցին պարենամթերքի պահեստները: Երեկոյան ժամը 7-ի կողմերը մարտը դադարեց եւ ջոկատի բոլոր գորամասերը գտնվում էին բերդի պարիսպների ներսում եւ ջոկատին տված հրամանի համաձայն զբաղեցրին՝ 1-ին հայկ. հրաձգ. գունդը՝ Օլթիի դարպասներից մինչեւ Տրապիզոնի դարպասները: Երզնկայի գնդի 6 վաշտեր դիրք էին գրավել Տրապիզոնի դարպասներից մինչեւ Կարսի դարպասները ներառյալ: Հայկական 4-րդ հրաձգ. գնդի գումարտակը՝ Կարսի դարպասներից մինչեւ Օլթիի դարպասներ: Երզնկայի գնդի 1 վաշտ կանգնած էր քաղաքի թուրքական մասում, հրետանային պահեստի մոտ, 1 վաշտ՝ ջոկատի սպայակույտի մոտ, որտեղից վաշտերը պարեկներ էին ուղարկում քաղաք: Երզնկայի եւ Էրզրումի գնդի 3 գումարտակներ էլ գտնվում էին պահեստագործում: Ինչ վերաբերվում է խմբերի վաշտերին, թե նրանք ինչ էին անում եւ որտեղ էին գտնվում, ոչ ոք չգիտեր: Ավելի շուտ նրանք քաղաքում զբաղված էին թալանով, որտեղ անընդհատ հրացանային կրակոցներ էին լսվում:

... Գիշերը սպայակույտում անվերջ վեճ էր գնում այն մասին, թե նահանջի դեպքում պայթեցնել արդյոք ամրոցներն ու հրետանային պահեստները: Սպայակույտի սպաների մի մասը, գնդապետ Մորելի գլխավորությամբ, պնդում էին ամրոցներն ու պահեստը պայթեցնելու վրա: Բերդային հրետանու սպաները, բերդային հրետանու պետ, գնդապետ Տվյորդոխլեբովի զըլխավորությամբ՝ դեմ էին: Գնդապետ Տվյորդոխլեբովին հարցեր տրվեցին,

սկսեցին հետ քաշվել Խարբերդի դարպասներից եւ ողջ ընթացքում, մինչեւ Կարսի դարպասներ հասնելը կորուստներ էին տալիս, ինչպես թշնամու կրակից, այնպես էլ նրանց վրա տներից կրակող բնակիչներից: Խարբերդի դարպասներից ձախ տեղաբաշխված մնացած վաշտերը Կարսի դարպասներ հետ քաշվեցին ավելի հանգիստ իրավիճակում:

Ժամը տասներկուսի կողմերը բոլոր դիրքերը թողնված էին եւ թուրքերը Խարբերդի ու Տրապիզոնի դարպասներից մտան Էրզրում: Սպայակույտն Էրզրումից հեռացավ ժամը 11-ի մոտերքը: Բոլորը հեռացան ցիրուցան: Կարսի դարպասների մոտ արդեն հրհրոց չկար, այնտեղ մնացել էին միայն Երզրնկայի գնդի երկու գումարտակներ եւ Մուրադի ու Սեպուհի ձիավորները: Ցերեկվա ժամը 1-ի կողմերը թուրքական զորամասերը հայտնվեցին ջոկատի նախկին սպայակույտի շենքի մոտ: Կարսի դարպասների մոտից Երզրնկայի գնդի վաշտերը գնդակոծեցին նրանց եւ ոչ մեծ փոխհրամագոությունից հետո, ուղարկելով վերջապահը, այդ վաշտերը թողեցին Կարսի դարպասներն ու խնուրով գնացին դեպի Հասան-Ղալա:

Հետագայում պարզվեց, որ բերդային հրետանու ոչ մի սպա ջոկատի հետ Էրզրումից չի մեկնել: Նրանք, թվով 80 մարդ, հրետանու պետ գնդապետ Տվորդոխլեբովի գլխավորությամբ հանձնվել էին թուրքերին: Գիշերը Երզրնկայի գնդի վերջապահ վաշտերը եւ Մուրադի ու Սեպուհի հեծյալները ժամանեցին Հասան-Ղալա, որն այրվում էր: Գնում էին միայնակ զինվորներ, կամավորներ եւ փախստականներ: Անդրանիկը դեռ երեկոյան էր մեկնել Հասան-Ղալայից եւ այնտեղ մնացել էր գնդապետ Մորելն իր սպայակույտով եւ գնդապետ Ջինկեիչը՝ Անդրանիկի հատուկ ջոկատի սպայակույտի պետը: Բանակային զորամասեր բոլորովին չկային, պարզվեց որ բոլոր զորամասերը խառնվել էին եւ յուրաքանչյուրը գնում էր ինքնիրեն, առանձին: Ոմանք նեղգիծ երկաթուղու վագոններ էին նստել, իսկ ուրիշները՝ գումակների վրա: Գիշերն անցկացրին Հասան-Ղալայում: Առավոտյան Մուրադի 20 ձիավորներ Էրզրումի կողմ ուղարկվեցին հետախուզության: Գնդապետ Մորելը ուրիշների հետ առավոտյան մեկնեց Հասան-Ղալայից: Նրա հետ միասին մեկնեցին նաեւ երզրնկացիների 2 գումարտակ, քանի որ Հասան-Ղալայում որեւէ պարենամթերք չէր գտնվել: Առջեւից գնացող զինվորներն ու կամավորները այրել էին բոլոր պահեստներն ու հեռացել, չմտածելով այն մասին, որ իրենց թիկունքից դեռ զորամասեր են գալիս: Այդ վերջապահում եկողները միանգամայն սոված մնալու ռիսկի էին ենթարկվում:

Ձիավոր հետախուզները վերադարձան միայն կեսօրվա 3-ի մոտերքը եւ հարողեցին, որ մինչեւ բուն Դեկտյոնի նրանք ոչ մի հակառակորդի չեն հանդիպել եւ որ Դեկտյոնիում կան թուրքական առաջապահ զորամասերի սահակակետեր:

Անհամթերքի հետ կապված ճգնաժամային վիճակի պատճառով փետրվարի 28-ի ցերեկվա ժամը 4-ին Երզրնկայի գնդի մնացած գումարտակը եւ Մուրադի ու Սեպուհի հեծյալները առաջ շարժվեցին դեպի Քյոփրի-Քյոյ, որտեղ եւ հասան գիշերը: Քյոփրի-Քյոյում արդեն ոչ ոք չկար, այնտեղ չզրտան նաեւ պարենամթերք, քանի որ բոլոր պահեստները թալանված էին: Գումարտակը գիշերեց Քյոփրի-Քյոյում, բացարձակապես շունենալով որեւէ սննդամթերք: Մարտի 1-ի առավոտյան գումարտակը շարժվեց դեպի Խորասան, իսկ հեծյալները մնացին Քյոփրի-Քյոյում, նրանց մի մասն ուղարկվեց Խնուսի խնուրով, որտեղ Քյոփրի-Քյոյից 5 վերստի վրա հակայական հրետանային պահեստ կար, որպեսզի պայթեցնեն այն, որն էլ կատարվեց Մուրադի ձիավորների կողմից:

Հետագայում մինչեւ Ղարաուրդան ջոկատը գնաց դարձյալ ցիրուցան: Երբ զորասյան գլուխն արդեն Սարիղամիշում էր, նրա վերջը դեռ գտնվում էր Խորասանում:

Անկարգությունն այն աստիճան մեծ էր, որ նույնիսկ հատուկ ջոկատի սպայակույտի պետ գնդապետ Ջինկեիչն իր հետ ոչ մի հանձնակատար չունեւ, այնպես որ նա ստիպված էր միանալու Երզրնկայի գնդի մի քանի սպաների ու զինվորների հետ, որպեսզի սովից չկործանվի:

Ղարաուրդանում բաբելոնյան խառնաշփոթություն էր տեղի ունենում՝ միայնակ զինվորները հեռանում էին դեպի Սարիղամիշ, իսկ այնտեղից՝ ընդհակառակը, շարժվում էին զանազան խմբեր, որոնք Էրզրումը հետ վերցնելու միամտությունն ունեին: Էրզրումը թողնելիս ոչ մի հրաման չէր տրվել ոչ ջոկատի շարժման, ոչ էլ կանգառների մասին: (Անդրանիկի կողմից հրաման տրվել էր, բայց այն կատարողներին ուշ էր հասել: Կազմող): Իրենց հետ մի քանի զինվոր ունեցող սպաները, նրանց հետ գնում էին ուր ցանկանային եւ երբ ցանկանային...

Եվ այսպիսով թուրքական Անատոլիային տիրանալու պատվարը, ավելի ճիշտ՝ բանալին փետրվարի 29-ին կրկին թուրքերի ձեռքին էր: Դա պետք էր սպասել սկսած այն պահից, երբ թուրքերը խախտեցին զինադադարը զանազան չհիմնավորված պատճառներով եւ հարձակման անցան: Այդ խախտումն անսպասելի չէր, դրան միշտ պետք էր սպասել: Ջինադադարի կնքումից հետո 2-3 ամսվա ընթացքում, ընդհուպ մինչեւ Տրապիզոնի խաղության բանակցությունները զանազան պատրվակներով թուրքերի ռազմական գործողությունները, չնայած Կովկասյան ռազմաճակատի հրամանատարական կազմի եւ Կովկասյան ժամանակավոր կառավարության կողմից այդ պատրվակներին տրված հիմնավոր պատասխաններին, ոչ միայն չդադարեցվեցին զինադադարի ուժով, այլ ընդհակառակն իրականացվե-

ցին ավելի անընդհատաբար հապճեպ կարգով: Թուրքիան գրեթե առանց դժվարությունների մեկը մյուսի հետևից վերցրեց 1918 թ. հունվարի 30-ին՝ Երզնկան, փետրվարի 4-ին՝ Բաքերդը, 8-ին՝ Մամախաթունը և վերջապես փետրվարի 29-ին՝ Էրզրումը: Վերջին քաղաքը վերցվեց այն պահին, երբ արդեն սկսվել էին խաղաղության բանակցությունները Տրապիզոնում:

Իհարկե, Էրզրումի անկման լուրը մեզ բոլորիս վրա ծանր ազդեցություն գործեց:

Մարտի 1-ին ես հեռագիր ստացա, որ հայկական կորպուսը վերածվում է առանձին կորպուսի: Ինձ հրամայված էր անհապաղ տեղափոխվել Սարիղամիշ: Բանակի սպայակույտի պետ գեներալ Վիշինսկին նշանակվեց առանձին հայկական կորպուսի սպայակույտի պետ: Հարկ էր բանակի սպայակույտից կորպուսը լրացնել պակասող աստիճանավորներով: Իմ կարծիքով այդ կարգադրությունը շատ ուշացած էր: Երբ թուրքերի հարձակման անցնելուց հետո, օկրուգի սպայակույտի 1918թ. հունվարի 30-ին Գլխավոր հրամանատարի նախագահությամբ անցկացված խորհրդակցության ժամանակ պարզվեց, որ գլխավոր ռազմաճակատն ընկնում է ամբողջությամբ հայկական կորպուսի վրա և որ վրացական կորպուսը սոսկ միայն պաշտպանելու է Բաթումի շրջանը և չնայած իր իշխանությանը, հնարավորություն չունենալով, ստեղծված իրավիճակի շնորհիվ, փոխելու այդ, անհրաժեշտ էր հենց այդ ժամանակ առանձին վերակազմել հայկական և վրացական կորպուսները, բանակի հրամանատարին հետ կանչել, ընդամին այդ կորպուսներին տրվող կարգադրությունները պետք է ելնեին անմիջապես Գլխավոր հրամանատարից:

Նման հրամանի համաձայն ես պետք է մեկնեի գլխավոր ռազմաճակատ և անմիջակաճորեն տնօրինեի հայկական կորպուսը: Անձամբ իմանալով ռազմաճակատի դրությունը, ես կարող էի կորպուսում իմ ունեցած ուժերից, գործի մի մասը կենտրոնացնել հարկավոր կետում: Ես չեմ պնդում, թե այդ կարգադրության շնորհիվ կարելի էր ճակատը փրկել, բայց կարող եմ առանց վախենալու պնդել, որ Երզնկայից նահանջելիս ընդհուպ մինչև Էրզրումի հանձնումը թերությունները, նաև զոհերն ավելի քիչ կլինեին:

Իհարկե, ես ավելի շատ էի շահագրգռված հայկական կորպուսի հաջողությամբ և անվտանգությամբ, քան գեներալ Օդիշելիձեն, դրանում, անշուշտ, ոչ մի կասկած չի կարող լինել: Այդ գեներալը, սկսած այն պահից, երբ պարզվեց, որ գլխավոր ռազմաճակատն ընկած է բացառապես հայերի վրա, ցավոք, ըստ երեւույթին, դրանում համերաշխ էր վրացական կորպուսի հրամանատարի հետ, հակառակ պարագայում ամբողջ ժամանակ չէր պահանջի հայկական զորքեր ուղարկել և իր պարտականություններին չէր սկսի վերաբերվել այդքան անտարբեր: Ես դա պնդում եմ, հենվելով նրա

սպայակույտի նախկին պետ գեներալ Վիշինսկու ինձ ասած խոսքերի և նաև ահա ինչ հիմքի վրա եմ ես դա պնդում: Ռուսական զորքերի տարերային նահանջից հետո, նա ոչ մի անգամ չաշխատեց մեկնել Երզնկա, որպեսզի անձամբ ծանոթանա իրավիճակին և մնացած զորամասերի ոգուն և այդ անձնական դիտարկման հիման վրա որոշման հանգի՝ մնալ հին վայրերում կամ էլ իր ուժերը կենտրոնացնի ավելի բուռնացված, որպեսզի գոնե Էրզրումը հնարավոր լինի պահել: Այդ կերպ իրադրությանը ծանոթանալով, նա պարտավոր էր որոշելու տեղահանել հայ բնակչությանը, թե նրանց թողնել իրենց տեղերում: Քանի որ ռուսական զորամասերի հեռանալով զորքերի իրավիճակը զգալիորեն նվազել էր, ապա նրան մնում էր ռազմաճակատը բեռնաթափել պարենամթերքի, ռազմական հանդերձանքի, համազգեստի և հրաձգային ռազմամթերքի բազմաթիվ պահեստներից, որպեսզի թուրքերին հրճարավորություն չտրվեր զավթելու դրանք և դրա շնորհիվ թուլացվեր նրանց մարտունակությունը: Այդ ժամանակ նրանք դրա սուկալի կարիքն ունեին և առանց այդ պահեստների զգալի ուժերով չէին կարող հարձակվել: Եթե հաշվի առնենք, որ հետախուզությունը ճիշտ էր, որի մեջ ես չեմ կասկածում, ապա նրան պետք է քաջ հայտնի լիներ, որ թուրքերը, իմանալով մեր լիակատար թուլությունն ու տարբեր շահեր ունենալով, հայերի, վրացիների ու մուսուլմանների անհամաձայնությունը, անպայման հարձակման կանցնեն, և եթե դա նրանք իրենք չուզեին, ապա նրանց այդ անել կստիպեին իրենց դաշնակից գերմանացիները:

...Գլխավոր հրամանատարից Սարիղամիշ մեկնելու հրաման ստանալուց հետո, ինձ հաջողվեց գտնել 3-րդ կարգի մեկ վագոն և վաղ առավոտյան սահմանափակ թվով սպայակուսականների հետ մեկնեցի Սարիղամիշ: Երբ գնացքը ժամանեց Սարիղամիշ կայարան, ապա ես ցնցվեցի այն պատկերից, որն այնտեղ տեսա: Ամբողջ կայարանը և երկաթուղու շուրջը լցված էին դժբախտ փախստականներով, որոնք թավալվում էին խորը ձյան մեջ, շատ ավելի խիստ սառնամանիքի պայմաններում, իրենց թշվառ ունեցվածքի մնացորդներով, որոնք չէին կարող նույնիսկ ծածկել նրանց սաստիկ սառնամանիքից ու վատ եղանակից: Փախստականները առավելապես կանայք էին, երեխաներ ու ծերեր, իսկ գեներ կրելու ունակները մեծամասամբ ռազմաճակատում էին: Այդ փախստականների մեջ կային բազմաթիվ ծանր վիրավորներ, որը զարմանալի չէր նման սուկալի իրավիճակում, որի մեջ ստիպված էին ապրելու նրանք, նման տառապանքներով սպասելով իրենց մեկնելուն: Ցավալի էր այդ ամենին նայելն ու նրանց ինչ-որ էական օգնություն ցույց տալու անհնարիանությունն զգալը: Չէր երեւում, որ ինչ-որ մեկը հոգացել է նրանց մասին: Նրանք բոլորն ապրում էին իրենց մեկնումի հա-

մար գնացքների սպասումով եւ գնացքների մոտենալուն պէս բոլորը նետվում էին վագոնների վրա, որպէս խելագարներ, սոսկ ցանկություն ունենալով որքան հնարավոր է իրենց կահկարասիով վագոն խցկվել եւ մեկնել ինչ-որ, թեկուզ եւ անծանոթ տեղ, որը նույնպէս նրանց ուրախություն չէր խոստանում, մեկնել սեփական շարադետ քնից, որն աստիճան էր դարձել նրանց ահոռելի զոհերի ու կյանքի այն ծանր իրավիճակի հետեւանքով, որի մէջ ընկել էին նրանք: Ցավոք, սակայն, քանի որ վագոնների, ինչպէս եւ գնացքների թիվը սահմանափակ էր, ապա վագոն ընկնել շատ քչերին եւ ավելի ճարպիկներին էր հաջողվում: Իմ շեշտված միջնորդությունները այդ նպատակով, ոչ մի իրական արդյունք չէին տալիս: Դրա հետ միասին ԹԻՖլիսում գնացքակազմերի պակասությունը չկար, այսպէս, զանազան, եւ հատկապէս վրացական կազմակերպություններ առանձին գնացքներով հատուկ գալիս էին կրելու Սարիղամիշի հարստությունները: Այդ բոլոր զոհերի, որոնք տալիս էին դժբախտ փախստականները, մեղքն, իհարկէ, ընկնում էր հայկական այն կազմակերպությունների վրա, որոնք տնօրինում էին նրանց եւ որոնք ժամանակին անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելով, կարող էին մեծապէս կրճատել նրանց տառապանքներն ու զոհերը, որոնք տվեցին նրանք հրամանատարական կազմի եւ նրանցով զբաղվող անձանց անձեռնահասության հետեւանքով:

...Հասնելով Սարիղամիշ եւ իմ սպայակույտի ժամանակավոր պետի հետ գնացի բանակի հրամանատարի մոտ: Նա եւ իր սպայակույտի աստիճանավորների մի մասը տեղավորվել էին զնդի նախկին հրամանատարի համար նախատեսված տներին մեկնում: Ժամանելու մասին ներկայացա նրան: Ոչ բարձրահասակ, արագաշարժ, արագախոս եւ խոսակցության ժամանակ մարդկանց աչքերին չնայող, նա ընդհանուր առմամբ առանձնապէս բարեճպաստ տպավորություն չթողեց: Այդտեղ էր գտնվում նաեւ նրա սպայակույտի պետ գեներալ Վիշինսկին, որի հետ ծանոթացա: Նրա մասին եւ Էրիվանյան զնդի նախկին սպաներից բազում գովասանքներ էի լսել: Նա իր բաց դեմքով եւ հանելի ձայնով ինձ վրա լավ տպավորություն թողեց: Ծաշի ժամ էր եւ գեներալ Օդիշելիձեն մեզ ճաշի հրավիրեց: Այդտեղ եւ բանակի սպայակույտներից հանդիպեցի իմ հին ծանոթներ՝ գնդապետ Կուզմիճին, իմ նախկին ծառայակցին Վրացական գնդից, փոխգնդապետ Օլիխտերին, ծանոթ 4-րդ կորպուսից, որի հայրը գումարտակի հրամանատար էր ինձ մոտ Էրիվանյան զնդում եղածս ժամանակ եւ Էրիվանյան զնդի սպա՝ կապիտան Սնարսկուն: Ծաշի ժամանակ խոսակցությունը գնում էր բոլորովին այլ բանի շուրջ, կարծես թե ճակատը գոյություն չունէր եւ ճիշտ գեներալ Օդիշելիձեն չէր ցանկացել ծանոթացնել գոյություն ունեցող վիճակին: Ծա-

շից հետո, երբ մեծամասնությունը ցրվեց, գեներալ Վիշինսկին ինձ առաջարկեց բերելու բանակի սպայակույտի աստիճանավորների ցուցակը՝ առանձին կորպուսին շքավարարող աստիճանավորների ընտրության համար: Ես նրան պատասխանեցի, որ քանզի նա լավ գիտի իր ենթականերին, ապա այդ ընտրությունը եւ հաջորդ օրը զեկուցելն իրեն եմ վերապահում: Նա հաճույքով համաձայնվեց որոշմանս հետ:

Հրաժեշտի ժամանակ գեներալ Օդիշելիձեն մինչեւ իր մեկնումը ինձ իր մոտ ճաշի հրավիրեց: Ես շնորհակալություն հայտնեցի նրան: Երբեմն է, որ նա չէր շտապում մեկնել: Չէ որ նա հանձնելու ոչինչ չունէր եւ կարող էր հաջորդ օրը համարձակորեն մեկնել: Այնուամենայնիվ, չգիտես ինչու նա ինձ ուղարկեց իր վերաբերյալ գրույցի շարժանագրեց եւ ընդհանրապէս երբեմն էր, որ չգիտես ինչու համարում էր ավելորդ՝ կիսելու իր մտքերը որպէս կրտսերի հետ:

Ռազմաճակատում լիակատար անդորր էր: Թուրքերն արբեցած հեշտ հաղթանակով, ըստ երեւոյթին կարգի էին բերում քաղաքն ու մեծ քանակությամբ զավթած զանազան գույքն ու պարենամթերքը: Իրենց հարձակման հարցում նրանք չէին շտապում:

Վերադառնալով մեր վագոնները, որտեղ մենք ժամանակավորապէս տեղավորվել էինք, եւ տեսնելով, որ գեներալ Օդիշելիձեն չի շտապում իր մեկնման հարցում եւ քանի որ սառնամանիքները գիշերներն ուժեղանում էին, եւ հրամայեցի մեզ համար ինչ-որ տեղ ժամանակավոր շինություն էին, եւ հրամայեցի մեզ համար ինչ-որ տեղ ժամանակավոր շինություն կառուցել, եթէ հնարավոր է նաեւ փախստականների, նույնիսկ բոլորի, համար փնտրել, եթէ հնարավոր է մեկնել ժամանակավորապէս տեղափոխվեցինք եւս: Ծիւնությունը գտնվեց եւ մենք ժամանակավորապէս տեղափոխվեցինք: Փախստականների համար ոչ մեծ թվով շենքեր ու ծածկեր ճարվեցին, բայց նրանք կանների համար ոչ մեծ թվով շենքեր ու ծածկեր ճարվեցին, բայց նրանք հրաժարվեցին այնտեղ տեղափոխվել, քանի որ ձգտում էին մոտիկ լինել գնացքներին, որպէսզի հնարավորություն ունենային շուտ մեկնելու:

Հաջորդ օրը հանդիպման ժամանակ գեներալ Վիշինսկին ինձ զեկուցեց, որ նա արդեն նախատեսել է բանակի այն աստիճանավորների գլխավոր պաշտոնյաներին, որոնք հաճույքով կհամաձայնվեն մտնելու հայկական կորպուս: Մատակարարման պետ էր նախատեսվել զնդապետ Կուզմիճին (նա հանձնարարությունների գծով բանակին կից գեներալ էր), սպայակույտի հերթապահ սպա էր նախատեսվել փոխգնդապետ Կոսմոնկուն: Ես ասացի կարծիքս առաջին երկուսի վերաբերյալ, կասկած հայտնելով, թե նրանք արդյոք կարող են զլուխ հանել իրենց նոր պարտականություններից: Դրան նա պատասխանեց, որ նրանք լավ զլուխներ ունեն եւ ինքը հույս ունի, որ նրանք կարող են իրենց պարտականություններից զլուխ հանել եւ բացի այդ՝ ինքն ուղղություն կտա նրանց: Ես համաձայնվեցի նրա ընտրության հետ:

Գեներալ Օդիշելիձեն համաձայն ամենուր բանասրկելու, ուրիշներին ոչ թե լավություն, այլ վատություն անելու իր թշնամավար բնավորությամբ (այդպես բնութագրեցին գեներալ Վիշինսկին, գեղապետ Կուզմինն ու նրա նախկին ենթակաները), սկսեց բոլորին, ովքեր ցանկանում էին մտնել հայկական կորպուս, համոզել չմնալ, ընդ որում խոստացավ նրանց լավ պայմաններով տեղավորել Թիֆլիսում: Բացի բանասրկություններից, խորհում եմ, որ նրան այդտեղ դեկավարում էր նաև հայերի նկատմամբ անբարյացակամությունը: Որոշ փոքրոգիներ, որոնց թիվն աննշան էր, լսեցին նրան եւ հրաժարվեցին: Սպայակույտի աստիճանավորները երկերեսանիության համար նրան բոլորովին չէին սիրում: Վերջապես 5-ին, երեկոյան գնացքով նա մեկնեց: Հայկական կորպուսում մնացած նրա նախկին սպայակույտի աստիճանավորները, գեներալ Վիշինսկու հետ միասին գնացին նրան ճանապարհելու: Գեներալ Վիշինսկին այդ գնացքով կնոջն ու աղջկան ուղարկեց Թիֆլիս: Ես նույնպես հարկ համարեցի գնալ: Նույնիսկ հրաժեշտի ժամանակ նա հաջողացրեց համոզել իր հետ մեկնելու մեկ սպայի, չեմ հիշում սակրավորների կամ ավտոմոբիլային [գումարտակից]:

Նրա մեկնելու հաջորդ օրը ես տեղափոխվեցի նրա բնակարանը, կամ ավելի ճիշտ սենյակը, որը նա զբաղեցնում էր հրամանատարական տանը: Ռազմաճակատի պաշտպանությունն ընկած էր մի քանի հեծյալ կամավորների եւ Թորգոմի գլխավորած Երզնկայի զնդի վրա:

Այդ ժամանակ իր կամավորներով ժամանեց Դալի-Ղազարը: Ինձ նրա մասին ասել էին, որպես քաջ մարդու: Ես ուրախացա նրա գալույտյամբ, կանչեցի, ծանոթացա եւ ուղարկեցի Ղարաուրդան, հրաժեշտի ժամանակ ասելով նրան, որ ճակատի պաշտպանությունը մինչեւ գործերի վերախմբավորումը ընկնում է նրա վրա: Հեռախոսագրով առաջարկեցի գեներալ Արեշելին անմիջապես Սարիղամիշ գալ: Նա դանդաղեց գալ, պատճառ բռնելով վագոնների բացակայությունը: Այնժամ ես կարգադրեցի սպայակույտի աստիճանավորների սահմանափակ թվով, մեկ վագոնով, անմիջապես գալ: Եվ նա հաջորդ օրը եկավ: Ուզեցի այցելել Անդրանիկին, որը Էրզրումի անհաջող պաշտպանությունից հետո փակվել էր եւ ոչ ոքի չէր ընդունում եւ ոչ մի կարգադրություն չէր անում: Ես ուզում էի իմանալ այն ամենի մանրամասները ինչ տեղի էր ունեցել Էրզրումի պաշտպանության ժամանակ եւ որն էր անհաջողության գլխավոր պատճառը: Ամենատարբեր լուրեր էին պտտվում: Ռուսահայերը ողջ անհաջողությունը զցում էին թուրքահայերի, իսկ գլխավորապես խմբերի վրա, իսկ թուրքահայերը՝ ռուսահայերի վրա, որ նրանք չեն ցանկացել կովել: Պարզվեց, որ նա մեկնել է Թիֆլիս:

Դիտեցի 1-ին գունդը եւ 7-րդ գունդը, ինչպես նաև 4-րդ զնդի 1-ին գու-

մարտակը: 1-ին զնդին եւ 4-րդ զնդի 1-ին գումարտակին իմ խորը վրդովմունքը հայտնեցի Էրզրումում նրանց մարտական գործողությունների վերաբերյալ եւ ավելացրի, որ քանի դեռ նրանք իրենց հետագա գործողություններով չեն սրբել այդ բիծը, ես իրենց սրտանց չեմ կարող վերաբերվել:

Նրանց համար հանկարծակի բարեխոս դուրս եկավ 1-ին զնդի հոգետրական Պապայանը, բայց ես նրան նկատողություն արեցի, որ հոգետրական գործը չէ դատել զնդերի մարտական գործողությունների մասին:

Շուտով Խնուսից Սարիղամիշ ժամանեց 2-րդ հայկ. հրաձգ. զնդի 1-ին գումարտակը, որն այնտեղից հետ էր քաշվել Էրզրումի ընկնելուց հետո: Խնուսի ջոկատի պետ գեղապետ Հովսեփյանցը ժամանեց գումարտակից շուտ եւ եկավ ինձ ներկայանալու: Նա ինձ զեկուցեց, որ Էրզրումի անկումից հետո, նա անհնար է համարել այնտեղ մնալը եւ այդ պատճառով մեկնել է այնտեղից: Ինձ նա չկարողացավ հաշվետվություն տալ, ո՞ր եւ ինչպե՞ս է հեռացել իր ջոկատն ու ընդհանրապես ինչպիսի կարգադրություններ է ինքն արել: Իհարկե, դա ինձ շատ զարմացրեց:

Թովմաս Հովհաննեսի Նազարբեկյան:

ՀՀ ՊԿՊԱ, Ֆ. 45, ցուցակ 1, գործ 14, 1-8 թերթեր: Չեռազիր :

ՏԵՏՐ 3-Պ
(Շարունակություն)

Հրաման հղեցի Երեւան՝ գեներալ Սիլիկյանին, շտապ Սարիղամիշ ուղարկելու 4-րդ հայկական հրաձգային զնդի 2 գումարտակները եւ 8-րդ եւ 4-րդ հայկ. հրաձգ. զնդերի նոր ձեւավորված 3-րդ գումարտակները, ինչպես նաեւ 2-րդ հայկ. հրաձգ. զնդի գումարտակները զնդի հրամանատար Սամարցեի հետ, որը Երեւան էր եկել Խնուսից:

ՍԱՐԻՂԱՄԻՇԻ ՇՈՒՐՁ

Մարտի 6-ին Սարիղամիշի ջոկատին տրվեց իմ առաջին մարտական հրամանը: Սարիղամիշի ջոկատի պետ նշանակվեց գեներալ Արեշեւը: Այդ հրամանի համաձայն Ղարաուրղանի եւ նրա շրջանի պաշտպանությունը դրվում էր 1-ին հայկ. հրաձգ. զնդի վրա, Դալի-Ղազարի կամավորների եւ առաջին լեռնային մարտկոցի հետ: Ղարաուրղանինը, Մժնկերտինը եւ Խանդիրինը՝ 4-րդ հայկ. հրաձգ. զնդի ու Սեպուհի եւ Մուրադի խմբերի վրա՝ մեկ լեռնային մարտկոցով, իսկ Էրզրումի ու Երզնկայի զնդերը, 1-ին հայկ. հատուկ հեծյալ գունդը (հրամանատար գորային-ավագ Ջոլոտարյով) եւ առանձին ջոկատի հատուկ դիվիզիոնի 1-ին վաշտի 4 հրանոթներ զնդապետ Մորեյի ղեկավարությամբ՝ Նովո-Սելիմ գյուղինը: Ջոկատին առաջադրանք էր տրված պաշտպանել խճուղու անցումները, գլխավորապես փակել Սարիղամիշը, Կարսը՝ Բաշքյոյով Բարդուսի լեռնանցքից եւ Օլթիի կողմից: Սարիղամիշում պահեստագործում էին թողնվել 2-րդ հայկ. հրաձգ. զնդի մեկ գումարտակ, 7-րդ հայկ. հրաձգ. գունդը 3 գումարտականոց կազմով եւ մեկ էլ մի քանի խմբեր ու կամավորներ ու երկու հետեւակային մարտկոցներ:

1918թ. մարտի 6-ին Գլխավոր հրամանատարի №15 հրամանով զնդապետ Բեժանբեկովը նշանակվեց համահավաք հայկական ջոկատի հրամանատար՝ Անդրանիկի փոխարեն:

Ռազմաճակատում շարունակվում էր անդորրը: Ղարաուրղանից երեւում էին միայն թուրքական սակավաթիվ պահակակետեր Ջեյհնի բնագծերում:

Ես լարեցի բոլոր ջանքերս որպեսզի օգտվեմ այդ անդորրից փախստականներից եւ հարուստ պահեստներից Սարիղամիշի բեռնաթափման համար, իհարկե, ձգտելով առաջին հերթին ուղարկել փախստականներին: Քանի դեռ ռազմաճակատում անդորր էր, թիկունքում, շնորհիվ թուրքական գործա-

կալների քարոզչության, յուրաքանչյուր օր դժբախտություններ էին կատարվում: Մուսուլմաններից, իսկ գլխավորապես քրդերից, ձեւավորվում էին ամբողջ հրոսակախմբեր ու ավազակախմբեր, որոնք հարձակվում էին հայերի ու հույների քրիստոնեական գյուղերի վրա, բռնություններ գործադրում եւ խլելով զենքն ու ունեցվածքը: Որոշ խմբեր նույնիսկ ղեկավարում էին թուրքական սպաներ: Թուրքերն, այդպիսով, քայքայում էին մեր թիկունքը, դրանով նախապատրաստելով իրենց հարձակումը: Բնականաբար, ռազմաճակատում գտնվող զորքերը նյարդայնանում ու վախենում էին իրենց ընտանիքների համար: Նման ծանր ժամանակ հարկ էր լինում այդ հրոսակախմբերին զբաղվելու համար զորքերի մի մասը կտրել ճակատից: Այն քառասյին պատկերը, որը թուրքերը ձգտում էին մտցնել Կարսի մարզում, ամենից լավ արտահայտում է Կարսի մարզի կոմիսարի 1918 թ. մարտի 3(16)-ի զեկուցագիրը. «թուրքերի ու թաթարների շարժումը Կարսի մարզում ընդունում է խոշոր ու կազմակերպված ռազմական գործողությունների բնույթ, մուսուլմանների ջոկատը շրջապատել է Մերդենեկն ու Արդահանը, որտեղ այժմ մարտեր են զենքով: Կարս, Արդահան, Օլթի հեռագրային կապը կտրված է: Այս տեղեկություններն ստացել եմ շրջանցիկ՝ Ախալքալաքի ուղիով: Եղած տվյալների համաձայն Կարսի վրա հարձակում է նախապատրաստվում: Հանուն Անդրկովկասի բանալու, Կարսի-ամրոցի պահպանման, խնդրում եմ լուրջ ուշադրություն դարձնել ստեղծված դրության վրա: Ռազմական կազմակերպությունների եւ ազգային խորհուրդների համատեղ նիստում որոշված է Կարսն ու մարզը հայտարարել ռազմական դրության մեջ եւ ամբողջ իշխանությունը կենտրոնացնել գինվորականների ձեռքում: Իմ պարտքն եմ համարում այդ ամենի մասին Ձեզ տեղեկացնել համապատասխան ցուցումների ու կարգադրությունների համար: Մարզային լիազոր Ձամոյան» («Փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու ...», էջ 119-120):

Ըստ այդ եւ ուրիշ զեկուցագրերի Սեյմը դրանց քննարկմանը հատկացրեց իր մարտի 5-ի նիստը: Մեծամասնությունը պարզորոշ իր կարծիքն արտահայտեց այն մասին, որ այդ հարձակումներում, անկասկած, բացի անիշխանությունից, որը շատ կամ քիչ իշխում է սահմանային շրջաններում, այդ հրոսակներին ղեկավարում են թուրքերի ազդեցության տակ գտնվող մուսուլմաններ: Անշուշտ, դա պարզ էր, բայց չզիտես ինչու վախենում էին ասուլմաններ: Անշուշտ, դա պարզ էր, բայց չզիտես ինչու վախենում էին ասուլմաններ: Անշուշտ, դա պարզ էր, բայց չզիտես ինչու վախենում էին ասուլմաններ: Անշուշտ, դա պարզ էր, բայց չզիտես ինչու վախենում էին ասուլմաններ: Անշուշտ, դա պարզ էր, բայց չզիտես ինչու վախենում էին ասուլմաններ:

Սեյմը իր մարտի 8-ի նիստում որոշում ընդունեց, որպեսզի կառավարությունն այդ անկարգությունները ճնշելու համար ձեռք առնի ամենաեռան-

դուն միջոցառումներ: Դա միայն թղթե որոշման ուժ ունեւր, քանի որ կաւարությունը, հավասարապես նաեւ բարձրագոյն հրամանատարական ղեկավարությունը ոչ մի իրական հնարավորություն չունեւր ճնշելու այդ անկարգությունները:

Իսկ ամենագլխավոր պատճառն այն էր, որ Կովկասի ազգային մասերի միջեւ միասնություն եւ համախմբվածություն չկար, ընդամին բնական էր, որ պայքարի ամբողջ ծանրությունն ընկնում էր միայն հայերի վրա: Վրացիներն զբաղված էին բացառապես Բաթումի շրջանով, իսկ թաթարները, իհարկե ամեն բանում համակրում էին թուրքերին:

ԵՐԵՎԱՆՅԱՆ ՁՈՎԱՏԸ

...Էրզրումի անկումից հետո Խնուսից 2-րդ հայկ. հրաձգ. զնդի մի գումարտակ զնդի հրամանատար զնդապետ Սամարցեի կողմից, ուղարկվել էր Սարիղամիշ, իսկ մյուսը՝ զնդապետ Սամարցեի եւ հրետանու հետ՝ Այաշկերտի հովիտ, իսկ Ախտայի լեռնանցքի վրայով, Կողպով, Իզդիրով՝ Վաղարշապատ: Վաղարշապատ հասնելուն պես այդ գումարտակն իմ կողմից պահանջվել էր Սարիղամիշի ռազմաճակատի համար: Վանի ջոկատը, այսինքն 5-րդ հայկ. հրաձգ. զունդը մարտկոցի ու կամավորների հետ Չինգիլի լեռնանցքի վրայով հեռացել էր դեպի Իզդիր:

Այն ժամանակ, երբ գլխավոր ռազմաճակատում թուրքերի անընդհատ հարձակում էր ընթանում, Երեւանում զնում էր նոր զորամասերի արագ ձեւավորում եւ հների ծավալում: Այդ կարգադրությունների մի մասը դուրս էր գալիս կորպուսից, իսկ մեծ մասամբ արվում էր ինքնական կերպով, հայկական կազմակերպությունների ազդեցիկ անձանց կողմից, առանձին հայկական հատուկ ջոկատի քողի տակ: Բացի այդ կազմավորումներից, իմ կողմից կարգադրություն արվեց Թիֆլիսից 1-ին հայկական հեծյալ զնդի եւ 3-րդ հայկ. հրաձգ. զնդի ուղարկման մասին: Ոչ քիչ աշխատանք պետք եղավ այդ զորամասերը, հատկապես 3-րդ հայկ. հրաձգ. զունդը, Թիֆլիսից ուղարկելու համար: Ազգային Խորհրդին հարկ եղավ նրանց համոզելու: Հրաձիգները բոլորն էլ մատնանշում էին այն, որպեսզի ճակատ մեկնեն Թիֆլիսի բուրժուականները եւ այնուհետեւ նոր իրենք կզնան: Հետագայում ավելի տխուր փաստ պարզվեց, հատկապես այն, որ նրանք Թիֆլիսից մեկնել չէին համաձայնվում այն պատրվակով, որ նրանք պետք են Թիֆլիսում հայերի պաշտպանության համար: Այդպես էր իր մարդկանց սովորեցրել հեծելազորային զնդի հրամանատարը:

...Հեծելազորային զունդն ուղարկվեց ուժեղացնելու Սարիղամիշի ճակատը,

իսկ 3-րդ հայկ. հրաձգ. զունդը Կարսի բերդի կայագրի ուժեղացման համար, քանի որ ես գտնում էի, որ այնտեղ ուժերն անբավարար են: (Ամրոցն ինձ չէր ենթարկվում): Երեւանյան ջոկատի պետ, զեներալ Սիլիկյանի առաջ, նկատի առնելով հարավից թուրքերի հարձակման հնարավորությունը, իմ կողմից խնդիր էր դրվել՝ կասեցնել թուրքերի հարձակումը Դիադին-Վանի մոտ: Նկատի առնելով Երեւանի բնակչության ծայրահեղ նյարդային տրամադրությունը, զեներալ Սիլիկյանն իր սպայակույտը տեղափոխել էր Վաղարշապատ: 1918թ. փետրվարին Երեւանում սկսվեց պարտիզանական զնդի ձեւավորումը (Դրոյի նախաձեռնությամբ): Հետագայում նա հեծյալ ջոկատ կազմավորեց, իսկ գումարտակը հանձնեց զնդապետ Սիլիկին: Փետրվար ամսին զնդապետ Բաղդասարյանի վրա դրվեց Թուրքիայի փախստականներից երկու հետեւակ զնդերով բրիգադի կազմավորումը: Բրիգադի կազմավորումը ձգձգվեց եւ բարդացավ դասալքությունից ու ազգաբնակչության կողմից: Անշափելի դժվարություններով կազմավորվեցին յուրաքանչյուր զնդի երեքական գումարտակ: Այդ զնդերից մեկին ղեկավարում էր զնդապետ Կալտուղչյանը, իսկ մյուսին՝ զնդապետ Յուզբաշյանը: Այդ նոր կազմավորված բրիգադը փետրվարի վերջին ուղարկվեց համալրելու Վանի ջոկատը: Այն ուղարկվեց Իզդիր-Բայազետի վրայով: Սակայն, ամենացավալին այն է, որ այդ բրիգադից մինչեւ Բայազետ հասան 500-ից 600 մարտիկներ, որոնք այլեւս առաջ զնալ հրաժարվեցին եւ հետ վերադարձան Իզդիր, որտեղ նրանց կանգնեցրեց զեներալ Սիլիկյանը եւ հրամայեց կարգի բերել:

1917թ. դեկտեմբեր ամսից կորպուսի գծով իմ հրամանի հիման վրա Քանաքեռում 1-ին զնդի, իսկ Վաղարշապատում՝ 4-րդ զնդի համար կազմավորվում էին 3 գումարտակներ: Այդ կազմավորումը շատ ու շատ դանդաղ էր ընթանում, զլխավորապես դասալքության պատճառով: Այդ գումարտակները պետք է հասցվեին 1000 մարդու՝ յուրաքանչյուր գումարտակում: Թուրքերի հարձակման անցնելու պատճառով, նրանց հետ 4 շաբաթյա ուսուցում անցկացվեց հրացաններից հրաձգության հետ միասին: Էրզրումը թուրքերի կողմից գրավելուց հետո կարգադրություն արեցի այդ գումարտակներն անհապաղ ճակատ ուղարկելու մասին, իրենց զնդերին միանալու համար: Երբ երկաթուղային շարժակազմը նախապատրաստվել էր նրանց ուղարկելու համար եւ նրանց հայտարարվել, որ գումարտակների նստեցումը սկսվում է հաջորդ օրը, ապա այդ գումարտակների զինվորների մեծ մասը փախել էր: Պատժիչ ջոկատը դժվարությամբ կարողացավ հավաքել դասալքների մի մասին եւ լրացնել գումարտակները:

Այդ օրինակից կարելի է դատել ընթացիկ ժամանակաշրջանի նկատմամբ բնակչության վերաբերմունքի բնույթի մասին: Ընդհանրապես ողջ

կազմավորումը դժվարացավ գեների, հանդերձանքի անբավարարության, գումարած էլ այն, որ դասալիքների ու բնակչության կողմից դրանց հափըշտակման հետեւանքով: Զինվորները միշտ դասալքում էին զենքով եւ այն արդեն անհետ կորած էր, քանի որ նրան թաքցնելուն ջերմ մասնակցություն էին ունենում դասալիքների ընտանիքներն ու հարազատները:

Բացի այդ ամենից, տեղական մուսուլմանական բնակչության՝ թուրքական գործակալների քարոզչությամբ գորեղացող թշնամական վերաբերմունքը, առանձնապես ուժեղ ազդեցություն էր թողնում կազմավորումների վրա եւ ընկնում նրանց: Հայկական գյուղերի՝ իրար եւ Երեւանի հետ ունեցած կապն ու փոխադրությունը մեծամասամբ ընդհատված էին հայերի վրա մուսուլմանների ու քրդերի հարձակումների հետեւանքով: Հեռագրային ու հեռախոսային գծերը մեծ մասով մուսուլմանների կողմից ոչնչացված էին:

Մեծ դժվարությամբ գծերը պահպանվում էին բացառապես հայկական բնակչություն ունեցող գյուղերում:

Սուրմալուի գավառի թաթարների ու քրդերի կողմից հարձակման ենթարկվող հայկական գյուղերը, հատուկ նշանակված ջոկատի պաշտպանության տակ մի կերպ տարահանվեցին:

Ուլուխանլու կայարանի շրջանում երկաթուղին գտնվում էր մուսուլմանների ձեռքին եւ ոչ մի հայ, հազվագյուտ բացառություններով, չէր կարող գնացքով անցնել, որը խստորեն ստուգվում էր թաթարների կողմից: Գնացքում բռնված հայը անմիջապես գնացքի մոտ սպանվում կամ անհետ կորչում էր: Միայն հայերի գորեղ, կազմակերպված ու զինված ջոկատները կարող էին անցնել Ուլուխանլու կայարանը: Վերացման համար ձեռք առնվող միջոցառումները միայն ժամանակավորապես էին դադարեցնում այդ շարիքը եւ իհարկե, Թիֆլիսում կառավարության ու Սեյմում եղած մուսուլմանների մեջ անհեղին աղմուկ առաջացնում: Հետաքննության համար նույնիսկ հանձնաժողով էր նշանակված, բայց այնուհետեւ հաջորդող ռազմական գործողությունները Վարսի ու Արդահանի տակ, հնարավորություն չտվին այդ հետաքննությունն ավարտելու: Մուսուլմանների այդ կոտորածների մեջ, որպես գլխավոր նախաձեռնողների մեղադրում էին միայն հայերին: Իսկ, իմիջիայրոց, յուրաքանչյուր ողջախոհ մարդ պետք է հասկանար, որ այստեղ բացի թաթարների ու հայերի միջեւ թշնամանքից, դրան նախօրոք նախապատրաստված ինչ-որ ուժ է գործում:

Երեւանյան ջոկատում փետրվարի վերջին եւ մարտի սկզբին գտնվում էին հետեւյալ զորամասերը՝ 6-րդ հայկ. հրաձգ. գունդը, որը կանգնած էր Վաղարշապատում, գնդին ղեկավարում էր գնդապետ Դուրխանյանը, հետեւակ պարտիզանական գունդը՝ գնդապետ Պերեկրյուստովը, հեծյալ պար-

տիզանական գունդը՝ փոխգնդապետ Կորոկովը: Այդ գնդերը կազմավորվել էին Երեւանում: Քանաքեռում կանգնած էր 2-րդ հայկ. հեծյալ գունդը [որին] հրամայում էր գնդապետ Զալիկյանը, սահմանապահ գումարտակը ղեկավարում էր գնդապետ Սիլիկը, Վանի շրջանից նահանջելուց հետո ժամանեց 5-րդ հայկ. հրաձգ. գունդը՝ ղեկավարում էր գնդապետ Պավել Փիրումյանը: Գունդը տեղաբաշխված էր Ղուրդուղուլույում, 2-րդ հայկ. հրաձգ. գնդի 1-ին գումարտակը՝ ղեկավարում էր գնդապետ Սամարցելը: Այդ գումարտակը շուտով ուղարկվեց Սարիղամիշի ռազմաճակատ Խնուսից հետ քաշված իր գումարտակին միանալու համար: Թիֆլիսից ժամանեց առանձին ջոկատի նոր ձեւավորված Զեյթունի հատուկ գունդը, հատուկ առանձին ջոկատի թուրքահայերի երկու հետեւակ գնդեր, Վանի 1-ին գունդը՝ հրամանատար գնդապետ Յուզբաշյան, Վանի 2-րդ գունդը՝ հրամանատար գնդապետ Զախմախչյան, որոնք գնդապետ Բաղդասարյանի ղեկավարությամբ բրիգադ էին կազմում: Այդ վերջին 3 գնդերն Անդրանիկին էին պատկանում, բայց փաստորեն դրանք տնօրինում էր գեներալ Սիլիկյանը: Երեւանյան ջոկատի մեջ մտնում էին նաեւ կայծային հեռագրի երկու արշավային կայան եւ երեք սավառակ, ստացված նահանջող ռուսական բանակի զորամասերից: Ինչպես օդուժի ջոկատը, այդպես էլ հավասարապես եւ կայծային կայանն իր անձնակազմի անփորձության պատճառով շատ թույլ էին գործում: Բացի այդ բոլոր մարտկոցներից կար հրետանային բրիգադ, յուրաքանչյուր մարտկոցում 4 հրանոթ: Դրանք կազմավորել էր գնդապետ Արարատյանը:

Խնուսից ու Վանից նահանջած կանոնավոր զորամասերի հետ Իգդիր էին ժամանել մի քանի խմբեր, որոնք գնդապետ Սիլիկյանն ուզում էր մտցնել Երեւանյան ջոկատ, բայց նրանցից ոչ-ոք չցանկացավ ենթարկվել զինվորական հրամանատարությանը, դրա համար էլ այնժամ գեներալ Սիլիկյանը հրամայեց բոլորին կազմալուծվել, իսկ ուրիշները թաքնվեցին տարբեր վայրերում եւ ծանր բեռի նման նստեցին բնակչության ուսերին, ինքնագլուխ կերպով բռնագրավումներ ու կողոպուտներ անելով [առաջացրին], բնականաբար, բնակչության զայրույթն այդ խմբերի նկատմամբ:

... Ինչպես վերն ասվեց փետրվարի վերջին Վանի գնդերը գեներալ Սիլիկյանի կողմից ուղարկվել էին Վանի ջոկատի ուժեղացման համար, բայց երկու գնդից մինչեւ Բայազետ էին հասել միայն 400-500 սվին, իսկ մնացածները դասալքել էին:

Վանից 5-րդ հայկ. հրաձգ. գնդի հեռանալու հետեւանքով այդ մնացորդները եւս վերադարձան Բայազետից Իգդիր եւ Զինգիլի լեռնանցքով հետ քաշվելիս Վանի 2-րդ գունդը մարտի մեջ մտավ թուրքական գումարտակի հետ: Գունդը չդիմացավ հակառակորդի ճնշմանը, նահանջեց մեծ անկարգու-

թյամբ եւ կորուստներով: Գնդի հրամանատար գնդապետ Չախմախչյանը Օրգով գյուղի մոտ իր մնացորդներով մարտի մեջ մտավ թուրքական ջոկատի հետ: Թուրքերի կողմից կտրված լինելով թեւից, իր վաշտերից լքված, 20 զինվորների հետ միասին երկար մարտնչեց, սակայն գնդակից խոցված սպանվեց, նրա մարմինը թողնվել էր եւ միայն մի քանի քաջ մարդկանց շնորհիվ հաջողվեց նրա դիակը դուրս բերել: Նա թաղված է Վաղարշապատում, ս. Գայանե եկեղեցու գավթում:

...Ինձ համար անկեղծորեն ցավալի էր որպես լավ սպա եւ անժամանակ զոհված հրամանատար:

Կորպուսում նման արժանավոր սպաների թիվը, որոնց վրա էր գլխավորապես հույսը, նվազում էր անընդհատ:

Վանի բրիգադը, այն կարգի բերելուց եւ համալրվելուց հետո, դրվեց Նախիջեւանի կողմից հարձակման դեպքում թուրքերի եւ թաթարների դեմը Շարուրի կողմից փակելու համար:

ՍԱՌՊԱՄԻՇԻ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԸ

Հակառակորդը, չհաշված թուրքական կանոնավոր բանակի աննշան ուժերի՝ քրդերի ու թաթարների հետ համատեղ աննշան հարձակումները, Երեւանի կողմում ակտիվություն չէր դրսևորում:

Մարտի սկզբներին Սարիղամիշի ռազմաճակատում դեռ հանգստություն էր տիրում եւ հակառակորդը ոչ մի ակտիվ գործողություն չէր ցուցաբերում: Դա ինձ խիստ զարմացնում էր, քանզի թուրքերը գերազանց տեսնում էին, թե որքան թույլ էին հայկական ուժերը: Ես օգտվեցի այդ հանդարտությունից: Նահանջից հետո քայքայման հասած զորամասերը քիչ թե շատ կարգի բերվեցին, դրանք ուժեղացվեցին եւ մոտեցվեցին զորացնելու Սարիղամիշի ռազմաճակատը:

Արագացված տեմպերով շարունակվեց Սարիղամիշի բեռնաթափումը փախստականներից եւ անշափ հարուստ պարենամթերքի, համազգեստի, զինամթերքի ու հրաձգային պաշարների պահեստներից: Պահեստների մոտ թափված էին կտոր շաքարի, ձավարի ու պահածոների զանգվածներ: Ես այդ բոլորը, հավասարապես եւ փախստականներին, ունենալով սահմանափակ թվով զնացքներ ուղարկում էի Ալեքսանդրապոլ, որտեղից էլ, Ղարաքիլիսա: Երեսան չէի ուղարկում, քանի որ այն ես հաշվում էի անհուսալի: Սակայն, հետագայում, պարզվեց, որ իմ ենթադրությունը չարդարացավ: Հարկ էր այդ ամենի մի մասն ուղարկել Երեսան: Հատկապես ուժեղ կրում էին վրացիները:

Նրանք ավելի մեծ թվով վագոններ ու զնացքներ ունեին: Մի զնացքը մյուսի հետեւից գալիս ու հեռանում էր բեռնավորված: Իսկ ինձ այդ պայմաններում Թիֆլիսում մերժում էին վագոններ ավելացնելուց: Լինելով երկաթուղու կայանի հեռագրային գրասենյակում, գեներալ Արեշելը լսել էր, թե ինչպես Թիֆլիսի քաղաքային վարչությունից ուղիղ գծով, եթե չեմ սխալվում Գեգեչկորի ազգանունով մի կնոջ միջոցով, կարգադրել էին, որ «Տեղափոխեք ամեն ինչ, եթե զնացքները քիչ են, ապա գրահագնացք կուղարկվի»: Դրա հետ մեկտեղ, երբ ես ստանձնեցի ջոկատի հրամանատարությունն ու Թիֆլիսին խնդրեցի մարտական նպատակների համար երկրորդ գրահագնացքն ուղարկել, ապա դա մերժեցին ինձ այն պատճառաբանությամբ, որ չկա:

...Համաձայն կորպուսի գծով իմ հրամանի, գեներալ Արեշելը Սարիղամիշի ջոկատի հրամանատարությունն ստանձնեց մոտ մարտի 6-ին: Առաջին հերթին մենք նրա հետ ավտոմեքենայով գնացինք դիտելու Ղարաուրդանն ու նրա շուրջն զբաղեցրած զորամասերը: Դիտումից հետո ես մի քանի դիտողություններ արեցի եւ թարգմանչի միջոցով մարդկանց մի քանի խոսք ասացի: Թուրքերի կողմից լիակատար անդորրություն էր, առանձին պահակակետեր էին երեսում Ջեփնի բնագծերում: Շուտ հարձակվելու ցանկության մասին ոչինչ չէր նախագուշակում:

Երեկոյան կողմ վերադարձա Սարիղամիշ: Հաջորդ օրը ժամանեցին Ազգային խորհրդի մի քանի անդամներ նախագահ Ահարոնյանի ղեկավարությամբ: Նրանց հետ ժամանեց նաեւ կորպուսի նախկին լիազոր Դրոն: Պարզվեց, որ Դրոն իր վրայից վար էր դրել այդ պարտականությունը եւ ցանկացել լինել ռազմաճակատում ու պայքարել հակառակորդի դեմ: Նրա փոխարեն լիազոր էր նշանակվել Հակոբ Քրիստափորի Ջավրյանը:

Դրոն հենց հաջորդ օրն էլ մեկնեց առաջավոր ջոկատ Ղարաուրդանի ուղղությամբ, որտեղ նա ջոկատի պետ էր նշանակվել: Միայն սպաների ու զինվորների մեջ նրա ունեցած հեղինակության, ինչպես նաեւ խիզախության շնորհիվ, կարելի է համարձակորեն ասել, նա կանգնեցրեց հակառակորդի բուռն գրոհը եւ մենք կարողացանք ավելի տեսականորեն մնալ Սարիղամիշում:

Մի քանի օր անց, ես Արեշելի հետ զնացի Կարակուրտի շրջան: Այնտեղ ես մենք միասին դիտեցինք զբաղեցրած բնագծերը եւ ես, ինչ-ինչ ցուցումներ տալով հետ վերադարձա: Վերադառնալով ես իմացա, որ թուրքերը Ղարաուրդանի ուղղությամբ հարձակման են անցել: Ցավոք, նաեւ իմացա, որ թուրքերի առաջին գրոհի ժամանակ Դալի Ղազարի ջոկատը փախել է եւ նա մնացել է միայնակ իր մի քանի հավատարիմ աշխարհագրայինների հետ: Իսկ ընդ որում, այդ ջոկատի տոկոսության հետ, շնորհիվ հայերի պատմածների, ես հույսեր էի կապել:

Ես անմիջապես սենյակումս խորհրդակցության հավաքեցի սպայակույտի պետին, գեներալ Արեշելին, գեներալներ Կուզմինին եւ գեներալ Ղամազյանին: Այդ խորհրդակցությանը խնդրեցի ներկա գտնվել Ահարոնյանին եւ Ազգային խորհրդի անդամներին: Գեներալ Արեշելը պնդում էր անմիջապես Կարս նահանգելու վրա: Ես դրան դեմ էի, քանի որ դեռ սպառնացող ոչինչ չէր կատարվել, բացի դրանից դաշտային զորքերը երբեք բերդ չեն մղտցրվում. նույնիսկ նահանջի ժամանակ դաշտային մարտական գործողությունների համար նրանք պետք է գտնվեն բերդի թեւերում, իսկ ամենագլխավորը՝ հարկավոր էր ձգտել հնարավորին չափ երկար պահել Սարիղամիշը, որպեսզի հնարավորություն տրվեր այն բեռնաթափել, ազատել փախստականներից, իսկ Կարսի բերդն առավելագույնս պատրաստել համառ պաշտպանության համար: Գեներալ Վիշինսկին եւ այդտեղ ներկա գտնվող ուրիշներ համաձայնվեցին ինձ հետ: Դրանից հետո սպայակույտի պետին հրամայեցի Սարիղամիշը համառորեն պաշտպանելու հրաման տալ: Գեներալ Արեշելը դեռեւս, չգիտես ինչու, Բարդուսի լեռնանցքով շրջանցման էր սպասում, այսինքն, այն բանի կրկնությանը, ինչը տեղի էր ունեցել 1914թ. դեկտեմբերին: Սակայն, ես նրան հանգստացրի նրանով, որ իմ վրա եմ վերցրել Բարդուսի շրջանի հսկողությունը եւ նրա ջոկատը շրջապատումից ապահովելը: Ծիշտ է, մեր ուժերը սակավ էին սարիղամիշյան բնագծերի պաշտպանության համար, բայց հակառակորդն էլ օժտված չէր զգալի ուժերով: Հակառակորդի վերաբերյալ մեր հետախուզությունը շատ թույլ էր: Մենք ճշգրիտ չգիտեինք ինչպիսի գորամասեր, եւ հատկապես, որքան թուրքեր էին հարձակվում: Մենք այն գիտեինք, այդ տեղամասում [նրանք] թվապես ոչ միայն չէին գերակշռում մեր ուժերին, այլեւ անգամ մեզնից քիչ ունեին, սակայն՝ անհամեմատ բարձր որակի՝ բոլոր առումներով: Թուրքերի հարձակման անցնելուց հետո դասալիքների թիվը մեզանում զգալիորեն աճեց եւ ես սկսեցի տագնապալի զեկույցներ ստանալ առաջապահ զորամասերից: Ազգային խորհրդի անդամներն այդ պարագայից տագնապած, առաջարկեցին ինձ կազմակերպել դաշտային դատարաններ: Սակայն ես չընդունեցի եւ անհ թե ինչի հիման վրա. առաջինը՝ ես փորձից գիտեի, այդ միջոցը չի կարող օգնել, եթե զանգվածը գիտակցություն չունի թե հանուն ինչ բանի պետք է ինքը մարտնչի: Երկրորդը՝ ես համարում էի, որ գործը, որը մենք կատարում էինք, ազգային եւ ժողովրդական գործ է դրա իրականացմանը պետք է հետետեն ժողովրդի կողմից, որպես ժողովրդի ներկայացուցիչներ ընտրված անձինք: Եվ առաջարկեցի նրանց դաշտային դատարան կազմել իրենցից, առավել եւս, որ Սարիղամիշում գտնվող անդամների թվում կային Հայոց ազգ. խորհրդի կողմից առանձնացված ռազմական մասնաճյուղի անդամներ,

անդամներից մեկը՝ Ստեփան Մամիկոնյանը, նույնիսկ կատարում էր կարծես թե ռազմական նախարարի գործառույթներ (ֆունկցիաներ): Նրանք համաձայնվեցին իմ փաստարկների հետ: Ստեղծեցին դաշտային դատարան երեք անձից, մի քանի դատապարտումներ իրականացրին, այսինքն երեք կամ չորս հոգու դատապարտեցին մահվան: Իմ խոսքերն արդարացան՝ դասալքությունը որեւէ չափով չսակավացավ:

Ահարոնյանը, Ազգ. խորհրդի անդամների հետ, երեկոյան զննարկով մեկնեց Կարս: Սարիղամիշում մնաց միայն մի քանի մարդ՝ Արսեն Ծահմազյանը, Վահան Նավասարդյանը եւ այլք: Նրանք ջոկատի հետ մնացին մինչեւ Սարիղամիշից նահանջը: Նավասարդյանը հետագայում ինձ ասաց, որ գործնականում առաջին անգամ էր տեսնում, թե ինչպես կարելի է դեկավարել գործը, ավելի ճիշտ՝ ջոկատը, գտնվելով նրանից հեռու: Գիշերը Գլխավոր հրամանատարից եւ հեռագիր ստացա սպայակույտի հետ անհապաղ վերադառնալ Ալեքսանդրապոլ:

Իմ կողմից Սարիղամիշում թողնվեցին հետեւյալ ուժերը՝ 1,2,4,7-րդ հայկ. հրաձգ. զնդերը 3 գումարտականոց կազմերով, մեկ գումարտակի հաստիքները՝ 1000 սվին, բայց, իհարկե, ուժեղ դասալքության պատճառով հաստիքների թիվը զգալիորեն չէր հերիքում, Դալի-Ղազարի կամավորական ջոկատը, կամավորներն իրենց գլխավորներով եւ Սեպուհի ու Մուրադի հեծելազորը, կամային ու դաշտային 4 մարտկոց՝ մեկ մարտկոցում 4 հրանոթով: Նովոլեռնային ու դաշտային 2 հետեւակ բրիգադ՝ Էրզրումի ու Երզնկայի Սելիմում կար հատուկ ջոկատի 2 հետեւակ բրիգադ՝ Էրզրումի ու Երզնկայի զնդերով, հատուկ ջոկատի 3 գումարտակ եւ մեկ հեծյալ գունդ, մեկ զրահ-զննարկ, որը պատրաստ կանգնած էր Բեզլի-Ահմեդում, 1-ին հայկական հեծյալ գունդը եւ մոտենում էր ռուսական սպայական գունդը զնդապետ Եֆրեմովի հրամանատարությամբ:

Կարսի բերդում կար՝ 3-րդ հայկ. հրաձգ. գունդը, ուժեղացված կազմով պահեստի գումարտակը եւ բերդային հրետանային գունդը, սակրավորների բերդային սակրավոր վաշտը, ռուսական ու հունական կամավորական զորամասեր եւ հատուկ ջոկատի 1-ին հեծյալ գունդը, 2 դաշտային մարտկոց եւ բերդի հրետանին, կային նաեւ մի քանի սավառնակներ:

Ալեքսանդրապոլում էր գտնվում իմ պահեստի զորամասը՝ 8-րդ հայկ. հրաձգ. գունդը 3 գումարտականոց կազմով՝ յուրաքանչյուր գումարտակում 1000 մարդ (1 1/2 ամիս ուսուցված, դիտավորյալ ոչ մի տեղ չէի ուղարկել եւ օգնության վերաբերյալ բոլոր խնդրանքներին այդ զնդից, ամուր ոգով համախումբ գունդ ունենալու համար, ոչ ոքի չէի տվել, պահեստի մեկ գունդ ունենալու համար), սակրավորների գումարտակ, պահեստի հեծյալ հարյուրակ, եւ դաշտային երկու մարտկոցներ:

Չայլա-Օղլիում կար Լոռու, Ղազախում՝ Ղազախի գունդը: Դեռ կար նաև Ղարաբաղի հատուկ ջոկատը, որն ամբողջ ժամանակ թափառում է ոչ մի կերպ Ղարաբաղ չէր ընկնում: Այդ բոլորից բացի տարբեր վայրերում էլի դեռ կային որպես թե կազմակերպված վաշտեր ու գումարտակներ, ինչպես Ախալցխայում էլ ուրիշ տեղերում:

Ինչպես երեսում է վերը շարադրվածից, կազմավորված էին զգալի թվով զորամասեր էլ չնայած խոշոր դասալքությանը, թուրքերի հարձակման ժամանակ մեր ուժերն անպայման թվով գերազանցում էին նրանց: Եվ այդ ուժերը լիովին բավարարում էին, որպեսզի ոչ միայն կանգնեցվեր թուրքերի սկզբնական հարձակումը, այլ նույնիսկ հաջողություն ունենայ: Ցավոք, սակայն, այն թերությունները, որ այդ զորամասերն ունեին, հնարավորություն չէին տալիս իրագործելու դա էլ այդ պարագան իմ մեջ մեծ տառապանքներ ու վիշտ էր առաջացնում:

Ահա այդ թերությունները՝ 1) զորամասերի հրամանատարները մեծամասամբ թույլ էլ անկործ էին, նրանց մի մասը, ցավոք, տարբեր առիթներով ամենաանհրաժեշտ պահին նույնիսկ բացակայում էր, 2) սակավ բացառություններով սպայությունը թույլ էր, նրանց վրա միայն հենվում էին զորամասերը էլ յուրաքանչյուր կորուստը մարտական առումով ծանր ազդեցություն էր թողնում զորամասի վրա, (նույն բանն էր նաև ոռուսական զորքերում), զինվորները տհաճությամբ էին ճակատ մեկնում, պետք էր լինում զանազան առիթներով հարկադրել նրանց, 4) ինչպես սպաները, այնպես էլ զինվորները հավասարապես ներծծված չէին այն ոգով ու եռանդով, որն առաջնորդում է հաղթանակների ու ազատության, 5) լավագույն հայ սպաները խուսափում էին այդ աշխատանքից, միգուցե նրա համար, որ չէին հավատում գործի հաջողությանը, 6) վերջապես, ինչպես սպաները, հավասարապես նաև զինվորները, հատկապես վերջինները վարակված էին այն քայքայումով, որը իշխում էր ամենուր, իսկ ամենագլխավորը՝ բոլորն ուժասպառ էին եղել տեսական պատերազմից:

Բացի բոլոր վերը շարադրվածից, նոր ձեւավորված զորամասերը հնարավորություն չունեին համախմբվելու ըստ կազմերի, ձուլվել իր սպայության հետ էլ ուսուցում անցնել: Դրա համար էլ անընչաճ շրջանցումը խուճապի էր մատնում նրանց: Բարձր հրամանատարությունն էլ փորձ չունեւ: Մեծամասնությունը զնդերի, նույնիսկ գումարտակների հրամանատարների [մակարդակ] ունեին: Դառնալով խոշոր զորամասերի (բրիգադ, դիվիզիա) պետեր, նրանք ինքնուրույն ջոկատի [պետի՝ թրգ.] դերում, մեծ կամ փոքր չափով, կորցնում էին զլուխները էլ չէին կարողանում ղեկավարել, առավել էս որ իրենց ձեռքի տակ սպայակույտերի փորձառու պետեր չկային:

Մարդկանց վրա մեծապես ազդում էր էլ այն, որ նրանք վախենում էին գերի ընկնելուց, իմանալով, որ թուրքերն իրենց չեն գթա:

Ես խորապես համոզված եմ, որ եթե ոռուսական կորպուսին հաջողվեր ձեւավորել թեկուզ էլ մի քանի գորամասեր էլ ուղարկել ճակատ, ապա հայկական զորամասերն ավելի կայուն դուրս կգային:

...Մի քանի օր անց ուսումնականից վերադարձավ կորպուսային լիազոր Հակոբ Քրիստափորի Զավրյանը, ինչպես էս արդեն նկատել եմ, նա փոխարինում էր Դրոյին: Նա հաղորդեց ինձ, որ իրեն գործով ուղարկում են Մոսկվա, որտեղ նրան հարկ կլինի Բեռլին մեկնելու: Նա ներկայացրեց իր տեղակալ Սարգիս Մանասյանին²² էլ այդ ժամանակ ասաց, որ նա ավելի աշխատունակ կարող է լինել այդ տեղում էլ ինձ ավելի մեծ օգուտ կբերի, քան ինքը, էլ որ էս նրանից լիովին զոհ կմնամ: Ինձ համար ափսոս էր Հակոբ Քրիստափորովիչից բաժանվելը, քանզի մենք միասին աշխատել էինք 1914թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին՝ Պարսկաստանում էլ, իհարկե, լեզու գտել: Ես նրան խորապես հարգում էի որպես գաղափարական մարդու, որը հանուն գործի իրականացման չէր ափսոսացել իր կյանքն ու փայլուն կարիերան, որն սպասում էր նրան, եթե նա Թուրքիա չգնար, հրաժարվելով ճոխությունից էլ կյանքի հանույքներից՝ հանուն իր ժողովրդի:

...Հանուն արդարության հարկ է ասել, որ իմ նոր լիազորի հետ էս շուտ լեզու գտա էլ զնախատեցի նրան: Աշխատանքը մեզ մոտ տարվում էր առանց որեւէ բանակոխվելի: Արտաքինից պարզ էր, բայց շատ բանիմաց, փորձառու, ազնիվ, իր ժողովրդին լավ իմացող, շատ սթափ հայացքներով, սպավորիչ էլ աղմկալից գործեր չսիրող էլ մեծ հայրենասեր:

Ես միշտ հիշում եմ անտեղի զոհված հանգուցյային: Նրանք, ովքեր ձեռք էին բարձրացրել նրա վրա, եթե նրա հայացքներն իմանային, երբեք այդ չէին անի: Ես սրտանց ողբում եմ նրա մահն ու խորապես ափսոսում, որ նրան այդպես անգութ ձեւով ուրիշի մեղքերի համար զրկեցին հայերից, ում նա այնքան հարկավոր էր: Ես միշտ հանույքով եմ հիշում համատեղ աշխատանքը կորպուսի սպայակույտում: Կորպուսի սպայակույտը կրկին տեղավորեցին առետրական ուսումնարանի շենքում: Նիստերի դահլիճին կից մեծ սենյակում, էս տեղավորվեցի սպայակույտի ու մատակարարման պետերի հետ, իսկ իմ կողքի սենյակում՝ լիազոր Սարգիս Մանասյանը: Ծնորհիվ նրա մոտիկության էս միշտ տեղյակ էի այն գործերից, որոնք նա ստիպված էր քննել, իսկ նա աշխատում էր վաղ առավոտից մինչեւ գիշեր: Նա նույնպես, շնորհիվ այդ մոտիկության, տեղյակ էր ինչ էլ արվում կորպուսում:

Ալեքսանդրապոլ ժամանելու հաջորդ օրը կանչեցի կորպուսային ինժեներին, նրան ցույց տվեցի Սարիղամիշից մեր դաշտային զորքերի նահանջի

դեպքում իմ կողմից նկատի առնված բնագծերը: Այդ բնագծերը հետևյալն էին՝ 1-ին գիծը՝ Ենգիջա-Բեզիրգան-Քեչիկ-Նովո-Սելիմ, Կարանկազ-Տիզնի-Փասլի եւ Ադ-Բաբա լեռ, 2-րդ գիծը՝ Հարամ-Վարդանից մինչեւ Բեզիր-Ահմեդ եւ Ադա-Ռեպե լեռ:

Աշխատանքի համար թույլատրեցի բանվորներ վերցնել թույլտվություն առնելով քերդի պարետից եւ ներգրավել մերձակա գյուղերի բնակիչներին, որոնք դրանք դեռ չէին լքել:

Ռազմաճակատ եկած առաջին հայկ. հեծյալ գունդն իմ կողմից կանգնեցվեց Բեզիր-Ահմեդի մոտ: Այդ գնդի հրամանատար Հովսեփ Բեկ-Փիրումյանը խրվել-մնացել էր Կարսում եւ չնայած իմ բազմակի հրամաններին չէր մեկնում գունդ: Այնժամ ես զրկեցի նրան գունդը ղեկավարելուց եւ փոխզնդապետ Շահնազարյանին հրամայեցի ստանձնելու գնդի հրամանատարությունը: Որոշ ժամանակ անց ես իմացա, որ շնորհիվ քերդի լիազորի եւ որոշ կուսակցական երեւելի աշխատողների նա գրեթե նշանակվել էր բրիգադային հրամանատար հատուկ առանձին ջոկատի հեծելազորում:

Նման բաներն, իհարկե նույնպես իրենց ազդեցությունն ունեին հրամանատարական կազմի ոչ թե դրական, այլ բացասական հատկությունների վրա:

Այդ ժամանակ ինձ հետ հեռագրեր փոխանակեց զորքերի, ավելի ճիշտ վրացական առանձին կորպուսի նոր նշանակված հրամանատար գեներալ Գաբաելը: Որոշ ժամանակ անց ես նրան խնդրեցի վրացական կորպուսի հսկողության տակ վերցնել Արդահանի շրջանը (իրականում էլ այդ շրջանը պետք է գտնվեր վրացական կորպուսի հսկողության տակ), բայց նա ինձ այդ մերժեց, պատճառ բռնելով, որ ինքը դրա համար ուժեր չունի: Եվ ընդ որում, նրա հեռագրում խոսք էր գնում մեկը մեկին եղբայրաբար օգնելու մասին: Ես այդ կողմից սպասում էի թուրքերի խորը շրջանցմանը եւ վրացիներն էլ հարկ է, որ նույն Ախալքալաքի ու Ախալցխայի վրա Արդահանի կողմից սպասեին:

Վերջապես Գլխավոր հրամանատարի հրամանով Կարսի քերդը ենթարկվեց ինձ: Բարդուսի լեռնանցքի հսկողությունը դրվեց գնդապետ Մորելի Նովո-Սելիմի ջոկատի վրա, որն այդ ուղղությամբ անընդմեջ հետախուզություն էր վարում, բացի դրանից, իմ կարգադրությամբ, այդ շրջանը լուսավորում էին Կարսի քերդից ամեն օր իմ հրամանով ուղարկվող սավառակները: Առայժմ տազնապալի ոչինչ չկար, սուկ քրդերի ոչ մեծ հրոսակախմբերի հարձակումներ եւ փոխհրաձգություններ էին:

...Իմ կողմից Ալեքսանդրապոլ քաղաքի պարետ նշանակվեց գեներալ Տեր-Հակոբյանը: Նա քիչ աշխատանք չունեւ, քանի որ տարբեր կողմերից

կամավորների ոչ մեծ խմբեր էին գալիս, այդպես էլ երբեմն զգալի խմբեր էին գալիս՝ սպաներով: Նրանք առավելապես Կովկաս էին ուղղվում Ռուսաստանի կենտրոնից, ուղղաճակատից՝ բանակի նահանջելուց հետո: Դա գրեթե միակ միջոցն էր Կովկաս՝ հայրենիք հասնելու: Հարկավոր էր նրանց տեղավորել, իսկ հետո ճակատ ուղարկել:

Նրանց մեծամասնությունը քիչ էր մտածում ինքնուրույն կամ ինքնավար Հայաստան ստեղծելու մասին եւ եթե այսպիսիները կային էլ, ապա, ցավոք, նրանք սուկ առանձին մարդիկ էին, որոնք մեծ մասամբ զենքը ձեռքերին գլուխները վար դրեցին մարտական դիրքերում:

Բացի այդ, գեներալ Տեր-Հակոբյանի վրա էր ընկած փախստականների, Սարիղամիշից բերված պարենամթերքի, հանդերձանքի, համազգեստի եւ հրետանային արկերի ու ինժեներական գույքի դատարկումը: Խնդիրը հեշտ չէր, հատկապես զնացքների սահմանափակ թվի պայմաններում: Դաշնակցական կուսակցության ներկայացուցիչներից մեկը, որը Շարաֆյանի հետ միասին մեծ դեր էր խաղում եւ հսկայական ազդեցություն ուներ բնակիչների վրա՝ բժիշկ Տերտերյանը, ինձ առաջարկեց, որ ինքը կհավաքի քաղաքի բնակիչներին եւ որ ես նրանց դիմեմ հայրենասիրական ճառով: Դա, նրա կարծիքով մեծ ազդեցություն կունենար քաղաքի բնակիչների ոգին բարձրացնելու եւ դասալիքների թրիվը՝ զգալիորեն կնվազեցնելու: Ես հաճույքով համաձայնվեցի այդ առաջարկության հետ: Մարդիկ հավաքվեցին, ժողովուրդ շատ կար: Այդժամ Ալեքսանդրոպոլյան փողոցի եկեղեցական հարթակից եւ հայրենասիրական համառոտ ճառով դիմեցի ժողովրդին, ասելով, որ Հայաստանի ճակատագիրը լիովին կախված է իրենցից: Նրանք պետք է բոլոր ուժերը լարեն ոչ միայն թշնամուն կանգնեցնելու, այլեւ նրան շարդելու համար: Մենք դրա համար բավարար ուժ ունենք, միայն պետք է, որ յուրաքանչյուրը ներշնչվի հանուն հայրենի ու Հայաստանի իր կյանքը զոհելու մտքով եւ այլն: Խոսեցի ոչ առանձնապես երկար: Իմ ճառը, որը ես ասացի ուսերեւելով, թարգմանեց բժիշկ Տերտերյանը: Նա փայլուն էր տիրապետում հայոց լեզվին եւ հոնտորական տաղանդ ուներ: Իմ ճառը տևեց 10-15 րոպե, իսկ նա տարածվեց, ուժեղ պաթոսի մեջ ընկավ եւ խոսեց գրեթե կես ժամ: Նա իր ճառով այն աստիճան ցնցեց հավաքված ժողովրդին, որ շատերը լաց եղան եւ ես նույնպես արտասվակալեցի: Մարդիկ երդվեցին, որ բոլորը զենքը ձեռքին ճակատ կզնան: Ծառով նրանց դիմեց նաեւ գեներալ Արեշեվը՝ հայրենի լեզվով: Հավաքավայր նշանակվեց առետրական ուսումնարանի մոտ՝ հաջորդ օրը: Մենք հեռացանք շատ զոհ մեր հաջողություններից եւ անհամբեր սպասեցինք հաջորդ օրվան: Բայց մեզ սպասում էր մեծ հիասթափություն: Հաջորդ օրը առետրական ուսումնարանի մոտ ոչ մի մարդ

չեկավ: Ես եւ բծիշկ Տերտերյանը խիստ ցնցված էինք այդ պարագայից:

Հիշողությանս մեջ մնաց եւ հետեւյալ դէպքը: Ես մի անգամ կորպուսի սպայակույտից իմ սովորական զբաղմունքներից հետո՝ ժամը 3-ին դուրս եկա առետրական ուսումնարանի մուտքի մոտ եւ տեսա մի քանի զինված կանանց: Բնականաբար, հետաքրքրվեցի թե բանն ինչում է: Այդ կանանցից մեկը, Ահարոնյանի ազգականուհին, ճակատ ուղարկելու խնդրանքով դիմեց ինձ: Հայրենասիրական եւ վեհագնիվ պողոթման համար ես նրանց շնորհակալություն հայտնեցի եւ նրանց ասացի, որ իրենց աշխատանքը ճակատում առանձնահատուկ մեծ օգուտ չի կարող բերել: Դա ապացուցել էր Բոշկարյովայի կանացի գումարտակը եւ խնդրեցի նրանց, որ ավելի լավ է ուղևորվել գյուղերն ու շեները եւ քարոզչություն անել դասալքության դեմ եւ բոլոր ուժերով ձգտել ժողովրդի մոտ բարձրացնել տրամադրությունը, մարդկանց բացատրել ընթացիկ շրջանի կարեւորությունը: Նրանք շնորհակալություն հայտնեցին ինձ խորհրդի համար եւ խոստացան կատարել դա:

...Թիֆլիսից մարտ ամսվա առաջին կեսին հետեւյալ բովանդակությամբ հեռագիրը ստացա. «Հրամայում եմ Ձեզ Կարսում թողնել միայն 3 օրվա պարենամթերք, իսկ մնացածը, ինչ կա Կարսի բերդի պահեստներում, անմիջապես բեռնել, դրանք ուղարկելով Թիֆլիս: Ռազմական նախարարի փոխարեն՝ գեներալ Օդիշելիձե»: Այդ հեռագիրն ինձ ապշեցրեց սուկալիորեն: Մենք, եւ հատկապես Կարսի ամրոցի պարեն գեներալ Դեւելը, բոլոր ուժերը լարել էինք, որպեսզի ամրոցը պատրաստենք համառ պաշտպանության, իսկ այստեղ՝ եւ՛ ինձ եւ՛ իմ սպայակույտի պետի համար անհասկանալի հեռագիր: Մենք Ալեքսանդրապոլում բացարձակապես անտեղյակ էինք այն ամենից ինչ տեղի էր ունենում Թիֆլիսում, Սեյմում, ինչպես նաեւ Տրապիզոնի խաղաղության բանակցություններում: Մենք կարծես թե կատարելապես կտրված էինք Թիֆլիսից: Ոչ ոք մեզ դրականապես լուրեր չէր տալիս Թիֆլիսից, նույնիսկ Ազգային խորհրդում ռազմական նախարարի դեր ունեցող Ստեփան Մամիկոնյանն ու իր օգնական Ռուբեն Տեր-Մինասյանը, ռազմական գերատեսչության կողմից ոչ մի տեղեկություն չէին գրում: Թիֆլիսից իմ մեկնելու նախօրեին Միքայել Հովհաննեսի Բաբաջանյանն ինձ խոստացավ ժամանակ առ ժամանակ տեղեկացնել, սակայն մինչեւ Օդիշելիձեից հեռագիր ստանալը ես նրա կողմից ոչ մի տեղեկություն չունեի: Օդիշելիձեի հեռագիրն ինձ զարմացրեց հետեւյալ պատճառներով. առաջին, ինչու մարտական հրամանը դուրս է եկել ռազմական նախարարից եւ ոչ թե զլխավոր հրամանատարից, որին ես անմիջականորեն ենթարկվում էի, երկրորդ, նման հեռագիրը նշանակում էր, որ չգիտես ինչու ցանկանում են Կարսը գրեթե առանց դիմադրության հանձնել, այն ժամանակ, երբ մենք բոլորս հույս ու-

նեինք, որ այնտեղ քիչ թե շատ դիմադրություն ցույց կտանք, ծայրահեղ դեպքում մեկ ամիս, երրորդ, չէ՞ որ նման հրամանը հսկայական բարոյական նշանակություն կունենար բերդի եւ նույնիսկ դաշտային զորքերի վրա, որոնք զգայուն էին ամեն մի լուրի նկատմամբ, յուրովի վերաբերվելով դրանց, վերջապես, չորրորդ, ինչո՞ւ ես պետք է պարենամթերքն ուղարկեմ Թիֆլիս, եւ ո՛չ թե Ղարաքիլիսա կամ Երեւան:

Խորհելով այդ ամենը եւ խորհրդակցելով իմ սպայակույտի պետի հետ, ես որոշեցի այդ կարգադրությունը չկատարել եւ որպեսզի դուրս գամ տհաճ դրությունից որոշեցի խոսել իմ լիազոր Մանասյանի հետ: Երբ նրան հաղորդեցի գեներալ Օդիշելիձեի հեռագրի բովանդակությունը, նա նույնպես ուժեղ զարմացավ: Ես նրան հաղորդեցի, որ նման կարգադրությունը հոգուս ձայնով ես չեմ կարող կատարել եւ եթե ռազմական նախարարն ինձ հարցապնդում անի, ապա ես կպատասխանեմ նրան, որ այդ կարգադրությունը ես հանձնել եմ կատարելու հայկական կազմակերպությանը: Նա արդարացրեց ու համաձայնվեց փաստարկներին հետ:

Մի քանի օր անց ես իրոք սպառնալից հեռագիր ստացա գեներալ Օդիշելիձեից՝ հարցապնդումով, թե ես ինչո՞ւ մինչ այժմ չեմ իրականացրել իր կարգադրությունը, ընդ որում, նա ինձ սպառնում էր, որ կարգադրությունը չկատարելու դեպքում կենթարկվեմ պատասխանատվության: Նրան ես պատասխանեցի, որ իր կարգադրությունն իմ կողմից հանձնվել է Ալեքսանդրապոլի ու Կարսի կազմակերպություններին իրականացման համար, քանի որ բոլոր պահեստներն ու ողջ պարենամթերքը գտնվում է նրանց ձեռքին: Այդ կերպ փակվեց այդ գործը եւ գեներալ Օդիշելիձեն այլեւս ինձ չէր ըստառնում:

Սպայակուտականներից ո՛չ ոք անձնական կյանքի մասին մտածել անգամ չէր կարող: Սպայակույտում աշխատանքներն սկսվում էին ժամը 8-ից մինչեւ 3-ը, դրանից հետո ճաշ ու հանգիստ էր, այնուհետեւ կրկին աշխատանք սպայակույտում մինչեւ գիշերվա ժամը 11-12-ը: Այդ ժամանակ միայն մի անգամ ինձ հաջողվեց գոնե մի թեթեւ ցրվել: 2-րդ հայկ. հրաձգ. դիվիզիայի կազմացման հանձնաժողովն Ալեքսանդրապոլում, իմ նախկին տեղակալի զխսավորությամբ, ավարտեց դիվիզիայի գործը: Դիվիզիայի պետ գեներալ Օքրագոյվը, պատերազմում իմ լավագույն գործընկերը, անձամբ իր եւ սպաների կողմից հրավիրեց ինձ եւ գեներալ Տեր-Հակոբյանին, իրենց հետ անցկացնել վերջին երեկոն: Երեկոն կազմակերպված էր համեստ, ընկերական: Այն անցավ գրույցով եւ անցյալի հիշողություններով: Սակայն, այդ երեկոյին էլ, ես նստել էի կարծես թե ասեղների վրա, քանի որ ամբողջ ժամանակ գեներալ Արեշելից տազնապալի լուրեր էի ստանում եւ գեներալ

Տեր-Հակոբյանին նույնպես չէին թողնում հանգիստ նստելու, բոլորը գալիս էին երեկոյան տեղի ունեցած պատահարների, գլխավորապես դասալիքների մասին զեկույցներով: Ծիշտ է, դա սովորական երեւոյթ էր, բայց շատ տհաճ էր, քանզի ամեն անգամ ինձ, ինչպես նաեւ իմ լիազորին, սուկայի նյարդայնացնում էր:

Կարսի բերդը արագ կերպով շարունակում էր պատրաստվել պաշտպանության: Եռանդուն էի իր նախկին ծառայությունից գործը լավ իմացող պարեն Դեւեր լարել էր բոլոր ուժերը բերդն այնպիսի վիճակի բերելու, որ թուրքերը հեշտությամբ չկարողանային տիրել այն, ինչպես դա տեղի ունեցավ Էրզրումի հետ: Ամեն օր ուժեղացված պարապմունքներ էին զնում էի ցերեկային ու գիշերային տագնապներով ստուգվում էր զգոնությունը: Մերդեմնեկի ուղղությամբ հեծելագործի հատուկ ջոկատի օգնությամբ տարվում էր դիրքերի հետախուզություն էւ սավառակներով՝ Բարդուսի ուղղությամբ:

Այդ ժամանակ էս առանձին մարդկանցից ու խմբերից մի քանի հեռագրեր ստացա, եթե հիշողությունս չի դավաճանում, դրանցից մեկը Երեւանից, Արամից էր, այն մասին, որպեսզի էս իմ վրա վերցնեմ դիկտատորություն: Բայց իհարկէ այդ հեռագրերին էս առանձնակի նշանակություն չէի տալիս: Դիկտատոր լինելու համար պետք է ունենալ ուժեղ կամք էւ դաժան բնավորություն, որը ոչնչի առաջ կանգ չի առնի առանց որեւէ գթության: Իսկ էս դրանով պարծենալ չեմ կարող: Ես միայն ունեցել էմ հաստատական բնավորություն: Մեթողաբար տարել էի հասել էմ նրան, ինչը էս համարել էմ օգտակար, անհրաժեշտ տվյալ ժամանակի էւ հայտնի նպատակի հասնելու համար: Եվ ամենագլխավորն այն է, որ ճակատում գտնվելու ընթացքում անմիջական շփում ունենալով ինչպես հայ բնակչության, հավասարապես նաեւ հայերից կազմված հատուկ զորամասերի հետ, էս եկել էմ այն տխուր եզրակացությանը, որ մեր ժողովուրդը բացարձակապես չի պատրաստվել ինքնուրույն կյանքի: Գոյություն ունեւ միայն մի աննշան մաս իշխող կուսակցության գլխավորությամբ, որը մտածում էր այդ մասին, հոգ տանելով հասնելու դրված նպատակին: Ժողովրդի մեծամասնությունը մտածում էր իր օջախի, իր ընտանեկան կյանքի, իր տնտեսության մասին: Հարկավոր էր դաստիարակության միջոցով հասնել այն բանին, որ նա հասունանա դրա համար էւ այնժամ հեշտ կլինի հասնել նրան , ինչ նա ցանկանում էր:

...1918թ. մարտի 21-ին Մ.Հ. Բաբաջանյանից [տեղեկատվական] նամակ ստացա: «Մեծարգո Թովմաս Հովհաննեսի: Ձեր նամակը տխրեցրեց ինձ, բայց էս շնորհակալ էմ անպաճույճ հաղորդման համար: Մեր հանրային գործիչները պետք է իմանան ճշմարտությունը: Մեր ռազմական ուժը միակ հիմքն է, որն անհրաժեշտ է ինչ էլ որ պատահի զորացնել: Մեր ֆինանսա-

կան դրությունը լիովին բավարար է էւ Դուք չպետք է ամաչեք ոչ մի ծախսից: Ձեր գործն է պահանջել, մերը՝ կատարել: Հաջորդ նամակներում կհաղորդեմ մեր ֆինանսական գործերի մասին: Առաջարկում էմ մի հատված իմ ընկերոջ նամակից, որին էս վստահում էմ: Մարտի 17-ի նամակը այսօր ստացա Տրապիզոնից: Դուք կտեսնեք թուրքերի դիրքորոշումը: Նույնն էն ասում այստեղի երեւելի թաթար գործիչները, որոնց հետ էս բանակցություններ (մասնավոր) էմ վարում: Բայց գթության վրա հույս դնելը դժվար է, եթե չդրսետրենք առավելագույն կայունություն էւ զգուշություն: Նույնիսկ զգուշ քաղաքականության հաջողության համար անհրաժեշտ էն Ձեր հաջողությունները ռազմական գործում: Էրզրումի նահանջը թեւեր է տվել հակառակորդներին էւ վհատեցրել մեզ: Թեկուզ էս փոքրիկ ռազմական հաղթանակն զգալիորեն կբարձրացնի տրամադրությունը, որը շնայելով ոչ մի բանի այնուամենայնիվ ամրապնդվում է:

Հորիզոնում ուրվագծվում են երկու երեւոյթներ՝ մեծամասնականների հանդէս գալն ու որոշ ժամանակահատված անց անգլիացիների երեւան գալը: Բաքվում մեծամասնականները ելել են թաթարների դէմ: Այսօրվա էւ վաղվա թերթերը տեղեկություններ կպարունակեն Բաքվի իրադարձությունների մասին: Այսօր երեկոյան ուղիղ հեռագրաթելով հաղորդեցին, որ հանդարտություն է սկսվել, հրաձգությունը դադարել է: Բուլշեիկները պահանջում են՝ Թիֆլիս-Բաքու, Բաքու-Պետրովսկ ուղիների բացում, թաթարների զինաթափում էւ խորհրդային իշխանության ճանաչում: Թաթարները խոստանում են բաց թողնել հայկական զնացքաշարերը, մինչէ 6000 հոգի թվաքանակով: Մեր քարեկամները (ընդգծված է նամակի հեղինակի կողմից) մեզ խորհուրդ են տալիս մեծ մասը թողնել Բաքվում, առայժմ նրանց մտադրությունները դեռ չգիտեմ:

Բաքվից այսօր հաղորդեցին, որ մեծամասնականներն Աստրախանից ու Պետրովսկից համալրում են ստանում: Մեծամասնականների հետ էն բոլորը, բացի թաթարներից, որոնք հույս են կապում դադատանցիների ու թուրքերի հետ: Դրությունը բարդանում է, բայց նոր իրավիճակը քարեկամ է (ընդգծված է նամակի հեղինակի կողմից) մեր դիրքը:

Քաղաքական պայմանների մասին կգրեմ հաջորդ նամակում: Սրտանց ցանկանում էմ Ձեզ առողջություն էւ հաջողություններ: Կձգտեմ կատարել ձեր ցանկությունները: Կսպասեմ Ձեր հանձնակատարներին: Անկեղծորեն Ձեզ հարգող էւ նվիրված Միք. Բաբաջանյան»: Մեջբերում ընկեր Մ. Հ. Բաբաջանյանի նամակից, որի մասին նա հիշեցնում է իր 1918թ. մարտի 21-ի նամակում «Անձամբ: Մեր դրությունը ծանրագույն է: Պաշտոնական բանակցություններն ընդհատվեցին պատվիրակության մի մասի մեկնումով,

բայց շփումները շրճհատվեցին: Մի քանի օր դրանից առաջ մերոնք թուրքական պատվիրակության համար կազմակերպել էին թեյախմություն եւ թուրքերն այնտեղ առանձին անձանց հետ մասնավոր գրույցներում բացահայտեցին թուրքական կառավարության տեսակետն ու փաստարկները: Թե որպիսիք են վերջիններս կարելի է դատել հետեւյալ արտահայտություններից. նրանց չի բավարարում հայերի շարդը Թուրքիայում, ինքնավարության մերժումը, բայց նրանք պահանջներ են դնում կովկասահայերի առաջ՝ դառնալ թուրքական կառավարության գործիք եւ օգտագործել ամբողջ ազդեցությունը որպեսզի Կարսի, Արդահանի եւ Բաթումի սանջակները զիջվեն առանց դիմադրության եւ բարեկամական հարաբերություններ հաստատվեն Թուրքիայի հետ: Թաթարներն ասում են, իրենք չեն ցանկանում մարտնչել թուրքերի դեմ, բայց հայերի հետ էլ պատերազմ չեն ցանկանում, իսկ հայերին հեշտ է ընդհարեցնել իրենց հետ, վրացիները թույլ են, ռազմունակ չեն եւ դիմադրություն չեն ցույց տա: Բաթումը պետք է նրանց, իբր թե, որպես ուժեղ խարիսխ Սեւ ծովում ընդդեմ Ռուսաստանի ու Բուլղարիայի, որի գորեղացումն սպառնում է Կոստանդնուպոլսին. Կարսն անհրաժեշտ է Էրզրումի պաշտպանության համար: Ինքնավարություն Թուրքիայում չեն կարող թույլ տալ, քանզի Թուրքիան ռազմական պետություն է, իսկ թուրքերն անկիրթ են, իսկ մշակութային ինքնավար մարզերի զարգացումը սպառնում է Թուրքիայի կործանմանը: Պատերազմի դեպքում նրանք սպառնում են կովկասահայերի ոչնչացումով: Իրադարձությունները Երեւանի նահանգում, ասում են նրանք, միեւնույն չեն թուրքերի համար եւ կարող են նրանց առիթ տալ շարժվելու Կովկասի խորքերը, իսկ այնտեղ, որտեղից թուրք զինվորն է անցնում, ոչ մի հայ չի կարող մնալ: Հայերը իրենց դավաճանությամբ իրենց դեմ են ապստամբեցրել թուրքերին եւ իսկական գործի մեջ ծառայություններ մատուցելով եւ լավ վերաբերմունքով կարող են վաստակել թուրքերի գթությունը եւ փախստականներին իրենց տեղերը վերադառնալու թույլտվություն: Մինչեւ հայերի դիրքորոշումների պարզումը Թուրքիայում մնացած հայերին խնայելու ցուցում է տվել կառավարությունը, դիմադրելու դեպքում վերջիններին կործանում է սպառնում: Հայեր Թուրքիայում մնացել են 200000 հոգի, նրանցից 80 հազարը՝ Միջագետքում: Ոչ մեծ թվով հայերն օգտակար են Թուրքիային՝ տնտեսական ու ֆինանսական նկատառումներով, նաեւ որպես հույներին հակաթույն, որոնք մոտ 4 միլիոն են: Բայց հայերի շատ գորացումը Թուրքիայում նրանք թույլ չեն տա եւ որեւէ արտոնությունից նրանք չեն կարող օգտվել»:

Այդ հայտարարությունը բխում է Կոստանդնուպոլիսից երկու պրոֆեսորներից եւ եթե անգամ դրանք ընդունենք որպես վախեցնելու համար ասված,

դրանցով մենք կարող ենք դատել, թե մենք ում հետ ենք պայմանագիր կնքում եւ ինչ կարող ենք մենք ապագայում սպասել թուրքերից, եթե մեզանում չլինի ազգի ու կուսակցությունների միասնություն, խիստ կարգապահություն եւ հաստատուն, զգույշ քաղաքականություն: Կարող ենք, սակայն մենք հուսալ դա, եթե Սեյմը նույնիսկ այսպիսի պահի շարունակում է վտանգավոր ազգային փորձարկումները եւ դրանով իսկ բնակչության մի մասին մղում թուրքերի գիրկը: Ըստ մեր պատվիրակության մի քանի անդամների, ծայրահեղ դեպքում արդեն կարելի է տեսնել վերջին ազարային օրենքի ազդեցությունը: Թաթարական զանգվածը, եւ ոչ միայն վերնախավերը, չեն համակերպվում ընկերային փորձարկումներին, իսկ այստեղ Կովկասի վտանգն է: Թաթարների, հատկապես նրանց վերնախավերի տրամադրություններին էլ թուրքերը հիանալի ծանոթ են եւ մեր պատվիրակությունը դա հատկապես զգում է գրեթե յուրաքանչյուր օր»:

Այդ քաղվածքի հետ եւ ծանոթացրի կորպուսի բարձր ղեկավար անձանց, համարելով, որ այդ նամակի բովանդակությունը նրանց ցույց կտա, թե մենք ինչ ծանր կացության մեջ ենք գտնվում եւ որ մեր համառ դիմադրությունը, եւ արդեն չեն խոսում հաջողության մասին, մեզ գոնե հնարավորություն կտա ստիպելու թուրքերին փոխելու իրենց հրեշային պահանջները եւ դրանով բարելավել մեր վիճակն ապագայում, բայց ինչպես կերեւա հետագա իրադարձություններից՝ դա ազդեցություն չգործեց ոչ սպաների, ոչ էլ զինվորների ոգին բարձրացնելու վրա:

Գեներալ Արեշելը էլի դեռ պնդում էր Սարիղամիշից նահանջելու վրա եւ ընդհանրապես նյարդայնանում էր: Ողջ ընթացքում եւ էլ պնդում էի Սարիղամիշի համար սպառնալից կացություն չէի տեսնում: Ռազմաճակատից հակառակորդն առանձնակի եռանդով վրա չէր տալիս, իսկ Բարդուսի կողմից Արեշելի ենթադրած շրջանցման սպառնալիքը չէի տեսնում: Այդ թեւի (մեր աջի) հսկողությունը դրված էր գնդապետ Մորելի ջոկատի վրա: Նա այդ դրել էր Երզնկայի գնդի վրա՝ մի քանի հրանոթներով եւ հատուկ ձիավոր գնդի հեծյալ գնդի վրա: Գունդը, հրանոթներն ու մի հարյուրակ կանգնած էին Նովո-Սելիմում, իսկ մնացած հարյուրակներն զբաղեցրել էին Բեզիրգան-Ջոյուչուկ, Ենգիջա գյուղերն ու Մերդենեկի կողմից մեկ գյուղ՝ 20 վերստ հյուսիս-արեւելք Նովո-Սելիմից: Թուրքական կանոնավոր զորամասեր այդ կողմից մինչեւ մարտ ամսի 20-ը չէին երեւացել: Հետախուզության ժամանակ հարյուրակներն էին միայն հանդիպել զինված քուրդ հրոսակների, որոնց հետ ամեն օր բախումներ էին ունենում:

Սավառնակները, որոնք երկու օրը մեկ բաց էին թողնվում Կարսից (բեն-

գինի պակաս էր զգացվում) Բարդուսի ուղղությամբ, նույնպես առայժմ այդ կողմից թուրքական կանոնավոր զորամասերի շարժում չէին նկատել:

ՆԱՀԱՆՋԸ ՍԱՐԻՂԱՄԻՉԻՑ

Մարտի 23-ին առաջին անգամ զեկույց ստացվեց, որ Բարդուսի լեռնանցքի վրայով դեպի Բաշքոյ գյուղն է իջել թուրքական կանոնավոր զորքերի ոչ մեծ շարասյուն: Ստացված տեղեկությունների ստուգման համար Նովո-Սելիմի ջոկատի պետի կողմից մարտի 24-ի գիշերը Բեգիրզան-Քյուշուկից ուղարկվեց հետեւակի 1 գում. եւ մեկ հարյուրակի ուժ ունեցող ջոկատ, իսկ այդտեղից ջոկատը պետք է լուսադեմին դուրս գար դեպի Բաշքոյ: Բաշքոյ գյուղին չհասած՝ 3-4 վերստի վրա հունական մի գյուղ կա (արդեն լքված բնակիչներից): Այդ գյուղի մերձակայքում հետախույզները բախվեցին թուրքական պահակային պաշտպանությանը: Կարճատեւ մարտից հետո թուրքերն սկսեցին նահանջել դեպի Բաշքոյ, որից 1 վերստի վրա նրանք դիրքեր գրավեցին: Գումարտակն սկսեց հարձակվել թուրքական դիրքերի վրա, սակայն նրանց 1200 քայլի չափ մոտենալուն պես, նրանք զնդացրային ու հրացանային ուժեղ կրակ բացեցին: Գումարտակն ստիպված էր կանգ առնել եւ իր հերթին նույնպես զնդակոծել: Քիչ սպասելով թուրքերն իրենք անցան հարձակման, բայց զնդացրային եւ հրացանային կրակով նրանք հետ մղվեցին: Ցերեկվա մոտ ժամը մեկին Սարիղամիչի կողմից սկսեցին հասնել խլացուցիչ պայթյուններ: Մարտը թուրքերի հետ շարունակվեց: Նրանք ցանկանում էին շրջանցել մեր գումարտակի աջ թեւը, սակայն նրանց մտադրությունը խանգարեց կրակոցների վրա 1-ին հայկ. հեծյալ զնդի ժամանումը (գունդը տեղաբաշխված էր Նովո-Սելիմից 20 վերստ հյուսիս-արեւելք ընկած գյուղում):

Ցերեկվա ժամը 4-ին զնդապետ Մորեյից՝ ջոկատի պետից, հրաման ըստացվեց անմիջապես հետ քաշվելու Նովո-Սելիմ գյուղից, [որովհետեւ] մեր զորքերի կողմից Սարիղամիչը մաքրվել էր մարտի 23-24-ին: Հրամայված էր, որ 2 վաշտ թողնվի հարյուրակներին օգնության: 1 վաշտը՝ Ենգիջայում, իսկ մյուսը՝ Բեգիրզան-Քյուշուկում: Գումարտակի հրամանատար պորուչիկ Իշխանյանին հրամայված էր պաշտպանվել զբաղեցրած դիրքերում մինչեւ մութն ընկնելը, որից հետո երկու վաշտերով հետ քաշվել Ենգիջա, իսկ երկու վաշտն ուղարկել Բեգիրզան-Քյուշուկ, որտեղ եւ զբաղեցնել եղած լավ դիրքը Բեգիրզան-Քյուշուկի բարձունքում (մատուռով լեռ): 1918 թ. մարտի 24-ի առավոտյան եւ հեռագիր ստացա զեներալ Արեշեւի օգնական զնդապետ

Բեյ-Մամիկոնյանից, որ զեներալ Արեշեւը հիվանդացել է եւ որ ինքն ըստանձնել է Սարիղամիչի ջոկատի հրամանատարությունը: Սարիղամիչի հետագա պաշտպանությունը համարելով վտանգավոր, ի նկատի առնելով Բարդուսի լեռնանցքի կողմից թուրքերի շրջանցումը, քանի որ այդ շրջանցումը իր ջոկատի համար կտրվելու սպառնալիք է, որոշել է նահանջել: Մարտի 23-ից-24-ը ջոկատը կարգով հետ կքաշվի: Պահեստները պայթեցված են:

Ինձ սուկայի ապշեցրեց այդ հեռագիրն իր անսպասելիությամբ: Միգուցե եւ տեղակալ նշանակեի ուրիշին, երկրորդ, հապճեպ կերպով Սարիղամիչը դատարկելու եւ նահանջելու համար հարգելի պատճառներ եւ չգտա: Թուրքերի աննշան ուժերով այդ շրջանցումը, որն առկա էր, Սարիղամիչի ջոկատի համար լուրջ սպառնալիք չէր կարող լինել: Լուրջ շրջանցում կատեցնելու համար ձեռքի տակ եւ շոշափելի թվով զորք ունեի, ավելի ճիշտ՝ Մորեյի ջոկատը (հետեւակի երկու գունդ, հետեւ. մեկ գումարտ., 3 մարտկոց հրետանի եւ հատուկ ձիավոր գունդ), 1-ին հայկ. հեծյալ գունդը, ոռոսական սպայական ջոկատը եւ դրանց բացի 8-րդ հայկ. հրաձգ. գունդն ու սակրավորների գումարտակն Ալեքսանդրապոլում: Այդ վերջին զորամասերը եւ միշտ կարող էի ճիշտ ժամանակին եւ կարիքի դեպքում նետել նակատ, ծայրահեղ դեպքում Կարսից վերցնել 3-րդ հայկ. հրաձգ. գունդը, իսկ իմիջիայնոց Սարիղամիչի դիրքերը պահելն ուներ հսկայական նշանակություն, հատկապես խաղաղ բանակցությունների ժամանակ, էլ չսսած զորքերի բարոյական ոգու համար դրա նշանակությունը: Վերջապես, եթե եւ որեւէ սպառնալից վտանգ տեսնեի, ապա միթե դա եւ թույլ կտայի եւ հետ քաշվելու համար սպառնալիք տեսնեի, ապա միթե դա եւ թույլ կտայի եւ հետ քաշվելու համար ինքս կարգադրություն չէի անի: Հետագայում, Արեշեւի Թիֆլիս հեռանալուց հետո, պարզվեց, որ նահանջի մասին կարգադրություններ արվել էին իր՝ Արեշեւի կողմից, իսկ նահանջի մասին հրամանը նա խնդրել էր ստորագրել Բեյ-Մամիկոնյանին: Արեշեւը, երեւում է, չէր ուզեցել անձամբ խախտել իմ կարգադրությունները:

Սպայակույտի պետ Վիշինսկին արդարացիորեն վրդովված էր Արեշեւի այդ արարքից: Ես խորապես համոզված եմ, որ եթե Արեշեւի ինքնաներշնչումը չլիներ, Սարիղամիչը դեռ զգալի ժամանակ, քանի դեռ թուրքերը շոշափելիորեն չէին զորացել, կարելի էր պահել:

Այս կամ այն կերպ պետք էր հաշտվել Սարիղամիչի դատարկման փաստի հետ: Հեռախոսով կարգադրություն արեցի զբաղեցնելու նախապես պատրաստված բնագծերը՝ Նովո-Սելիմ, Բեգլի-Ահմեդ գծի վրա եւ ներառյալ Աղբաբա լեռը: Բեգիրզան-Քյուշուկում իր տնօրինումներն անելուց հետո Երզնկայի զնդի հրամանատարը մարտի 24-ի վաղ առավոտյան մեկնեց Նովո-Սելիմ՝ իր գունդը: Մոտենալով գյուղին, նա տեսավ Սարիղամիչի

չոկատի գումակներն ու գորամասերը: Նրա բառերով՝ նահանջն անկանոն էր: Տեսնելով նման կացությունը, գնդի հրամանատարն իր գնդի գումարտակներից մեկին կարգադրեց դիրքեր գրավելու Նովո-Սելիմ գյուղից 2 վերստ հարավ՝ Կարա-չայ գետից մինչև Բաշքենդ գյուղում հատվող ճանապարհը: Սկսած այդ վայրից պետք է զբաղեցնեին Բեզիրգան-Քյուչուկում տեղաբաշխված վաշտերը: Մինչև մարտի 24-ը Սարիղամիշից նահանջող գրեթե բոլոր վաշտերն անցան Նովո-Սելիմն ու հավաքվեցին Բեզիր-Ահմեդում: Այնուհետև, ավելի ձախ՝ Երզնկայի գնդի գումարտակը, որը մինչ այդ կանգնած էր Նովո-Սելիմ գյուղից 6 վերստ հեռու, Կարսի խճուղու վրա, պահեստազորում:

Մարտի 25-ին, առավոտյան ժամը 7-ին, թուրքերը հարձակում սկսեցին Նովո-Սելիմ գյուղի, ինչպես նաև Նովո-Սելիմ կայարանի վրա (որն զբաղեցրել էր) 7-րդ գունդը: Թուրքերին հաջողվեց Երզնկայի գնդի վաշտերին քշել Նովո-Սելիմ գյուղի հարավային ծայրամաս, քանի որ նրանք 6 հրանոթ ունեին եւ թվաքանակով էլ մի քանի անգամ գերազանցում էին: Սելիմի ջոկատում եղած հրանոթները (12) ուղարկվել էին Կարս կարգի բերելու համար, իսկ ջոկատում եղած 2-ը չկարողացան հաշիվ տեսնել թուրքական հրանոթների հետ: Առավոտյան ժամը տասին, երբ թուրքերը գրավել էին գյուղի հարավային ծայրամասը, իսկ երզնկացիների 3 վաշտերը նահանջել դեպի Նովո-Սելիմ գյուղի կենտրոն, ժամանեցին 1-ին հատուկ հեծյալ գնդի 2 հարյուրակ, որոնք գտնվում էին խարամթերման մեջ: Այդ 2 հարյուրյակների ժամանումով Երզնկայի գնդի վաշտերն անցան հակահարձակման այդ երկու հարյուրակների հետ համատեղ եւ թուրքերին դուրս մղեցին Սելիմից 2 վերստի վրա, այն դիրքերը, որոնք առավոտյան զբաղեցրել էին երզնկացիները: Ցերեկվա ժամը 2-ին սկսեցին Նովո-Սելիմ ժամանել 7-րդ հայկ. հրաձգ. գնդի 2 գումարտակ, 4-րդ հայկ. հրաձգ. գնդի գումարտակը, 3 գումարտակ իրենց կազմում ունենալով 14 հրանոթ եւ 1-ին հայկ. հեծյալ գունդը: Այդ շարասյունը ղեկավարում էր Բեյ-Մամիկոնյանը: Այդ ջոկատի հետ էր եւ Դրոն, հայկ. կորպուսի լիազորը: Մարտը ղեկավարում էր գեներալ Արեշելը (չնայած հիվանդ էր համարվում եւ ջոկատի հրամանատարը փաստորեն ժամանակավորապես Բեյ-Մամիկոնյանն էր): Ժամանած ողջ հրետանին դիրքեր գրավեց Նովո-Սելիմ գյուղի հյուսիսում: Բոլոր ժամանած զորամասերն այդ վայրից էլ անցան հարձակման, այն դեպքում, երբ նրանց առաջ, 3 վերստի վրա, կանգնած էին Երզնկայի գնդի վաշտերը: 1-ին հեծյալ գունդն այդ վայրից լավայի նման հարձակման անցավ: Երզնկայի գնդի հրամանատարի բոլոր հայտարարությունները, որ այդ գնդի վաշտերը կանգնած են Սելիմից 3 վերստ հարավ եւ որ 3 վերստ հետ գտնվող դիրքերից հարձակման անցնել չի կարելի, գնդապետ Բեյ-Մամիկոնյանը պատասխանել էր,

որ առջեւում թուրքերից բացի ուրիշ ոչ ոք չկա եւ Երզնկայի գնդի վաշտերը վաղուց արդեն ծլկել եւ արդեն երեւի հասել են Բեզիր-Ահմեդ: Բայց մեծ եղավ նրա զարմանքը, երբ 7 զորամասերն ու 4 գնդերը ելման կետից 2 վերստ դեռ չէին անցնել, երբ նրանց առջեւում բարձրացան Երզնկայի գնդի վաշտերն ու վազբով առաջ անցան: Ինչպես հետագայում պարզվեց թուրքերը բարձունքից տեսնելով մեծ ուժերի եւ անընդմեջ հրետակոծող 14 հրանոթների մոտենալը դուրս էին եկել զբաղեցրած դիրքերից եւ սկսել նահանջել Նովո-Սելիմից ամենամոտ հունական գյուղը, որը Սարիղամիշի կողմում էր: Գնդապետ Բեյ-Մամիկոնյանը բավականաչափ զգալի ուժերով ձեռնամուխ լինելով հարձակման, անգամ հարկ չէր համարել ծանոթանալու կացությանը, զոնե թեկուզ Երզնկայի գնդի հրամանատարին հարցուփորձ անելով, որը կանգնած էր իր գնդի հետ այդտեղ բավական զգալի ժամանակ եւ պետք է ենթադրել, որ լավ ծանոթ էր տեղանքին եւ իրադրությանը: Ցավոք, ինչպես համոզվեցի հետագայում, Բեյ-Մամիկոնյանի բնավորության մեջ մեծ չափով ինքնավստահություն կար, իսկ անհաջողության դեպքում նա բացարձակապես կորցնում էր իրեն եւ այնժամ նրանից մեծ օգուտ սպասել չէր կարելի: Սպաների մեծ մասը, ընդհուպ մինչև բարձր պետերը գործում էին առանց մտածելու հույս դնելով իրենց բախտի վրա: Ես, անձամբ, նախապես, քանի դեռ որոշվում էր նույնիսկ որեւէ աննշան գործողություն, միշտ մանրամասնորեն քննարկում էի, թե ես ինչպես պետք է վարվեմ հետագայում, անհաջողության դեպքում: Ամենամանրամասնորեն մշակված պլանն [նույնիսկ: Թ.գ.մ.] այնքան անսպասելի բաներ է տալիս, որը կարող է անհաջողության բերել:

Որպեսզի դուրս գա ծանր կացությունից գնդ. Բեյ-Մամիկոնյանը Երզնկայի գնդին հրամայեց կանգ առնել եւ վերադառնալ Նովո-Սելիմ, իսկ 7 վաշտերին եւ 4 գնդերին, 1-ին հայկ. հեծ. գնդի հետ՝ թուրքերին դուրս մղել ու գրավել գյուղը: Հրետանին 3 վերստի վրա մոտեցվեց թշնամուն: Մինչև երեկո մարտ էր գնում, բայց գյուղից թուրքերին դուրս մղել չհաջողվեց, որի պատճառով էլ մութն իջնելուց հետո 4-րդ հայկ. հրաձգ. գնդի գումարտակին հրաման տրվեց 10 հրանոթներով հետ քաշվելու թիկունք, ինչպես նաև 1-ին հայկ. հեծ. գնդին, իսկ դիրքերն զբաղեցրին 7-րդ գնդի վաշտերը: Երզնկայի գնդին հրամայված էր զբաղեցնել Բաշքենդ, Բեզիրգան-Քյուչուկ, Ենգիշա գիծը, որտեղ արդեն գտնվում էին այդ գնդի 2 գումարտակներ: Ես խորապես համոզված եմ, որ եթե Բեյ-Մամիկոնյանը նախապես, հարձակման անցնելուց առաջ, ծանոթանար կացությանը, եթե իմանար ավագ ենթակաների կարծիքը, ապա այդ գործը հաջողությամբ կկատարվեր, եւ իհարկե, զորքերի ոգին զգալիորեն կամրապնդվեր:

Սարիղամիշի ջոկատի նահանջից մի քանի օր անց միայն գեներալ Արեշեն եկավ Ալեքսանդրապոլ եւ ներկայացավ սպայակույտ: Ես նրան իմ վերդովունքն ու նախատինքն հայտնեցի նրա հետ քաշվելու եւ արարմունքի համար: Ինքնարդարացման համար նա անհիմն փաստարկներ սկսեց բերել եւ գլխավորապես այն, որ Սարիղամիշի դիրքերը ճնշում էին մարդկանց, իսկ այժմ, երբ ջոկատը դուրս է եկել քիչ թե շատ բաց տեղանք, հեշտ կլիմի ջոկատը կառավարելը եւ հաջողության հույսով անցնել հարձակման:

Գեներալ Արեշենի արարքի վրա բոլորից առավել զայրացել էր կորպուսի սպայակույտի պետ Վիշինսկին, նա դեռ պնդում էր նրան դատի տալու վրա: Գեներալ Արեշենն ու զննապետ Բեյ-Մամիկոնյանը համոզում էին, որ ջոկատը Սարիղամիշից նահանջել է լրիվ կարգով, իսկ ես ականատեսներից լսել էի՝ որ անկարգ փնակով: Պետք է ենթադրել, որ այդպես էլ եղել էր, այլ կերպ նա 24-ին չէր հայտնվի Բեզլի-Ահմեդում: Եվ դա այն դեպքում, երբ որեւէ առանձնակի ճնշում կամ մարտ թուրքերի կողմից չէր եղել: Թուրքերը նույնիսկ զարմացած էին, որ մենք այդպես հապճեպ դատարկեցինք մեր դիրքերը:

Մարտի 27-ին թուրքերը երկրորդ անգամ հարձակման անցան ամբողջ ջոկատով՝ Սելիմից մինչեւ Ենգիջա, ամենից առավել ճնշելով Ենգիջայի վրա, այսինքն մեր աջ թեւին, հավանաբար նպատակ ունենալով ջոկատը Կարսից դուրս շարտել: Այդ թեւը գտնվում էր Երզնկայի գնդի ծայրաթեւում, 8 վերստ այդ գյուղից հեռու տեղաբաշխված էր 1-ին հատուկ գնդի մեկ հարյուրակ: Ենգիջայում կանգնած 2 վաշտեր լավ պաշտպանվում էին, բայց նկատի առնելով հակառակորդի գերակշիռ ուժերը, երկար դիմանալ չէին կարող եւ մինչ նրանց կմոտենային ամրապնդման համար Բեզիրգան-Քյուշուկից ուղարկված երզնկացիների 2 վաշտեր, հետ քաշվեցին գյուղից արեւմուտք ընկած բարձունքները: Այն դեռ գրավված չէր թուրքերի կողմից, եւ երբ մոտեցան մյուս 2 վաշտերը, ապա այդ 4 վաշտերն անցան հարձակման եւ թուրքերին ստիպեցին, լքելով վիրավորներին, հապճեպորեն հետ քաշվել իրենց դիրքերը՝ Բաշքոյ գյուղի կողմում: Բեզիրգան-Քյուշուկից եւս նույնպես զգալի դժվարությամբ հետ մղեցին եւ Բաշքենդում կանգնած երկու վաշտեր միայն ստիպված եղան 1-2 վերստ հետ քաշվելու, որպեսզի ճակատը հավասարվեր Երզնկայի գնդին: Այդ ժամանակ Երզնկայի գունդը ղեկավարում էր կապիտան Հալաբյանը, որը դիրքեր էր գրավել Նովո-Սելիմից դեպի արեւելք եւ շատ եռանդուն ու մարտական մարդ էր:

Հետագայում երկու կողմերից էլ քիչ թե շատ հանդարտություն տիրեց: Ամենօրյա հրաձգություն էր գնում հետախույզների միջեւ: Նման դրությունն օգտակար էր թուրքերին եւ ոչ ձեռնառու մեզ: Թուրքերը մոտեցող համալը-

մամբ յուրաքանչյուր օր զորեղանում էին, իսկ մենք՝ կորցնում հարձակման անցնելու հարմար պահը: Հարձակման անցնելու իմ պահանջը գեներալ Տեր-Հակոբյանի կողմից զանազան, եւ գլխավորապես այդ հարձակման համար ջոկատի անպատրաստ լինելու պատճառներով անվերջ հետաձգվում էր: Թուրքերն օգնական ուժերի սպասելով, դեռ շրջանցող շարասյուններ էին ուղարկում Մերդենեկի, Արդահանի վրա, լավ գիտենալով, թե այդ շրջանցումները հոգեբանորեն ինչպես են ազդում մեր զորքերի վրա: Իմ ենթադրությունը, ինչը պարզ կդառնա հետագա իրադարձություններից, արդարացավ:

Մարտի 28-ին Միքայել Հովհաննեսի Բաբաջանյանից ստացա վերջին նամակը. «26 մարտի 1918թ., Թիֆլիս: Մեծարգո Թովմաս Հովհաննեսի: Երեկ ստացա Ձեր մարտի 23-ի թվակիր նամակը: Տխուր լուրեր: Հավատում եմ, հավատալ եմ ուզում, որ մեր դիմադրողականությունը կամրապնդվի, առանց որի մենք ժողովուրդը չենք փրկի, որը կանգնած է անդունդի եզրին: Պետք է լարել ուժերն ու ոգեպնդել վհատվածներին: Թեկուզ եւ փոքրիկ հաղթանակը մեր կողմից մեծապես կբարձրացներ ոգին: Քաղաքում լուրեր են տարածվում մերոնց ինչ-որ մեծ հաղթանակի, նույնիսկ Սարիղամիշը հետ վերցնելու մասին: Երեկ գիշեր այստեղ ուղիղ-հեռագիր է ստացվել Տրապիզոնից, Չխենկելուց, հաղորդումով, որ մարտի 24-ին թուրքերը վերջնագրային պահանջ են ներկայացրել, պատասխանելու, թե արդյոք մենք ընդունում ենք Բրեստի պայմանագրի պայմանները Կարսի, Բաթումի, Արդահանի մասին: Պատասխանը պահանջում են 48 ժամում: Չխենկելին ենթադրում է, որ պետք է զիջել Կարսի մարզը (ներառյալ Կարսի ամրոցը) առանց հայերով բնակեցված վայրերի, այսինքն Կաղզվանի շրջանի մեծ մասի եւ Կարսի շրջանի մի՝ Ախալցխիսի գավառին հարցը Չխենկելին հանգեցնում է փախստականների տեղերը վերադառնալու թույլտվությանը եւ ներմանը (չափահաս տակաճներին տեղերը վերադառնալու թույլտվությանը եւ ներմանը) համաձայնվել: Ես անձամբ գտնում եմ, որ Չխենկելու հետ պետք է համաձայնվել: Չպետք է ղեկավարվել հակաթաթարական տեսակետով: Բաթումը պետք է ողջ Անդրկովկասին: Դաշնակցականները դեռ չեն արտահայտվել եւ դատելով նրանց քաղաքական տարութերումներից եւ ոխիկից (որպեսզի այլ բան չասենք) հավանաբար դեմ կլինեն: Այժմ հույժ գաղաճի իմացա սոցիալ-դեմոկրատ փոքրամասնականների կարծիքը (կուսակցական որոշումը), նրանք Չխենկելու առաջարկի կողմն են: Թաթարներն իհարկե, Չխենկելու կողմը կպահեն: Միգուցե մեր երջանկությունն է, որ հարցը պետք է որոշեն թաթարներն ու վրացիները եւ ոչ թե մենք: Երեկ Բաթումից գաղտնի հաղորդեցին, որ դիրքերը լքել է 4-րդ վրաց. գունդը եւ վերադարձել քաղաք ու ցրվել է սպաների ջոկատը, որն իր վրա էր վերցրել սպա-

Ների գորակոչը (Գլխավոր հրամանատարի վերջին հրամանը): Երկու կողմից բերող մերկացված է: Ծարդիմին խորհում է, որ Բաթումը կդիմանա 1 օրից ոչ ավելի: Ողջ եղեք, թող աստված Ձեզ ուժ եւ երջանկություն տա: Անկեղծ Ձեզ հարգող եւ նվիրված Մ. Բաբաջանյան»: Հետգրություն. «Այժմ իմացա, որ մերոնք թողել են Չարուխի կամուրջը, չպայթեցնելով այն: Թուրքերը Բաթումից 6-8 վերստի վրա են: Վրացիները միայն հանել են Չարուխի բետոնե կամրջի կրիչները»:

Իմ նամակը, որի մեջ ես պատկերել էի ռազմաճակատում մեր զորքերի վիճակը եւ գլխավորապես նրանց անհուսալիությունը, տխրեցրել էր Մ. Հ. Բաբաջանյանին: Նրա վերջին նամակը նույնպես դառնացրեց ինձ, հատկապես այն, որ վրացական զորամասերը լքել էին ճակատը Բաթումի մոտ եւ որ Բաթումի բախտը արդեն կանխորոշված էր մի քանի օրով միայն, որն էլ հետագայում արդարացավ: Վրացիների այդ բոլոր անհաջողությունները կայծակնային արագությամբ հայտնի էին դառնում զորքերին ռազմաճակատում եւ իհարկե, մեծ ազդեցություն թողնում զորքերի ոգին ընկնելու վրա: Նրանք ականաչից զգում էին, որ այդ պատերազմի ողջ ծանրությունը ընկնում է միայն իրենց վրա: Որքան էլ որ ես ձգտեի, որպեսզի նման լուրերը մինչեւ ճակատ չհասնեին, ոչինչ դրա դեմ չէի կարող անել: Հեռագրիչները բոլորից վաղ ձգտում էին իրենց մոտ գտնվող եւ ամեն օր ճակատի հետ շփում ունեցող իրենց ընկերներին տեղեկացնել: Ապշեցուցիչն այն էր, որ ճակատում ավելի շուտ էին իմանում մեր զորքերի ու թուրքերի վիճակը, քան նույնիսկ կորսուսի հրամանատարը:

Շուտով Դրոն թողեց գլխավոր ռազմաճակատն ու մեկնեց Երեւան ոչ ոքից թույլտվություն չհարցնելով դրա համար: Բոլորը գերազանց զիտեին, որ Հայաստանի ճակատագիրը որոշվում է Կարսի դաշտերում եւ թվում էր, թե ժողովրդական բոլոր գործիչները, ինչպիսիք էին Դրոն, Արամը, Անդրանիկը, Սեպուհը, Մուրադը, Դայի-Ղազարը եւ ուրիշներ, պետք է այնտեղ, ճակատում լինեին եւ իրենց օրինակով, ազդեցությամբ ու հեղինակությամբ բարձրացնեին մարտիկների ոգին: Նրանք, սակայն, այդ ժամանակ, ցավոք, գրեթե բոլորն էլ բացակայում էին: Առաջին երկուսը Երեւանում էին, այնտեղ ինչ-որ բան էին ձեռնարկում, սովյալ դեպքում իրական նշանակություն չունեցող բանավեճեր վարում Ազգային Խորհրդում եւ այլն: Սեպուհը, Մուրադի հետ միասին լքեցին ռազմաճակատը Սարիղամիշի նահանջից հետո: ...Սեպուհը որոշ ժամանակ անց բացարձակապես անհետացավ ռազմաճակատից: Եթե չեմ սխալվում մեկնեց Բաքու²³:

Մարտի 30-ին ինձ հետեւյալ նամակը հանձնեցին. «30 մարտի 1918 թ.: Հարգելի Թովմաս Հովհաննեսի: Ներողություն եմ խնդրում, որ գրում եմ մատիտով եւ չեմ կարող անձամբ գրուցել ստեղծված կացության մասին:

Պահի պայմանները պահանջում են իմ ներկայությունը Թիֆլիսում, որի համար էլ գնում եմ, Ալեքսանդրապոլում կանգ չառնելով:

Արդեն պետք է հայտնի լինի Ձեզ, որ Տրապիզոնի մեր պատվիրակությունը մեր ռազմաճակատներում մշտական անհաջողությունների ազդեցության տակ եւ սնվելով մեր ուժի մասին թուրքական աղբյուրներից, վերջնականորեն կորցրել է հետագա դիմադրության հույսը եւ որոշել ընդունել Բրեստի պայմանագիրը: Պարզ է, որ կառավարությունն ու Սեյմը ստիպված կլինեն վավերացնելու դաշնագիրը, եթե մեր ճակատի կացության մեջ խոշոր փոփոխության հույս ու վատահույսություն չներշնչի: Կարծում եմ, որ այդ վճռական պահը, եթե դա հաջողվի, թեկուզեւ մեծ ռիսկով հարձակում գործելու եւ հակառակորդին Սարիղամիշից հետ մղելու, այդ պարագան քաղաքական ահռելի դեր կխաղար: Թույլ եմ տալիս ինձ, պահը հաշվի առնելով, խնդրանքով դիմելու Ձեզ, ամեն հնարավորն անելու, համապատասխան մթնոլորտ ստեղծելու կառավարությունում եւ Սեյմում մեր շահերի պաշտպանության եւ կործանումից ու ստրկացումից փրկվելու համար: Ձեզ հարգող՝ ֆինանսների նախարար Կարճիկյան»:

Հայկական Ազգային խորհրդի անդամները մեծ մասով գտնվում էին Կարսում եւ այնտեղ ամեն օր անց էին կացնում իրենց նիստերը: Այնտեղ էր գտնվում նաեւ Կարճիկյանը եւ ահա արտակարգ կարգով մեկնելով Կարսից Թիֆլիս, ինձ Ալեքսանդրապոլի կայարանից նամակ էր ուղարկել: Չարմանային այն էր, որ այդ անդամները եւ նրանցից մեծ մասն էլ՝ կուսակցական առաջնորդներ, գտնվելով Կարսում, նշանակում է մեր դիրքերին ու ճակատին մերձ, գրեթե ծանոթ չէին մեր հայ զինվորների տրամադրություններին ու ոգուն: Ինձ թվում է, թե դա նրանից էր, որ նրանք իրենք շատ հեռու էին կանգնած զինվորներից: Դեռ Սարիղամիշում Խորհրդի որոշ անդամներ եղել էին անգամ առաջավոր դիրքերում, իսկ Սարիղամիշից նահանջելուց հետո նրանք գտնվում էին Կարսում: Դրա համար էլ քիչ շփում ունեին ճակատի հետ կամ ավելի ճիշտ բոլորովին չունեին, ինձ հետ նույնպես նույն բանն էր: Ազգային խորհրդի ոչ մի անդամ չէր եղել ինձ մոտ, որը կարող էր հետս մտքեր կիսել եւ ինձ ծանոթացնել իրենց կարծիքներին ու ցանկություններին: Դա որոշ չափով նաեւ իմ մեղքն էր:

Եթե Ազգային խորհրդի անդամները մոտ կանգնած լինեին մարտիկներին, ապա այդ տրամադրություններով դժվար է որեւէ, նույնիսկ փոքր, նույնիսկ թեկուզ եւ մասնակի հաջողության հույս ունենայ, ինչպես նրանք ենթադրում էին:

Իր սեփական ցանկությամբ Գարեգին վարդապետն էլջմիածնից եկել էր ճակատ եւ մի քանի օր մարտիկների հետ ապրել խրամատներում, քարոզում էր հայ ժողովրդի համար ընթացիկ պահի կարեւորությունը, խրամատներ

րում աղոթում էր նրանց հետ եւ ընդհանրապէս ձգտում բարձրացնել զինվորների ոգին եւ հայրենասիրության կայծեր վառել: Բայց ադ ամենը որեւէ դրական արդյունք չտուցեց:

Գարեգին Վարդապետն իր սխրանքի համար իմ կողմից պարգևատրվեց Գետրոյան ժապավենի վրա խաչով, քանզի գտնվում էր խրամատներում եւ մարտերի ժամանակ ձգտում ոգեշնչել մարտիկներին: Մարդիկ ողջ ժամանակ վհատության մեջ էին գտնվում: Երեսում է այդ պայքարը հակադիր էր նրանց ցանկությանը: Նրանց մտքերը հեռվում էին, իրենց ընտանիքների հետ, [նրանք] ծարափ էին հանգստի իրենց ընտանեկան օջախում, տեսական պատերազմից հետո, նաեւ հեղափոխությունն էր ոչ քիչ չափով ազդել նրանց հոգեկանի վրա:

ԿԱՐՍԻ ՌԱԶՄԱՆՈՒԿԱՍԸ

Ես ամբողջ ժամանակ հնարավոր բոլոր միջոցներով ձգտում էի ուժեղացնել Կարսի ռազմաճակատը: Երեսանից արագ փոխադրեցի 2-րդ հայկ. հեծյ. գունդը եւ մնացած 3 գումարտակները: Կարսում այդ ժամանակվա մարտիկների վիճակի ու թվի վերաբերյալ կարելի է դատել պարետի՝ ըստ ապրիլի 1-ին հայտարարված հրամանի:

ՀՐԱՄԱՆ ԿԱՐՍԻ ԲԵՐԴԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կարսի բերդ (քարտեզներ 1 եւ 2-րդ, վերստերը դյույմերով)
1 ապրիլի 1918թ.,
ժ. 14-ն անց 30 րոպե

№1

Հակառակորդի զորամասերն զբաղեցնում են Կարա-Կալա, Ղամիշլի-Կարա-Համզա-լեռ, Սեյդիլար-Ալաուզ-Աղաճ գիծը: Քրդերի հրոսակներ են հայտնաբերվել Մերդենեկ-Ջալամուս-Գրեճնադերսիկ շրջանում: Տեղեկություններ կան, որ Արդահանը գրավված է թուրքերի կողմից: Հայկական առանձին կորպուսի ջոկատն իր առաջապահ զորամասերով զբաղեցնում է Ենգիջա, Բեզիրզան-Քյուչուկ, Նովո-Սելիմ, Ղարախաչ, Տիգնիս, Փասլի գիծը: Արդահան-Մերդենեկ-Օլթի գիծը պահում են վրացական կորպուսի զորամասերը, որոնց վերաբերյալ տեղեկություններ չկան:

Բերդից հետախուզություն է ուղարկված Ջելաուսի եւ Մերդենեկի ուղղու-

թյունը պարզելու նպատակով, Մածրայի եւ Պորոխլադնի շրջանում ուղեկալների են դրված: Բերդի համառ պաշտպանության համար կայագործի զորամասերն այժմ իսկ զբաղեցնեն բերդի ամրությունները, որի համար հրամայում եմ:

I Պաշտպանութեան Ալեքսանդրովյան բաժին: Գնդապետ՝ Փիրումյան: Բաժնի սպա յակույտ՝ Ալեքսանդր II ամբողջից մինչեւ հին կամուրջը (նեբառ յալ), ամբողջում ունենալով 4 վաշտեր՝ 3-րդ գումարտակի 1-ին վաշտը, Կարսի բերդային հրետանու 3-րդ, 16-րդ վաշտերը՝ Կարսի սակրավոր գումարտակի 3-րդ վաշտի 1 դասակ:

Այսպիսով՝ հետեւակի 4 վաշտ, հրետանու 3 վաշտ, 3 ջոկատ եւ 1 սակրավոր վաշտ:

II Պաշտպանութեան Կոխանովյան բաժին, գնդապետ Միցկելե իջ:

Բաժնի սպա յակույտ՝ Կոխանով ամբողջ: 3-րդ հաչկ. հրաձգ. գնդի 2 գումարտակ՝ 4 վաշտեր, Կարսի բերդային հրետանու 14-րդ վաշտ: Կարսի բերդային սակրավոր գումարտակի 1 վաշտի 1 դասակ:

Այսպիսով՝ հետեւակի 4 վաշտեր: Բերդային հրետանու 1 վաշտ եւ 1 սակրավոր դասակ:

Պաշտպանել Բլազադարնոյի խճուղուց, մի հատված Ալեքս. II ամբողջը (չհաչված) հին կամուրջը, մինչեւ Կարսա-չաչ գետը (նեբառ յալ) գերեզմանոցի ամբողջում ունենալով 1 վաշտ, ուղեկալ դնելով Միլոնյամբութեան վրա, Բլազադարնոյի սակրավոր ամբողջում՝ 1 վաշտ, մնացած վաշտերը՝ գլխավոր պարիսպը:

III Պաշտպանութեան Ֆադեբեյան բաժին: Գնդապետ՝ Կարամիչե:

Բաժնի սպա յակույտ՝ Միխայիլի ամբողջ:

3-րդ հաչկ. հրաձգ. գնդի 2 գումարտ.՝ 3 վաշտ, Կարսի բերդային հրետանու 15-րդ վաշտը՝ 1-ին վաշտը, Կարսի բերդային սակրավոր գումարտակի 1 դասակ:

Ընդամենը՝ 3 վաշտ հետեւակ, բերդ. հրետ. 1 վաշտ եւ 1 դասակ սակրավորներ:

Պաշտպանել Կարսա-չաչ գետից (նեբառ յալ) մինչեւ Ալեքսանդրապոլի խճուղին Կարադաղի ստորոտում, Ռիժեյան ամբողջում ունենալով 1 վաշտ, Ֆադեբեյան ամբողջում՝ 1 վաշտ, Միխայիլիմ իջնաբերդում կես վաշտ, 5-րդ հողապատնեշում՝ կես վաշտ, Օպասնի լեռան վրա ուղեկալներ դնելով:

IV Պաշտպանութեան ստորին բաժին: Գնդապետ Քալանթարյան:

Բաժնի սպա յակույտ՝ Լազարեւ ամբողջ: 3-րդ հաչկ. գնդի 1-ին եւ 4-րդ գրեղացրային գումարտակները եւ հետախուզական ջոկատը՝ 7 վաշտ, 3 ջոկատ, Կարսի բերդային հրետանու 1, 2 եւ 4 վաշտերը՝ 3 վաշտ, Կարսի բերդային սակրավոր գումարտակի 1 դասակ:

Ընդամենը՝ հետեւակի 7 վաշտ, բերդային հրետանու 3-րդ վաշտի 3 ջոկատ եւ 1 սակրավոր դասակ:

Պաշտպանել Լազարադղի ստորոտից՝ Ալեքսանդրապոլի խճուղուց (նեբառ յալ)

վոր սպայակույտի գնդապետ Քվինտանեն եւ նրանց հետ՝ հայկական ազգային խորհրդի մի քանի անդամներ՝ Ահարոնյանը, Ստեփան Մամիկոնյանը եւ ուրիշներ:

Կայարանում պատվո պահակախումբ էր կանգնեցվել հայկական սակավոր գումարտակից: Գլխավոր հրամանատարն ընդունեց պահակախումբը, այն տողանցեց հանդիսավոր քայլերով եւ շատ զոհ մնաց պահակախմբի տեսքից: Կորպուսի սպայակույտում, նրանց բոլորին եւ հրավիրեցի հասարակ, երկու ճաշատեսակից բաղկացած հացկերույթի: Գեներալ Լեբեդինսկու խնդրանքով իմ կողմից որեւէ կենաց չասվեց: Երեկոյան քաղաքային վարչությունը նրանց բոլորին հրավիրեց ընթրիքի, որը կազմակերպված էր ռեստորաններից մեկի սեղանատանը: Հրավիրվածները մոտ 50 հոգի էին եւ եւ սրտանց զոհ էի, որ քաղաքը իր նախաձեռնությամբ գլխի էր ընկել կազմակերպել դա: Այդ ընթրիքի ժամանակ եւ նստել էի Գլխավոր հրամանատարի կողքին, իսկ մյուս կողմում նստել էր Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Վահան Նավասարդյանը: Բազմաթիվ կենացներ ասվեցին: Լավագույն ճառն ասաց Վահան Նավասարդյանը, նա շատ լավ տիրապետում էր ռուսերեն խոսքին: Ծառի իմաստն այն էր, որ հայ ժողովուրդը միշտ հակվել է դեպի Ռուսաստան, նրան նայել որպես այն տառապանքներից ազատողի, որոնք նա կրել է մի քանի դար եւ հայերի հավատարմությունը Ռուսաստանին եղել է միշտ ու կլինի: Այդ ընթրիքի ներկաները շատ խնդրեցին Ստեփան Մամիկոնյանին՝ ճառ ասել: Երկար տատանումներից հետո, վերջապես նա ասաց: Ժիշտն ասած եւ փայլուն ճառ էի սպասում: Բայց, ճառն անգույն ստացվեց, ավելի շատ բառերի հավաքածու էր եւ ոչ մի տպավորություն չգործեց:

... Իհարկե, խմվեց գնդապետ Ծարդինիի եւ հանձնիս նրա Ֆրանսիայի ու Ֆրանսիական բանակի կենացը: Ընթրիքը, զրույցի ու մտքերի փոխանակության մեջ, տեւեց շատ երկար:

Ապրիլի 5-ի առավոտյան Գլխավոր հրամանատարը մեկնեց Կարս եւ եւ իմ սպայակույտի պետ, գեներալ Վիշինսկու հետ ուղեկցեցի նրան:

Գնացքը Կարս ժամանելու պահին բերդի պահեստագործի գումարտակից պատվո պահակախումբ կանգնեցվեց զինվորական երաժշտախմբի հետ եւ բերդի բոլոր աստիճանավորները պարետի գլխավորությամբ պատվո պահակախմբի հետ էին: Գլխահրամանատարն ընդունեց պատվո պահակախումբը, շնորհավորեց գումարտակի հրամանատարին որպես գնդի հրամանատարի: Այդպիսով պահեստի գումարտակը վերածվեց գնդի:

Գլխավոր հրամանատարը, գնդապետ Ծարդինի, Քվինցաձեն, եւ Վիշինսկին, պարետ գեներալ Դեւեի եւ բերդի լիազոր Միքայել Արզումանյանի հետ կայարանից էլ գնացինք ամրոցները դիտելու: Ինձ առաջին անգամ

վիճակվեց դիտել դրանք եւ իհարկե ինձ զարմացրեց այդ կառուցվածքների ահռելիությունը: Դիտեցինք մի քանի ամրոցներ, ամենագլխավորները: Տազնապ հնչեցնելով որոշ ամրոցներում կանչվեցին մարդիկ: Երեւում է պարետ Դեւեի հագեցած գործունեությունը ամենուր գիտելիք ու հմտություն էր մտցրել: Դա մեր վրա հաճելի տպավորություն թողեց եւ մենք, շատ թեքիչ հանգիստ էինք բերդի բախտի համար:

Գեներալ Դեւելը դիտումից հետո բոլորին հրավիրեց պարետատուն ճաշի: Նշանակված ժամին բոլորս ներկայացանք: Բացակայում էր Գլխավոր հրամանատարը: Նա լուր էր ուղարկել, որ ուժեղ գլխացավի հետեւանքով ինքը ներկա չի կարող լինել եւ շնորհակալություն է հայտնում հրավերի համար: Ծաշի ժամանակ շատ կենացներ ասվեցին հաջողություն ցանկանալով ինչպես դաշտային զորքերին, այդպես էլ բերդին:

Ապրիլի 6-ին, վաղ առավոտյան, նույն մարդիկ կրկին մեկնեցին բնագրծեր: Երբ սկսեցինք մոտենալ բնագծերին, ապա մեզ զարմացրեց այն, որ լսեցինք հրանոթային եւ հրացանային կրակոցներ: Պարզվեց, որ թուրքերը ապրիլի 5-ից 6-ին հարձակման են անցել ամբողջ ռազմաճակատով մեկ:

ԿԱՐՍԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ

...Գնացքը կանգ առավ Բեզլի-Ահմեդի մոտ: Այդտեղ գտնվում էր ջոկատի պետի ռազմականյանը: Գլխավոր հրամանատարի գնացքից դուրս գալու պահին զեկույցով նրան մոտեցավ ջոկատի պետ գեներալ Տեր-Հակոբյանը: Պարզվեց, որ ապրիլի 5-ին գորամասերի բոլոր հրամանատարները կանչվել էին Բեզլի-Ահմեդ խորհրդակցության, որտեղ մշակվել էր ողջ ճակատով մեր զորքերի հարձակման պլանը: Խորհրդակցությունը ձգձգվել էր մինչեւ ուշ գիշեր, որի պատճառով էլ գորամասի շատ հրամանատարներ գիշերելու էին մնացել Բեզլի-Ահմեդում: Իհարկե, հրամանատարներին սպայակույտում էին մնացել թողնելը, երբ թշնամին այդքան մոտ էր, գեներալ Տեր-Հակոբյանի խոշոր ու անթույլատրելի սխալն էր: Այդ օրինակից կարելի է դատել նրա անփորձության մասին:

Թուրքերն ապրիլի 6-ի առավոտյան, ժամը 5-ին, մինչ լույսը բացվելը, գրոհել էին մեր դիրքերը ամբողջ ռազմաճակատում: Զախ տեղամասի բնագծերի գլխավոր բանալին՝ Աղ-բաբա լեռը սրընթաց ձեռով գրավվել էր: 1-ին հայկ. հրաձգ. գնդի գումարտակն ստիպված էր եղել մաքրելու լեռը եւ նույնիսկ հանձնել իրենց գնդացիրները: Դրա գլխավոր պատճառը եղել էր պահակային ծառայության անգույշ վերաբերմունքը:

Նոփո-Սելիմ կայսրանը, որն զբաղեցրել էին 7-րդ հայկ. հրաձգ. զնդի վաշտերը, թուրքերն այնքան սրընթաց էին գրավել, որ շատ զինվորներ փախել էին միայն փոխճորդով: Մատուով բարձունքում, որը Բեգիրգան-Քյուշուկ գյուղի մոտ է, թուրքերը Երզնկայի զնդի 5-րդ և 6-րդ վաշտերի վրա գրոհել էին երեք անգամ, սակայն, չէին կարողացել դուրս քշել և միայն համառ սվինամարտից հետո, որի ժամանակ սպանվել էր վաշտի հրամանատար պորուշիկ Մեայանը և վիրավորվել էին 5-րդ և 6-րդ վաշտերի բոլոր հրամանատարները, գումարտակի հրամանատար պորուշիկ Իշխանյանի գլխավորությամբ, այդ ժամ միայն վաշտերը սկսել էին հետ քաշվել և զբաղեցնել Բեգիրգան-Քյուշուկից մեկ վերստ հյուսիս ընկած դիրքերը, ուր այդ ժամանակ հասել էին Բաշքենդ գյուղի դիմաց կանգնած Էրզրումի գունդն ու Երզնկայի զնդի վաշտերը: Ենգիշա գյուղի դիմաց կանգնած վաշտերը լավ էին դիմագրավել թուրքերի հարձակումը՝ թուրքերին վնաս պատճառելով իրենց զնդացրային կրակով, բայց ստիպված էին եղել հետ քաշվել, երբ նկատել էին, որ թուրքերը շրջանցել են իրենց անպաշտպան թելը և արդեն գտնվում են իրենց թիկունքում, որի պատճառով էլ ստիպված էին հեռանալ ոչ թե թիկունք, այլ դեպի առաջ՝ Բեգիրգան-Քյուշուկի կողմը, որտեղ էլ միացել էին զնդի մնացած վաշտերին:

Միայն առավոտվա ժամը 6-ին Բեգլի-Ահմեդում գորամասերի հրամանատարներն իմացան թուրքերի հարձակման մասին և անհապաղ մեկնեցին իրենց գորամասերի մոտ, բայց, մինչև և նրանց գալը, նրանց գորամասերը գրեթե ամենուր դուրս էին մղվել իրենց դիրքերից և նրանց մնում էր միայն իրենց գորամասերը կարգի բերել և կասեցնել թուրքերի հետագա հարձակումը:

Մեր ժամանման պահին ջոկատի պետին հայտնի էր գլխավորապես միայն Աղ-բաբա լեռան անհաջողության մասին: Ես գեներալ Տեր-Հակոբյանին հրամայեցի ջանալ անհապաղ վերացնելու այդ անհաջողությունը, որի համար այնտեղ ուղարկել սեփական պահեստագործը: Մեր ներկայությամբ ուղարկվեցին՝ զնդապետ Եփրեմովի ռուսական սպայական ջոկատը և 1-ին հեծյալ հայկ. գունդը: Այնուհետև մենք բոլորս, բացի ջոկատի պետ գեներալ Տեր-Հակոբյանից, ուղեորվեցինք Նոփո-Սելիմի կողմը և այնտեղ, խրամատում նստած, դիտեցինք մարտերի ընթացքը: Ամբողջ ճակատում մարտն աշխույժ էր ընթանում: Մեր գորամասերը կասեցնում էին թուրքերի ուժեղացված հարձակումները: Այդտեղ գեներալ Լեբեդիևսկին, զնդապետ Շարդինի և մեր բոլորի ներկայությամբ դիմեց զնդապետ Քվինցաձեին և ասաց. «Ահա՛, տեսնում եք, հայերը կոպում են և բավական լավ»:

Քվինցաձեն դրան ոչինչ չպատասխանեց, բայց, դեմքից երևում էր, որ այդ խոսքը նրան դուր չեկավ:

Որոշ ժամանակ անց գեներալ Տեր-Հակոբյանը մեզ մոտ ուղարկեց համարակն գեկուցելու, որ Աղ-Բաբա լեռը հակառակորդից խլված է, և այն կրկին զբաղեցրել է 1-ին գունդը: Չէին հասցրել անհաջողությունը վերացնել ձախ թելում, երբ տեղեկացրին, որ աջ թելում որոշ գորամասեր նահանջում են: Չոկատի պետն ստիպված էր այնտեղ ուղարկել իր աղքատիկ պահեստագործը:

Արդեն ժամը 5-ն էր և գեներալ Լեբեդիևսկին առաջարկեց մեկնել ու ցանկություն հայտնեց այցելել սանիտարական գնացք, որպեսզի թեկուզ գոնե ծանր վիրավորներին պարզեատարի: Դիրքերից մեկնելով, ես գեներալ Տեր-Հակոբյանին հրամայեցի անհաջողության դեպքում, ոչ մի դեպքում հետ չքաշվել Կարսի բերդ և ամրոցներ, այլ միայն բերդի թելերը, որպեսզի բերդին շխանգարեն կատարելու իր խնդիրը և չազդեն կայագործի բարոյական վիճակի վրա:

(ամբողջը 192 էջ)

Թովմաս Հովհաննեսի Նազարբեկյան
4 հունվարի 1931 թ. Թիֆլիս

ՀՀ ԿՊՊԱ, Ֆ. 45, ցուցակ 1, տետր 15, 1-96 էջեր: Ձեռագիր

Մենք եկանք սանիտարական գնացք, որտեղ պատկած էին ապրիլի 6-ի մարտի վիրավորները: Նրանք զգալի թիվ էին կազմում: Գլխավոր հրամանատարը բժշկից պահանջեց ցույց տալ ծանր վիրավորի: Նա ցույց տվեց: Դա ջահել զինվոր էր, բարձրահասակ, բավական զեղեցիկ: Նա ծանր վիրավոր էր, նրա ապաքինման հույսեր չկային: Գեներալ Լեբեդիևսկին Գեորգյան խաչ փակցրեց նրա բանկոնին: Զինվորն արտասվելով նրան ասաց. «Շատ պետք է խաչը, երբ ես մեռնում եմ»: Իհարկե դա մեզ վրա շշմեցուցիչ ազդեցություն գործեց: Երբ Գլխավոր հրամանատարը նրանից հետ քաշվեց, ապա ես նրան հարցրի, թե նա ծնունդով որտեղից է: Նա ինձ պատասխանեց՝ Ալեքսանդրապոլի գավառից:

Գլխավոր հրամանատարը մոտեցավ մյուս ծանր հիվանդին և նրան նույնպես խաչ ամրացրեց: Զինվորը շնորհակալություն հայտնեց Գլխավոր հրամանատարին: Նա դուրս եկավ Աղ-Բաբա լեռան զնդացրորդներից և հետաքրքրվեց՝ զնդացիները արդյո՞ք թուրքերին հանձնեցին: Նրա գրեթե հետաքրքրվեց՝ զնդացիները արդյո՞ք թուրքերին հանձնեցին: Նրա գրեթե բոլոր ընկերներն սպանված էին, իսկ ինքը վիրավոր էր, թե չէ նրանց մոտ էր թողնի զնդացիներին: Նրան ես հանգստացրի, ասելով, որ լեռը մեր

կողմից հետ է վերցված, ինչպես նաև մեր գնդացիները: Նա շատ ուրախացավ այդ հանգամանքից: Նա դարաբաղի հայ դուրս եկավ:

Սանհուարական գնացքից մենք մեկնեցինք կայարան: Այնտեղ մեր գալըստյանն էին սպասում պարետն ու իր լիազորը: Երբ մենք հրաժեշտ էինք տալիս պարետին, ես նրան կտրուկ հրաման տվեցի՝ դաշտային զորքերի նահանջի դեպքում ոչ մի զինվորի Կարս չթողնել մտնելու, ինչպես նաև չընդունել սանհուարական գնացքները վիրավորներով ու հիվանդներով, այլ նրանց ուղարկել ուղիղ Ալեքսանդրապոլ, իսկ դաշտային զորքերը պետք է կառչեն բերդի թեւերին: Մենք Ալեքսանդրապոլ ժամանեցինք ուշ: Գլխավոր հրամանատարը շարունակեց դեպի Թիֆլիս:

Հաջորդ օրը գեներալ Տեր-Հակոբյանից հաղորդագրություն ստացա, թե քանի որ հնարավորություն չէր ունեցել իր աջ թետում վերացնել անհաջողությունը, ապա ստիպված էր եղել, ուղղել ռազմաճակատը, ձախ թելը հասցնել Ադա-Ռեւե եւ պաշարել կենտրոնը:

Բեզիրգան-Քյոչուկի բնագծերում Երզնկայի գունդը դիմագրավել էր մինչև ցերեկվա 2-ը, մաքրելով Ենգիջա գյուղի ու Ղարախաչի միջև ընկած տարածությունը, որը վերցվել էր թուրքերի գումարտակի կողմից Ենգիջայում տեղաբաշխված վաշտն ավելի վաղ շրջանցելով:

Տերեկվա ժամը 2-ին ջոկատի սպայակույտից հրաման էր ուղարկվել աջ թեւին հետ քաշելու արևելքից արեւմուտք խնուղուն զուգահեռ ձգվող Բեզլի-Ահմեդի դիմացի բարձունքները: Այդ նահանջի ժամանակ թուրքերը հետապնդել էին մեծ եռանդով, բայց նշված դիրքերն զբաղեցվել էին:

Ապրիլի 7-ին նոր կարգադրություն էր արվել, ավելի ճիշտ, պաշտպանության ամբողջ գիծը հետ էր քաշվել դեպի Կարս: Երզնկայի գնդին հրաման էր տրվել զբաղեցնել Ղարախաչից հարավ ընկած բարձունքները, այնուհետև ավելի ձախ զբաղեցրել էին 2-րդ, 7-րդ, 4-րդ եւ 1-ին գնդերը: Սպայակույտը Բեզլի-Ահմեդից տեղափոխվել էր Վլադիկարս գյուղը:

9-ին բերդի պարետն ինձ գեկուցեց, որ բերդից Մերդենեկի կողմն ուղարկված հետախուզությունը հայտնաբերել է Մածրայի կողմը շարժվող թուրքական կանոնավոր զորամասեր, եւ որ ինքն իր ուժերով հազիվ թե կարողանա վերացնել այդ շրջանցումը: Ես կարգադրություն արեցի արտակարգ կարգով 8-րդ գնդի մեկ գումարտակ, մի վաշտի հետ ուղարկել Մածրա: Համարյա թե 2 ժամ տեւեց 1000 սվինից ու 4 հրանոթից բաղկացած այդ գումարտակի նստեցումը: Ծիշտ այդ ժամանակ արձակուրդից վերադարձավ գեներալ Արեշելը: Ես նրան կարգադրեցի մեկնել այդ գումարտակի հետ եւ ընդունել Մածրայի ջոկատի պետի պարտականությունները՝ շրջանցումը վերացնելու համար, իսկ Սարիզամիշի գլխավոր ջոկատը թող շարունակի

դեկավարել գեներալ Տեր-Հակոբյանը, քանի որ այդպիսի պահի պետի փոփոխությունը համարում եմ աննպատակահարմար: Արեշելին հրամայեցի Կարս շնտնել, այլ ուղիղ մեկնել Մածրա:

Այդ բոլոր կարգադրությունների մասին տեղեկացրի պարետին: Գումարտակի նստեցումն իրականացվեց իմ ներկայությամբ: Ես նրանց դիմեցի հայրենասիրական ճառով, որը անմիջապես թարգմանվեց, ո՛չ ճառը, ո՛չ էլ հայրական հորդորը չազդեցին, մինչև Մածրա հասել էին 600 սվին:

Ապրիլի 9-ի առավոտյան թուրքերն անցան հարձակման: Թուրքերն ընդհանրապես ձգտում էին արագորեն գրավել, ավելի ճիշտ՝ տիրել Կարսին: Նրանց գլխավոր ջանքերն ուղղված էին մեր աջ թեւին: Հավանական է, որ նրանք ձգտում էին գրավել Հարամ-Վարդան ամրոցը: Երզնկայի ու Էրզրումի գնդերը զբաղեցրել էին շատ հարմար ու լավ դիրքեր, դրա համար էլ մինչև ցերեկվա մեկը թուրքերի բոլոր ջանքերը՝ գնդերը դիրքերից դուրս մղելու, հաջողությամբ չպսակվեցին, որից հետո թուրքական զորասյունները երկու գումարտակից ոչ պակաս կազմով, սկսեցին շրջանցել աջ թելը, 3 վերստ հեռու աջ թեւից եւ ռոզվել դեպի այդ գնդի թիկունք: Միայն այդ ժամանակ հարկ եղավ գնդերին դուրս գալու իրենց դիրքերից եւ նկատի ունենալով այն, որ թիկունքն արդեն գրավված էր թուրքերի կողմից, ապա ստիպված եղան թեքվելու 2-րդ հայկ. հրաձգ. գնդի կողմը, որն այդ ընթացքում նույնպես շարժվում էր Կարսի կողմը: Երեկոյան Երզնկայի 2-րդ եւ Էրզրումի գնդերը հետ քաշվեցին Կարսից 8-9 վերստ հեռու հայկական գյուղի մոտի բարձունքները, որտեղ էլ դիրքեր գրավեցին:

Թուրքերը ապրիլի 10-ին վաղ վերսկսեցին իրենց հարձակումը, էլ ավելի եռանդուն, կրկին ճնշելով մեր աջ թեւի վրա՝ Հարամ-Վարդանի կողմում:

Ապրիլի 10-ին էլ, ժամը 12-ին մոտ, մեր սենյակ եկան եւ խնդրեցին գեներալ Վիշինսկուն ուղիղ հեռախոսագծի մոտ՝ Կարսի հետ խոսելու համար: Դա բերդի պարետն էր խնդրել: Ես նրան ասացի, որ իր հետ ես էլ կգամ լսելու, թե ինչի մասին է խոսելու պարետը: Մտնելով հեռագրային սենյակ գեներալ Վիշինսկին մոտեցավ հեռախոսասարքին, իսկ ես նստեցի նրա մոտ, աթոռին: Կարճատեւ հաղորդումից հետո նա ինձ տեղեկացրեց, որ պարետն իրեն փոխանցում է, թե զինվորների մի քանի խմբեր անկանոն նահանջում են Հարամ-Վարդանից, ուղղվելով բերդ, ինչպես նաև փախստականների զանգված եւ դասալիքների խումբ՝ ձգտելով դարձյալ Կարս ընկնել: Հարցնում է ինչ անել: Այնժամ ես խնդրեցի Վիշինսկուն հաղորդել նրան, որ իմ կողմից դեռ ապրիլի 6-ին, գնացքում, մի քանի անձանց ներկայությամբ կտրուկ հրաման էր տրվել ոչ ոքի ռազմաճակատից Կարս չթողնել, որպեսզի բերդի մարտունակությունը չընկնի: Այդ հրամանը մնում է ուժի

մեջ: Եթե նրանց կանգնեցնելու այլ միջոցներ չկան, ապա թույլ եմ տալիս իրեն, նահանջող գործերի գլխի վրայով հրանդոններից մի քանի անգամ կրակել, իսկ եթե դա նրանց վրա չի ազդում, ապա նրանց վրա բաց թողնել մի քանի արկեր, միայն թե կանխվի նրանց հայտնվելը բերդում: Դրանից բացի նրանց մոտ ուղարկել մի քանի հանձնակատար այդ մասին զգուշացմամբ, եւ որ նրանք ուղղվեն բերդի շրջանի թեւերը: Երբ ես այդ կարգադրությունն արեցի, լիազոր Սարգիս Մանասյանը, որն ինձ հետ գտնվում էր սենյակում եւ կանգնած էր Թիֆլիսի գծի մոտ, սկսեց ինձ հաղորդել, որ հենց հիմա Թիֆլիսից, կառավարությունից, շատ կարեւոր հեռագիր են հաղորդում: Բերում եմ այդ հեռագրի բովանդակությունը, որը խրվել է հիշողությանս մեջ: Ընդհանուր իմաստը ճիշտ է. մանրամասնություններում միգուցե կան տարբերություններ. «Առաջարկում եմ, համապատասխան Անդրկովկասյան կառավարության կողմից Թուրքիայի հետ կնքված զինադադարի, հանձնել Կարսի բերդը, ամբողջ ռազմաճակատում դադարեցնելով ռազմական գործողությունները եւ բանազնաց ուղարկել Կարսի բերդի դատարկման ժամկետն ու պայմանները մշակելու համար: Ձեր գործերը պետք է հետ քաշվեն բերդի ամրոցներից, իսկ թուրքական զորքերը՝ կանգ առնեն երկու կիլոմետրի վրա, չհասած բերդի ամրոցներին: Կարսի մարզի շրջանը միձեռնա Ալեքսանդրապոլ պետք է մաքրվի 3-օրյա ժամկետում: Անդրկովկասյան կառավարության նախագահ Ա. Չխենկելի, ռազմական նախարարի փոխարեն Օղիշելիձե»:

Այդ հեռագիրն իր անսպասելիությամբ շշմեցրեց հեռագրական սենյակում գտնվող մեզ բոլորիս: Մենք ոչինչ չգիտեինք Ռուսաստանից Անդրկովկասի անջատման, ինչպես նաեւ Թուրքիայի հետ խաղաղ բանակցությունների արդյունքների մասին: Մեզ բացարձակապես չէին տեղեկացրել ո՛չ Ազգային հայոց խորհուրդը, ոչ էլ մեր զինվորական ղեկավարությունը: Մանասյանը նույնպես անտեղյակ էր գործերի ընթացքից:

Ըստ այդ հեռագրի շարժվելու համար չափազանց քիչ ժամանակ, մի քանի ժամ էր տրված միայն: Ինձ ամենից առաջ զարմացրել է, որ մարտական կարգադրություններ անում են չգիտես ինչու Չխենկելին եւ Օղիշելիձեն, եւ ոչ թե Գլխավոր հրամանատարը, ինչպես ենթադրվում էր, քանի որ մարտական առումով ես միայն նրան էի ենթարկվում: Ես խնդրեցի Վիշինսկուն Թիֆլիսի հետ ուղիղ գծի մոտ հրավիրել Գլխավոր հրամանատարին շատ կարեւոր գործով, իսկ եթե նրան չի կարելի, ապա գոնե սպայակույտի պետին: Նա այդ արեց, դուրս եկավ, որ Գլխավոր հրամանատարը Սեյմում է: Նրա փոխարեն հեռախոսագծին մոտեցավ գեներալ Լեվանդովսկին: Երբ Վիշինսկին հաղորդեց Չխենկելու եւ Օղիշելիձեի հեռագրի բովանդակությունը,

ապա նա պատասխանեց, որ իրենք սպայակույտում այդ մասին ոչինչ չգիտեն: Մանասյանը կամեցավ Ազգային հայոց խորհրդի հերթապահ անդամին կանչել, որը միշտ գտնվում էր ուղիղ հեռախոսագծի մոտ, բայց հակառակի պես՝ նրանցից նույնպես ոչ ոք չկար:

Ես մի քանի րոպե մնացի անվճռականության մեջ՝ կատարել հեռագրի կարգադրությունը, թե ոչ: Այդ ընթացքում էլ հրամանի կատարման ժամկետը փոքրանում էր: Ես որոշեցի խորհրդակցել Վիշինսկու եւ Մանասյանի հետ եւ մենք որոշեցինք՝ կատարել կարգադրությունը: Այդ որոշման համար դրդապատճառները հետեւյալն էին՝ պարետի զեկուցումը դաշտային գործերի գորամասերից որոշ խմբերի նահանջի մասին, դասալիքների նշանակալից թիվն ու փախստականների ահույի թիվը, բարոյական ոգին նշանակալիորեն ընկավ ինչ-որ երկու օրերի ընթացքում, եւ հատկապես հեռագրից հետո, որը ես խորապես համոզված եմ, ճակատում արդեն հայտնի էր դարձել. հետախուզության կողմից ճակատն ուժեղացնելու համար մեծաթիվ թուրքական զորքերի մոտենալու մասին ստացված տեղեկությունները, իսկ գլխավոր՝ Ազգային խորհրդի խոր լուրջությունը, որը կարծես թե հաստատում էր այդ որոշումը եւ մերժմամբ չէր փշացնում ընդհանուր գործը՝ մշակված Անդրկովկասյան կառավարության կողմից: Սիրտս ամբացնելով՝ որոշեցի կատարել այդ կարգադրությունը:

Հեռագրի պատճեն հաղորդեցի գեներալ Տեր-Հակոբյանին, որը այդ ժամանակ, սկսած ապրիլի 8-ից, գտնվում էր Պետրոպոլս գյուղում եւ պարետ, գեներալ Դեբեին՝ Կարս՝ կատարման համար: Հրամայեցի գեներալ Տեր-Հակոբյանին Մորելին ուղարկել Կարսի ճակատում թուրքական զորքերի ջոկատի պետի մոտ բանակցությունների եւ դադարեցնել ռազմական գործողությունները ամբողջ ռազմաճակատում: Նույնը պետք է անի նաեւ թուրքական հրամանատարությունը՝ համաձայն Վեհիբ փաշայի կարգադրության: Իմ հեռագրի մոտավոր բովանդակությունն [արդեն] ըստ լուրերի հայտնի էր Տեր-Հակոբյանին ու Դեբեին:

Ջեկուցեցի այդ մասին Գլխավոր հրամանատարին, իսկ կառավարությանը խնդրեցի թուրքերից ջանալ պոկել Արփա-Չայի աջ ափը, որտեղ կառուցված էր Ալեքսանդրապոլի բերդի ամրոցներից մեկը, քանի որ այդ ափն իշխում է այն ափի վրա, որտեղ ընկած է Ալեքսանդրապոլը, այլ կերպ բերդը ոչ մի ուժ չի ներկայացնի, ինչպես նաեւ երկարացնել Կարսի մարզի դատարկումը ի նկատի ունենալով փախստականների զգալի թիվը, որոնց պետք է պաշտպանել քրդերի գիշատչական հարձակումներից: Բայց ինձ թե մեկում եւ թե մյուսում մերժեցին: Ես այնժամ հրամայեցի պայթեցնել աջ ափին գտնվող բոլոր ամրությունները, իսկ փախստականների վերաբերյալ որոշե-

ցի, որ քանի դեռ բոլորը չեն տեղափոխված թիկունք՝ նրանց չթողնել: Խընդ-րեցի նաև բացատրել, թե արդյոք սխալ չի սպրդել, որ թուրքերին 2 կմ մոտ թողնվի ամրոցներին: Այդքան տարածությունից նրանց համար ոչինչ չարժեն ուժով տիրելու բերդին: Այդ վերջինին թուրքերը ձգտում են ետանդով: Պատասխան եղավ, որ մեր դաշտային զորքերը հետ քաշվելու ժամանակ պետք է կանգ առնեն 2 կմ-ի վրա, չհասած ամրոցներին: Չնայած հապճեպ բանազնաց ուղարկելուն, թուրքերի կողմից բանակցությունները դիտավորյալ ձգձգվեցին տարբեր պատճառաբանություններով, մեկ Վեհիբ Փաշայից ցուցումներ չստանալու, մեկ, որ նրանք պետք է հարցապնդում անեն նրան: Մեր պատվիրակությունն ստիպված եղավ մի քանի անգամ լինելու Բեզլի-Ահմեդում զինադադարի ու բերդի հանձնման պայմանները մշակելու համար: Բեզլի-Ահմեդում Կարսի թուրքական զորքերի խմբավորման ռազմականն էր...

Այդ բանակցությունների մանրամասնությունների ու Կարսի բերդի հանձնման մասին կարելի է դատել Գլխավոր հրամանատարի անունով բերդը թուրքերին հանձնելուց հետո գնդապետ Մորեյի եւ պարետի գրած զեկուցագրից: Այդ զեկուցագրից պարզորոշ կարելի է տեսնել այն ուխտադրությունները, որոնք նրանք դրսևորել էին պարետ, զեներալ Դեւեից բերդն ընդունելիս:

Ես կարծում եմ, որ բերդի հանձնման եւ մարզի պարպման վերաբերյալ բանակցությունների ժամանակ մշակումների ձգձգման պատճառներից մեկը Մերդենեկով ու Արդահանով թիկունքը շրջանցող զորասյունների ուղարկումն էր: Նրանք երեւի ենթադրում էին այդ շրջանցող զորասյուներով զորքերին առավել շատ վնաս հասցնել եւ բարոյապես քայքայել մեր զորքերի ուժերը:

ՀՀ ԿԴՊԱ, Ֆ. 45, ցուցակ 1, տետր 20, թերթեր 45-48. Չեազիր:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒՅՑՈՒՆՆԵՐ

1. 1917 թ. հունիսին Ռուսաստանի զորքերի Գերագույն Գլխավոր հրամանատարը հայկական ազգային զորամասեր դիմելու առաջարկով մտավ կառավարություն, որի վրա ռազմական նախարար Ա. Ֆ. Կերենսկին բանաձեւ դրեց. «Հայկական զումարտակների վերակազմավորումը գնդերի ու դրանցից դիվիզիաների ձեւավորումը համարել լիովին անհետաձգելի»: (ՌՍՀՄ. ԿԴՊ. ՊԱ, Ֆ. 2003, ցուցակ 2. տետր 338, թ. 75):

1917թ. նոյեմբերի 17-ին եղավ համապատասխան հրաման հայկական երկդիվիզիա-նոց կորպուսի կազմավորման մասին, որին հրամանատար նշանակվեց գեներալ-մայոր թ. Հ. Նազարբեկյանը:

Այդ օրվանից սկսվեց հայկական կորպուսի ինտենսիվ կազմավորումը, որպես կենտրոնի, որի շուրջ կարող էին խմբավորվել ժողովրդի բոլոր զինված ուժերը:

2. Բաքաջանյան Մ. Հ. - Հայ քաղաքական ու հանրային գործիչ, կադետ, Պետական Դումայի IV գումարման անդամ, Օզակոմի անդամ 1917թ.:

3. Լեբեդինսկի Ե. Ի. - ռուսական բանակի գեներալ-մայոր: 1914-1916թ. Կովկասյան ռազմաճակատի 66-րդ դիվիզիայի սպայակույտի պետ, 1918 թ. - Կովկասյան ռազմաճակատի Գլխորդանատար:

4. Առաջին աշխարհամարտի սկզբից հայ ժողովուրդը, ոգետրված դարավոր թը2-նամու դեմ պայքարով եւ հուսալով թուրքական լծից Արեւմտյան Հայաստանի փրկու-թյունը, կազմակերպեց կամավորական ջոկատներ, որոնք գործուն մասնակցություն ունեցան 1914-1916թթ. ռազմական գործողություններին: 1916թ. այդ ջոկատների հիմքի վրա կազմավորվեցին 6 հայկական հրաձգային զումարտակներ:

5. Հայոց Ազգային Խորհուրդը ստեղծվել է 1917թ. հոկտեմբերին Թիֆլիսում: Զբաղվում էր հայոց ազգային ազատագրական շարժման գործնական հարցերով: Աշ-Ջբաղվում էր հայոց ազգային ազատագրական շարժման գործնական հարցերով: Աշ-Նանը Խորհրդին կից ստեղծվել է հայկական ռազմական զորամասերի կազմավորմանն օժանդակող ռազմական մասնաճյուղ: 1918թ. մայիսին Խորհրդի գործողությունները (ֆունկցիաները) հանձնվել են Հայաստանի Հանրապետության կառավարությանը:

6. Արեշեյ Մ. Վ. -գեներալ-մայոր: 1920թ. աշնանը ՀՀ Դարաքիլիսայի շրջանի զոր-քերի ղեկավար:

7. Համազյան-գնդապետ, այնուհետեւ գեներալ-մայոր, ՀՀ ռազմական նախարարու-թյան հրետանային վարչության պետ:

8. Սիլիկյան Մ. Դ. (1862-1937)- ռուսական բանակի գեներալ, Վանի ջոկատի պետ 1916թ., հրաձգային դիվիզիայի պետ 1918թ., Սարդարապատի ճակատամարտի հերոսներից մեկը:

9. Դրո (Դրաստամատ Կանայան) (1883-1950թթ.) հայոց ազգային-ազատագրա-կան շարժման ակնառու ռազմական եւ քաղաքական գործիչ: 1914-1916թթ. -2-րդ կա-մավորական ջոկատի պետ, այնուհետեւ հայկական կորպուսի լիազոր, Բաշ-Ապարանի ճակատամարտի հերոսներից մեկը 1918թ., ՀՀ ռազմական նախարար:

10: Անդրկովկասյան Կոմիսարիատն ստեղծվել է 1917թ. նոյեմբերին, Անդրկովկասում պետական մարմին, փոխարինել է Անդրկովկասյան հատուկ կոմիտեին:

11. Անդրանիկ Օզանյան (1865-1922թթ.)- հայոց ազգային հերոս, հայոց ազգային ազատագրական շարժման ակնաավոր գործիչ, 1914-1916թթ. 1-ին հայկական կամավորական ջոկատի հրամանատար, 1917-1918թթ. հատուկ ջոկատի հրամանատար, գեներալ-մայոր:

12. Թուրքիան օգտվելով Անդրկովկասի անկայուն դրությունից որոշեց առանձին հաշտություն կնքել նրա հետ, առանց Ռուսաստանի մասնակցության, որպեսզի ժամանակ շահի ուժերի վերախմբավորման համար:

13. Կովկասյան բանակի հրամանատարն այդ ժամանակ գեներալ Օդիշելիձեն էր:

14. Միջազգետում Բրիտանական բանակի հրամանատար գեներալ Ալենքի:

15. Արիսիվի փաստաթղթերում կան բազմաթիվ վկայություններ ռազմաճակատի քայքայման եւ ռուսական զորքերի տարերայնորեն հեռանալու վերաբերյալ (Տես. ՀՀ ԿՊՊԱ, Ֆ.121, ցուցակ 2, տետրեր 31,38 եւ այլն):

16. 1917թ. Շամխորի կայարանում արդրեջանական հրոսակների կողմից զինաթափվեցին Կովկասից Ռուսաստան վերադարձող հազարավոր ռուս զինվորներ:

17. Փաստաթղթերում տեղեկություններ կան այն մասին, որ երբեմն ամբողջ վաշտեր, մեծամասնականների ազդեցության տակ, չէին կատարում հրամանատարների հրամանները, հրաժարվում էին գնալ հայկական զինվորական ստորաբաժանումներ եւ այլն. (Տես, ՀՀ. ԿՊՊԱ, Ֆ. 121, ցուցակ 1, տետր 31, ցուցակ 2, տետր 172):

18. 1916թ. հունիսին Ռուսաստանի կայսեր կողմից հաստատվել էր Թուրքիայի պատերազմի իրավունքով գրավված մարզերի կառավարման ժամանակավոր կանոնադրություն, գեներալ-նահանգապետի ղեկավարությամբ, որին 1917թ. փոխարինեց Թուրքական Հայաստանի Գլխավոր լիազորը (կոմիսարը):


19. Անդրկովկասյան Սեյմ-իշխանության մարմին Անդրկովկասում, ստեղծվել է 1918թ. փետրվարին: Ապրիլի 9-ին Սեյմը որոշում ընդունեց Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու մասին: Գոյություն է ունեցել մինչեւ 1918թ. մայիսը:

20. 1918թ. մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկում ստորագրվեց հաշտության պայմանագիր, որը զայրույթով ընդունվեց Անդրկովկասի հանրության կողմից: Կարախան Լ. Մ. (1889-1937)-ականավոր խորհրդային դիվանագետ, Բրեստ-Լիտովսկի բանակցությունների մասնակից:


21. Բազմաթիվ զորապետներ, սակայն, այլ կարծիքի էին. «Գեներալ Անդրանիկի ժամանումն էրզում բազմաթիվ պաշտպանների հույսով լցրեց, որ նրան կհաջողվի իր հանրահայտ անձի ազդեցության ուժով զորացնել զորքերի ոգին: Այդ հույսի համար հիմք էին ծառայում գեներալի անձնական որակները,... նրա հսկայական պատմական հանրաճանաչությունը բոլոր հայերի մեջ», վկայում է ռազմական պատմաբան գեներալ Ա. Պ. Կուլեբյակինը (ՀՀ ԿՊՊԱ, Ֆ. 121, ցուցակ 1, տետր 38, թերթ 50):

22. Մանասյան Ա.Ս. - դաշնակցական կուսակցության ականավոր գործիչ, Հայկական կորպուսի լիազոր, այնուհետեւ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի փոխնախարար եւ նախարար 1919թ.:

23. Սեբու (Սեպուհ, Արշակ Ներսեսյան, 1872-1940)- ականավոր ֆիդայի, 1-ին կամավորական ջոկատի վաշտի հրամանատար (1914-1916) 1918թ. թուրքական զավթիչներից Բաքվի պաշտպանության մասնակից:




ԿՈՎԿԱՍՍԱՆ ՌԱԶՄԱԾԱԿԱՍԸ 1918 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻՆ



ԱՎԵՏԻՍ ԱՀԱՐՈՆՅԱՆ


Հայոց Ազգային խորհրդի նախագահ



ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆ




ՄԻՔԱՅԵԼ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ



ՀԱԿՈՒ ԶԱՎՐՅԱՆ



ՍԵՐԱՍՏԱՅԻ ՄՈՒՐԱԴ



ՍԵՊՈՒՀ



ԴԱԼԻ ՂԱԶԱՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան	5
Ներածություն	7
Տեսր 1-ին.	12
Տեսր 2-րդ	
Վեհիբ փաշայի հարձակման անցնելու մասին	28
Թուրքերի կողմից Երզնկայի գրավումը և	
մեր զորքերի նահանջը դեպի Էրզրում	38
Էրզրումի անկման մասին	56
Տեսր 3-րդ	
Սարիղամիշի շուրջ	70
Երեւանյան ջոկատը	72
Սարիղամիշի ռազմաճակատը.	76
Նահանջը Սարիղամիշից	90
Կարսի ռազմաճակատը	98
Կարսի հանձնումը	103
Ծանոթագրություններ	111

ԹՈՎՄԱ ՎՈՎԶԱՆՆԵՄԻ ՆԱԶԱՐԲԵԿՑԱՆ

**ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՐՊՈՒՄՆ
ԸՆԴԴԵՄ ԹՈՒՐԲԱԿԱՆ ԶՈՐԲԵՐԻ**

*Խճբագիր՝ Հ. Գրիգորյան
Սրբագրիչ՝ Կ. Հարությունյան
Նկարիչ՝ Ա. Բաղդասարյան
Էջադրող՝ Ի. Գալստյան
Հրատ. լուսանկարիչ՝ Ս. Կիրակոսյան
Լուսանկարները պատրաստեց Հ. Բերբերյանը:*

*Ստորագրված է տպագրության 30. 11. 94թ.,
Չափսը՝ 60x84 1/16, Տպագրությունը՝ օֆսեթ,
Տպագրական 7,5 ճամուր Պատվեր՝ 438,
Տպաքանակ՝ 3000 օրինակ:*

*«Մ. Վարանդեան» հրատարակչական տպագրական
հայ-կանադական համատեղ ՍՊ ընկերություն*
**"Mikayel Varandian" Publishing House, Yerevan, Shopron str.,
N 21, Armenia**